

Հավելված  
ՀՀ կառավարության 2016 թվականի  
նոյեմբերի 24-ի N 1192 - Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**



**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**

**ԵՐԵՎԱՆԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՕՂԱԿԱԶԵՎ ՃԱՆԱՊԱՐԶԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ  
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԲՖԳ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻ, ՏՐԱՆՇ 2**



**ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ  
Տիչինա-Աշտարակ մայրուղի**

Խորհրդատու



Ֆինանսավորող  
գործակալություն



Ասիական զարգացման  
բանկ

Իրականացնող մարմին



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԵԱ	Ազդեցության ենթակա անձ
ԱԵԸ	Ազդեցության ենթակա ընտանիք
ԱԵՏՏ	Ազդեցության ենթակա տնային տնտեսություն
ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱՄԳ	Արտաքին մոնիթորինգի գործակալություն
ԱՄՆ դոլար	Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլար
ԱՆՍՌԱ	Աղքատության նվազեցման և սոցիալական ռազմավարության ամփոփագիր
ԱՍՀՆԳ	Աղքատության և սոցիալական հարցերի նախնական գնահատում
ԱՔՀ	Անվտանգության քաղաքականության հայտարարագիր
ԲԴԽ	Բողոքների դիտարկման խումբ
ԲԼՄ	Բողոքների լուծման մեխանիզմ
ԲՖԳ	Բազմափուլային ֆինանսավորման գործիք
ԳՄ	Գործադիր մարմին
ԵՔ	Երևանի քաղաքապետարան
ԻԳ	Իրականացնող մարմին
ԾԻԳ	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ԾԿԽ	Ծրագրի կառավարման խորհուրդ
ԾՆՏԱ	Ծրագրի նախապատրաստման տեխնիկական աջակցության
ԲԳՀՀՈ	Բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշում
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ դրամ	Հայաստանի Հանրապետության դրամ
ՀՕՏ	Հողի օտարում և տարաբնակեցում
ՀՕՏԾ	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր
ՀՕՏԾ	ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 7-ի «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի՝ հողի օտարման և տարաբնակեցման շրջանակը և փոխհատուցման առանձին տեսակների հաշվարկման կարգը հաստատելու մասին» թիվ 273-Ն որոշմամբ հաստատված «Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակ»-ը
ՄՆԾՎԽ	Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկողության խորհրդատու
ՄՉՀ	Մանրամասն չափագրման հետազոտություն
ՊՇ	Պարտավորությունների շրջանակը
ՍՏՀ	Սոցիալ-տնտեսական հետազոտություն
ՕՇՄՊ	Օրինականացման և շտկող միջոցառումների պլան

## ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

**Ազդեցության ենթակա անձ/անձինք (ԱԵԱ)**՝ Բոլոր անձինք, ովքեր Ծրագրի իրականացման արդյունքում ազդեցության են ենթարկվում հողամասի օտարման, վերաբնակեցման կամ եկամտի կորստի հետևանքով՝ ներառյալ ցանկացած անձ, տնային տնտեսություն (երբեմն կոչվում են Ծրագրի ազդեցությանը ենթակա ընտանիք), ընկերություն կամ հասարակական կամ մասնավոր հաստատություն: Հետևաբար, ԱԵԱ-ների թվին են պատկանում՝ 1) մարդիկ, ովքեր ուղղակիորեն ենթակա են ճանապարհային միջանցքի, օտարման գոտիների, աշտարակի կամ սյունների հիմքերի կամ շինարարական աշխատանքների ազդեցությանը, 2) մարդիկ, որոնց գյուղատնտեսական հողը կամ այլ արտադրական սեփականությունները, ինչպես օրինակ՝ ծառերն են կամ մշակաբույսերը, ենթարկվում են շինարարական աշխատանքների ազդեցությանը, 3) մարդիկ, որոնց ձեռնարկատիրական գործունեությունն է ենթարկվում ազդեցության, և ովքեր Ծրագրի ազդեցության հետևանքով կարող են ունենալ եկամտի կորուստ, 4) մարդիկ, ովքեր աշխատանք են կորցնում Ծրագրի իրականացման հետևանքով, 5) մարդիկ, ովքեր Ծրագրի հետևանքով գրկվում են համայնքային ռեսուրսներից/գույքից: Թեև ազդեցության ենթարկված անձի մասին այս սահմանումը տարբերվում է ԱՔՀ-2009-ում տրված սահմանումից, սակայն Հայաստանի Հանրապետությունում այդպես է այն ընկալվում և պաշտոնապես օգտագործվում և չի տարբերվում ԱՔՀ-2009-ի՝ «տեղահանված անձի» սահմանումից:

**Ազդեցության ենթակա տնային տնտեսություն (ԱԵՏՏ)**՝ Մեկ տանիքի տակ բնակվող բոլոր անդամները, որոնք գործում են որպես մեկ տնտեսական միավոր: Ազդեցության ենթարկված տնային տնտեսությունը կարող է բաղկացած լինել մեկ հիմնական ընտանիքից կամ ընդլայնված ընտանիքային խմբից: Սա փոխհատուցում/վերականգնում ստացող կարևորագույն միավոր է

**Փոխհատուցում**՝ Օտարված կամ Ծրագրի ազդեցությանը ենթակա գույքերի փոխարինման արժեքի (դրամական) վճարում՝ ընթացիկ շուկայական արժեքի և Իրավունքների սխեմայի համաձայն հատկացվող նպաստների հիման վրա:

**Կասեցման օր**՝ Այն օրը, երբ տվյալ հատվածի համար ազդեցության ենթակա գույքերի նկարագրության արձանագրության կազմման (ԱԵԱ-ների և Օտարողի կողմից արձանագրության ստորագրումը) միջոցով ամփոփվում է մարդահամարի, ազդեցության ենթակա գույքերի տեղագնման և սոցիալ-տնտեսական հետազոտության արդյունքները: Կասեցման օրից հետո կատարված բարելավումները ենթակա չեն փոխհատուցման:

**Իրավունքներ**՝ Դրամական փոխհատուցում, եկամտի վերականգնում, վերաբնակեցման աջակցություն, եկամտի փոխարինում և վերաբնակեցում ներառող այն համաձայնեցված միջոցառումների ամբողջությունը, որոնք պետք է տրամադրվեն ազդեցության ենթարկված անձանց՝ կախված նրանց կորուստների բնույթից՝ նրանց տնտեսական և սոցիալական հիմքերը վերականգնելու համար:

**Բարելավումներ**՝ Անձի, տնտեսության, հաստատության կամ կազմակերպության կողմից կառուցված շինություններ (բնակարան, ցանկապատ, , գոմ, հաղորդողիներ, համայնքային հարմարանքներ, խանութներ, պահեստներ, ասֆալտապատ մակերևույթներ և այլն) և ցանված մշակաբույսեր:

**Հողի օտարում**՝ Միջոցառումների շրջանակ, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ՝ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում սեփականության օտարման, օտարվող սեփականության դիմաց համարժեք փոխհատուցման տրման գործընթացներն իրականացնելու նպատակով:

**Վարձակալություն**՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված քաղաքացիա-իրավական ինստիտուտ, որի շրջանակներում կնքվող վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք:

**Վարձակալ**՝ Այն ԱԵԱ-ն, ում ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնվել է գույքը:

**Գույքի հանդեպ օրինական կարգավիճակի ստացում (օրինականացում)**՝ Այն ԱԵԱ-ները, որոնք իրավասու են գույքի հանդեպ օրինական իրավունքներ ստանալու (սեփականության կամ այլ տեսակի գույքային իրավունքներ) պետք է ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան գործընթաց իրականացնեն՝ Երևանի քաղաքապետարանի և /կամ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ համատեղ:

**Մարզ-Համայնք**՝ Հայաստանի Հանրապետությունը բաժանված է 10 մարզերի: Մարզերից յուրաքանչյուրը ղեկավարվում է մարզպետի կողմից, որը նշանակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: Յուրաքանչյուր մարզ բաղկացած է համայնքներից, որոնք ինքնակառավարվող են և բաղկացած են մեկ կամ ավելի բնակավայրերից: Բնակավայրերը դասակարգվում են որպես քաղաք կամ որպես գյուղ: Երևանը, որը նախկինում մարզի կարգավիճակ ուներ, ներկայումս ունի համայնքի կարգավիճակ և ղեկավարվում է ընտրովի քաղաքապետի կողմից:

**Օրենսդրության պահանջների պահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման ոչ ենթակա անշարժ գույք**՝ պետության կողմից հատուկ պահպանվող տարածքները (այն տարածքները, որոնք Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի Հոդային օրենսգրքով սահմանված կարգով պաշտոնապես պահված են որոշակի հասարակական օգտագործման նկատառումներով, ինչպես օրինակ՝ ռազմական տարածքները, հիվանդանոցների, դպրոցների տարածքները կամ բնակավայրերի համար ոչ պիտանի տարածքները՝ գետի հուները, ռադիոակտիվ տարածքները կամ այլ վտանգավոր կամ էկոլոգիապես անպիտան հողերը): Տե՛ս Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի Հոդային օրենսգրքը, հոդված 60: **Վերականգնում**՝ Ոչ կամավոր տարաբնակեցման քաղաքականության շրջանակներում տրամադրված փոխհատուցում, որը չի ենթադրում օտարված գույքի փոխարինման արժեքի վճարում:

**Վերաբնակեցում**՝ ԱԵԱ-ի/ԱԵՏՏ-ի ֆիզիկական տեղահանումն այն վայրից, որը հանդիսանում էր նրա բնակավայրը նախքան Ծրագրի իրականացումը:

**Փոխարինման արժեք**՝ Այն արժեքը, որը գնահատվում է որպես հողի համար արդարացի փոխհատուցում՝ հիմնվելով դրա բերքատվության պոտենցիալի, շենքերի և շինությունների փոխարինման արժեքի (շինանյութերի և աշխատուժի տվյալ պահի շուկայական իրական գինը առանց ամորտիզացիոն մասհանումների կամ վերաօգտագործված շինանյութի համար մասհանումների), ինչպես նաև բնակելի տարածքների, բերքի, ծառերի և այլ ունեցվածքի շուկայական արժեքի վրա:

**Տարաբնակեցում**՝ Բոլոր այն միջոցառումները, որոնք նախատեսված են ԱԵԱ-ների սեփականության և (կամ) ապրուստի վրա Ծրագրի թողած բացասական որևէ ազդեցությունը մեղմացնելու համար, ներառյալ՝ փոխհատուցումը, վերաբնակեցումը, եթե այն անհրաժեշտ է, և վնասված/քանդված ենթակառուցվածքների ու սարքավորումների վերականգնումը:

**Զգալի ազդեցություն**՝ Զգալի ազդեցությունն այն է, երբ 200 կամ ավելի մարդիկ ենթարկվում են խոշոր ազդեցությունների, որոնք ներառում են՝ 1) ֆիզիկական տեղահանումը կամ 2) արտադրական (եկամտաբեր) գույքի տասը կամ տասից ավել տոկոսի կորուստը:

***Մոցիայապես խոցելի տնային տնտեսություններ***՝ Դրանք այն տնտեսություններն են, որոնք՝ 1) հաշվառված են Խոցելի ընտանիքների գնահատման համակարգում (ԽԸԳՀ) և ստանում են ընտանեկան նպաստ, 2) որոնք ղեկավարվում են միայնակ կանանց կողմից, որտեղ կայուն եկամուտ ունեցող (առնվազն նվազագույն ամսական աշխատավարձի չափով) այլ չափահաս, աշխատունակ տարիքի անձ չկա՝ բացառությամբ զինծառայություն անցնող կամ քսաներեք տարին չըրացած ցերեկային ուսուցմամբ սովորողները, 3) որոնք ղեկավարվում են կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց կողմից, որտեղ կայուն եկամուտ ունեցող (առնվազն նվազագույն ամսական աշխատավարձի չափով) չափահաս, աշխատունակ տարիքի անձ չկա՝ բացառությամբ զինծառայություն անցնող կամ քսաներեք տարին չըրացած ցերեկային ուսուցմամբ սովորողները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ ..... 10

1 ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ..... 23

1.1 Ծրագրի պատմությունը..... 23

1.2 Ծրագրի տեղակայվածությունը ..... 24

1.3 Ծրագրի նկարագրությունը..... 24

1.4 Ենթաձրագրի 2. Տիչինա-Աշտարակ ճանապարհային հանգույց ..... 27

1.4.1 Տեղակայվածություն և նկարագրություն ..... 27

1.4.2 Ենթաձրագրի իրականացման ժամանակացույցը ..... 27

1.5 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի շրջանակն ու կարգավիճակը ..... 29

1.6 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի նպատակը ..... 29

1.7 Հողի օտարում և տարաբնակեցում. Ծրագրի իրականացմանն առնչվող պայմանները ... 30

1.8 Փաստաթղթի հրապարակումը ..... 30

1.9 Ծրագրի կասեցման օրը ..... 30

2 ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ ..... 31

2.1 Ընդհանուր տեղեկություններ..... 31

2.2 Հետազոտության մեթոդաբանությունը և ազդեցության գնահատման մոտեցումները ..... 32

2.2.1 Հետազոտության մեթոդաբանությունը..... 32

2.2.2 Ազդեցության գնահատման մոտեցումներ ..... 33

2.3 Ազդեցությունը հողի վրա..... 35

2.3.1 Հողի դասակարգումն՝ ըստ Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի Հողային օրենսգրքի..... 35

2.3.2 Հողի կորուստ..... 35

2.4 Ազդեցությունը շենքերի և շինությունների վրա..... 39

2.4.1 Բնակելի շենքեր և շինություններ ..... 39

2.4.2 Ոչ բնակելի շենքեր և շինություններ..... 40

2.4.3 Ապամոնտաժման ենթակա շինություններ..... 43

2.4.4 Ցանկապատեր և այլ բարելավումներ ..... 43

2.4.5 Շինությունների վրա ազդեցությունները և վերաբնակեցման ռազմավարությունը ..... 45

2.5 Մշակաբույսեր ..... 50

2.6 Ծառեր ..... 51

2.7 Ազդեցությունը ձեռնարկատիրական գործունեության և եկամտի վրա..... 55

2.8 Ազդեցությունը զբաղվածության վրա..... 56

2.9 Զգալի ազդեցության ենթակա տնային տնտեսություններ..... 57

2.10 Ազդեցությունն աղբատների և խոցելի խմբերի վրա..... 57

2.11 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների և ազդեցության ենթակա անձանց տվյալների ամփոփում..... 58

3 ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐ ..... 62

3.1 Ընդհանուր տեղեկություններ..... 62

3.2 Հետազոտության մեթոդաբանությունը ..... 62

3.3 Ազդեցության ենթակա անձանց և տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական նկարագիրը..... 63

3.3.1 ԱԵԱ-ների սեռն ու էթնիկ ծագումը..... 63

3.3.2 Ընտանիքի կազմը և սոցիալ-տնտեսական դասակարգումը ..... 64

3.3.3 Տարիքը ..... 64

3.3.4 Կրթությունը ..... 65

3.3.5 Զբաղվածությունը և եկամտի աղբյուրները ..... 65

3.3.6 Եկամուտներ և ծախսեր..... 67

3.3.7	Աղքատ և ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններ.....	68
3.3.8	Կենսապայմանների վերաբերյալ ընկալումները.....	68
3.3.9	Ծրագրի մասին ընկալումը.....	69
<b>4</b>	<b>ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ.....</b>	<b>71</b>
4.1	Ընդհանուր տեղեկություններ.....	71
4.2	Հանրային լսումներ.....	71
4.3	Տեղեկատվության հրապարակումը.....	73
<b>5</b>	<b>ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾԱՆ ՄԵՆԱՆԻՉՄ.....</b>	<b>75</b>
5.1	Հիմնական տեղեկություններ.....	75
5.2	Բողոքների քննարկման և կարգավորման ընթացակարգ.....	75
5.3	Տեղեկատվական և բողոքների կարգավորման ծառայություններից օգտվելու հնարավորություն.....	78
<b>6</b>	<b>ՀՀ ՕՐԵՆՍՊԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԲ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....</b>	<b>80</b>
6.1	ՀՀ օրենսդրության և ԱԶԲ քաղաքականության նկարագրությունը.....	80
6.1.1	Հողի օտարման և տարաբնակեցման վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը.....	80
6.1.2	Անվտանգության քաղաքականության հայտարարագրի շրջանակներում հարկադիր տարաբնակեցման վերաբերյալ ԱԶԲ դրույթները.....	81
6.1.3	Հողի օտարման և տարաբնակեցման վերաբերյալ ՀՀ օրենսդրության և ԱԶԲ Տարաբնակեցման քաղաքականության համեմատությունը.....	82
6.1.4	Սույն Բազմափուլ ֆինանսավորման գործիքի (ԲՖԳ) համար ընդունված Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի սկզբունքները և իրավասությունները.....	84
6.2	Փոխհատուցում ստանալու իրավունքը.....	84
6.3	Փոխհատուցում ստանալու իրավունքները.....	85
6.4	Փոխհատուցման միավորի արժեքի գնահատում.....	90
6.5	Հարկադիր օտարման պայմանները.....	91
6.6	Օրենսդրության պահանջների պահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման պայմանները և մեխանիզմը.....	91
<b>7</b>	<b>ՓՈՆԻՀՍՏՈՒՑՈՒՄ, ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄ ԵՎ ԵԿԱՍՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ.....</b>	<b>93</b>
7.1	Ընդհանուր տեղեկություններ.....	93
7.2	Ազդեցության ենթակա գյուղատնտեսական եկամուտ.....	93
7.3	Ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեությունները.....	94
7.4	Զբաղվածության կորուստ.....	97
<b>8</b>	<b>ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԲՅՈՒՉԵՆ.....</b>	<b>98</b>
8.1	Ընդհանուր տեղեկություններ.....	98
8.2	Ֆինանսավորման աղբյուրները և բաշխումը.....	98
8.3	Օտարվող հողի դիմաց փոխհատուցումը.....	99
8.3.1	Գնահատման մեթոդաբանությունը.....	99
8.3.2	Փոխհատուցումը հողի` ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով սեփականատերերին.....	99
8.3.3	Փոխհատուցում հողի վարձակալներին.....	100
8.3.4	Վերականգնման նպաստ` ՀՀ պահանջների չպահպանմամբ` անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողի համար.....	100
8.4	Փոխհատուցում շենքերի, շինությունների և բարելավումների համար.....	101
8.4.1	Գնահատման մեթոդաբանությունը.....	101
8.4.2	Բնակելի տներ.....	102
8.4.3	Ոչ բնակելի շենքեր.....	103
8.4.4	Ցանկապատեր և բարելավումներ.....	106
8.5	Մշակաբույսերի և ծառերի փոխհատուցումը.....	108
8.5.1	Մշակաբույսեր.....	108
8.5.2	Սրգատու ծառեր.....	109

8.5.3	Փայտանյութ տվող ծառեր .....	113
8.5.4	Դեկորատիվ ծառեր և թփեր .....	115
<b>8.6</b>	<b>Փոխհաստուցում ձեռնարկատիրական գործունեության և եկամտի կորստի դիմաց .....</b>	<b>118</b>
8.6.1	Ձեռնարկատիրական գործունեության կորուստներ .....	118
8.6.2	Եկամտի կորուստներ .....	120
<b>8.7</b>	<b>Վերականգնման նպաստներ.....</b>	<b>120</b>
8.7.1	Զգալի ազդեցության նպաստ .....	120
8.7.2	Նպաստներ խոցելի խմբերի համար.....	122
8.7.3	Վերաբնակեցման նպաստ .....	122
<b>8.8</b>	<b>Գրանցման ծախսերը և կիրառվող հարկերը.....</b>	<b>123</b>
<b>8.9</b>	<b>Բյուջեի (ծախսերի) ամփոփում .....</b>	<b>126</b>
<b>9</b>	<b>ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ .....</b>	<b>128</b>
<b>9.1</b>	<b>Ընդհանուր տեղեկություններ.....</b>	<b>128</b>
<b>9.2</b>	<b>Հիմնական գործակալությունները և կազմակերպությունները .....</b>	<b>128</b>
9.2.1	Ասիական զարգացման բանկ .....	128
9.2.2	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն .....	128
9.2.3	Երևանի քաղաքապետարանը և ծրագրի իրականացման գրասենյակը .....	128
9.2.4	Խորհրդատուներ .....	129
<b>9.3</b>	<b>Այլ գործակալություններ և հաստատություններ .....</b>	<b>130</b>
<b>9.4</b>	<b>ՀՕՏԾ իրականացման կարողությունները .....</b>	<b>130</b>
<b>10</b>	<b>ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ..</b>	<b>131</b>
<b>10.1</b>	<b>Ընդհանուր տեղեկություններ.....</b>	<b>131</b>
<b>10.2</b>	<b>Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի պատրաստման գործողությունները .....</b>	<b>131</b>
<b>10.3</b>	<b>Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման փուլերը.....</b>	<b>133</b>
<b>10.4</b>	<b>Օրինականացման և շտկող միջոցառումների պլան .....</b>	<b>135</b>
10.4.1	ԱԵԱ-ների՝ օրինական կարգավիճակ ստանալուն վերաբերող դեպքեր .....	135
10.4.2	Կադաստրային ուղղումների հետ կապված դեպքեր .....	137
10.4.3	Ազդեցությունները շինարարության փուլում.....	139
<b>10.5</b>	<b>Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման ժամանակացույցը .....</b>	<b>139</b>
<b>11</b>	<b>ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....</b>	<b>143</b>
<b>11.1</b>	<b>Ընդհանուր տեղեկություններ.....</b>	<b>143</b>
<b>11.2</b>	<b>Ներքին մոնիթորինգ.....</b>	<b>143</b>
<b>11.3</b>	<b>Արտաքին մոնիթորինգ .....</b>	<b>144</b>
11.3.1	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման կարճաժամկետ մոնիթորինգ և գնահատում.....	144
11.3.2	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի վերականգնողական միջոցառումների արդյունքների երկարաժամկետ գնահատում .....	145

## ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Աղյուսակ Ե.1 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունները/անձինք՝ ըստ ազդեցության տեսակի.....	13
Աղյուսակ Ե.2 Ծրագրի համար մշակված իրավունքների սխեման.....	16
Աղյուսակ Ե.3 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման ժամանակացույց .....	20
Նկար 1-1 Հայաստանի Հանրապետության և Երևանի տեղակայվածությունը.....	24
Նկար 1-2 Ծրագրի տեղակայվածության քարտեզ .....	26
Նկար 1-3 Տիչինա-Աշտարակ ճանապարհային հանգույց .....	28
Աղյուսակ 2-1 Հողի կրած ազդեցությունը՝ ըստ հողի տեսակի և սեփականության/հողի զբաղեցման կարգավիճակի.....	37



Աղյուսակ 2-2 Ազդեցությունը բնակելի շենքերի և շինությունների վրա .....	39
Աղյուսակ 2-3 Ազդեցությունը ոչ բնակելի շենքերի և շինությունների վրա .....	41
Աղյուսակ 2-4 Ազդեցությունը ցանկապատերի և պատերի վրա.....	43
Աղյուսակ 2-5 Ազդեցությունը բարելավումների վրա.....	44
Աղյուսակ 2-6 Ազդեցությունը վերաբնակեցման վրա.....	45
Աղյուսակ 2-7 Մանրամասնորեն ներկայացված ազդեցությունները բնակավայրերից վերաբնակեցման վրա .....	47
Աղյուսակ 2-8 Ազդեցությունը մշակաբույսերի վրա .....	50
Աղյուսակ 2-9 Ազդեցությունը մրգատու ծառերի վրա .....	52
Աղյուսակ 2-10 Ազդեցությունը փայտանյութ տվող ծառերի վրա .....	54
Աղյուսակ 2-11 Ազդեցությունը դեկորատիվ ծառերի և թփերի վրա.....	55
Աղյուսակ 2-12 Մշտական ազդեցություն ձեռնարկատիրական գործունեության վրա .....	56
Աղյուսակ 2-13 Ազդեցությունը զբաղվածության վրա .....	57
Աղյուսակ 2-14 Ազդեցության աստիճանը .....	57
Աղյուսակ 2-15 Ազդեցությունն աղբատ և խոցելի ազդեցության ենթակա տնային տնտեսությունների վրա* .....	58
Աղյուսակ 2-16 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունները/անձինք՝ ըստ ազդեցության տեսակի.....	59
Աղյուսակ 3-1 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների ղեկավարների և անդամների սեռը.....	63
Աղյուսակ 3-2 Ազդեցության ենթակա անձանց սեռը .....	63
Աղյուսակ 3-3 Ազդեցության ենթակա անձանց ազգային պատկանելությունը .....	63
Աղյուսակ 3-4 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների ղեկավարների և անդամների ամուսնական կարգավիճակը.....	64
Աղյուսակ 3-5 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների ղեկավարների և անդամների տարիքային բաշխումը.....	64
Աղյուսակ 3-6 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների ղեկավարների և անդամների կրթությունը.....	65
Աղյուսակ 3-7 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների ղեկավարների և անդամների զբաղվածության կարգավիճակը.....	66
Աղյուսակ 3-8 Զբաղվածության տեսակը .....	66
Աղյուսակ 3-9 Ազդեցության ենթակա տնային տնտեսության եկամուտների աղբյուրները .....	67
Աղյուսակ 3-10 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների միջին ամսական ծախսերը .....	67
Աղյուսակ 3-11 Բնակարանային պայմանները .....	68
Աղյուսակ 3-12 Թաղամասի վերաբերյալ ԱԵՏՏ-ների ընկալումները .....	69
Աղյուսակ 3-13 Ծրագրի ընկալումը ազդեցության ենթակա տնային տնտեսությունների կողմից ....	69
Աղյուսակ 4-1 Հարցեր և պատասխաններ .....	72
Նկար 5-1 Բողոքների կարգավորման գործընթացի գծապատկեր .....	78
Աղյուսակ 6-1 Հողի օտարման և տարաբնակեցման ՀՀ օրենսդրության և ԱԶԲ Տարաբնակեցման քաղաքականության համեմատություն.....	82
Աղյուսակ 6-2 Ծրագրի համար մշակված իրավունքների սխեման .....	85
Աղյուսակ 7-1 Փոխհատուցում և օժանդակություն եկամուտը կորցնող ազդեցության ենթակա անձանց համար .....	94
Աղյուսակ 7-2 Գործունեության վայրը տեղափոխող ձեռնարկատիրական գործունեության վրա ազդեցության մանրամասները .....	95
Աղյուսակ 7-3 Փոխհատուցում և օժանդակություն ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեության համար.....	97
Աղյուսակ 8-1 Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողի դիմաց.....	99
փոխհատուցումը/վերականգնման նպաստները.....	99
Աղյուսակ 8-2 Փոխհատուցում մասնավոր և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի համար.....	100
Աղյուսակ 8-3 Վերականգնման նպաստ՝ ՀՀ պահանջների չպահպանմամբ՝ .....	101

անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողի համար.....	101
Աղյուսակ 8-4 Փոխհատուցում բնակելի և ոչ բնակելի շինությունների համար.....	101
Աղյուսակ 8-5 Փոխհատուցում բնակելի շենքերի համար.....	102
Աղյուսակ 8-6 Փոխհատուցում ոչ բնակելի շինությունների համար.....	104
Աղյուսակ 8-7 Փոխհատուցում վերանորոգման ծախսերի համար.....	105
Աղյուսակ 8-8 Փոխհատուցում բարելավումների համար.....	106
Աղյուսակ 8-9 Փոխհատուցում ցանկապատերի համար.....	107
Աղյուսակ 8-10 Փոխհատուցում մշակաբույսերի համար.....	108
Աղյուսակ 8-11 Փոխհատուցում նորատունկ ծառերի համար.....	109
Աղյուսակ 8-12 Փոխհատուցում դեռևս ոչ բերքատու ծառերի համար.....	110
Աղյուսակ 8-13 Փոխհատուցում մրգատու ծառերի համար.....	111
Աղյուսակ 8-14 Փոխհատուցում փայտանյութ տվող ծառերի համար.....	114
Աղյուսակ 8-15 Փոխհատուցում դեկորատիվ ծառերի և թփերի համար.....	116
Աղյուսակ 8-16 Փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության կորստի դիմաց.....	119
Աղյուսակ 8-17 Փոխհատուցում զբաղվածության կորստի համար.....	120
Աղյուսակ 8-18 Նպաստներ զգալի ազդեցության ենթակա տնային տնտեսությունների համար.....	121
Աղյուսակ 8-19 Նպաստներ սոցիալապես խոցելի անձանց համար.....	122
Աղյուսակ 8-20 Շարժական/ապամոնտաժման ենթակա գույքի տեղափոխման/տրանսպորտային ծախսերը.....	123
Աղյուսակ 8-21 Կենսապահովման ծախսեր վերաբնակեցվող ԱԵՏՏ-ների համար.....	123
Աղյուսակ 8-22 Սեփականության գրանցման վճարները.....	124
Աղյուսակ 8-23 Ավելացված արժեքի հարկ ազդեցության ենթակա գույքերի համար.....	125
Աղյուսակ 8-24 Ամփոփ բյուջեն.....	126
Աղյուսակ 8-25 Ամփոփ բյուջեն՝ ըստ ֆինանսավորման յուրաքանչյուր աղբյուրի.....	127
Նկար 9-1 Հողի օտարման և տարաբնակեցման կազմակերպչական կառուցվածքը և գործողությունները.....	129
Աղյուսակ 10-1 Գույքերի նկարագրության արձանագրությունները չստորագրելու պատճառները.....	133
Աղյուսակ 10-2 Օրինական կարգավիճակ ստանալու և կադաստրային ուղղումների դեպքերի ցանկը.....	137
Աղյուսակ 10-3 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի պատրաստման, վերջնականացման և իրականացման ժամանակացույց.....	139

**ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ**

Նկար 1-1 Հայաստանի Հանրապետության և Երևանի տեղակայվածությունը.....	24
Նկար 1-2 Ծրագրի տեղակայվածության քարտեզ.....	26
Նկար 1-3 Դավթաշեն-Աշտարակ ճանապարհային հանգույց.....	28
Նկար 5-1 Բողոքների կարգավորման գործընթացի գծապատկեր.....	78
Նկար 9-1 Հողի օտարման և տարաբնակեցման կազմակերպչական կառուցվածքը և գործողությունները.....	129

**ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ**

- Հավելված 1 ՀՕՏՕ Ծրագրի տեղեկագիր
- Հավելված 2 ՄՉՀ, մարդահամար, ՄՏՀ և գնահատման մեթոդաբանություն
- Հավելված 3 Հարցաշար աշխատողների համար
- Հավելված 4 Հարցաշար փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեությունների համար

- Հավելված 5 Հարցաշար մարդահամարի և սոցիալ-տնտեսական հետազոտության համար
- Հավելված 6 Հանրային լսման արձանագրությունը (հատվածներ 7 և 8)
- Հավելված 7 Արտաքին մոնիթորինգի գործակալություն ՊՇ
- Հավելված 8 Նկարագրության արձանագրության ձևաչափը
- Հավելված 9 Հանրային լսումների տեղեկագիր (ՀՕՏՕ փուլեր)
- Հավելված 10 ՀՕՏՕ-ում ներառված ազդեցության ենթակա գույքի ցանկը՝ անուղղակի ազդեցության ենթարկվող մասերով
- Հավելված 11 ԱԵԱ-ների ցուցակը՝ համապատասխան կորուստներով
- Հավելված 12 Նախնական ուսումնասիրություն իրականացնելու մասին հանրային լսումների արձանագրությունը
- Հավելված 13 Նախնական ուսումնասիրություն իրականացնելու մասին հանրային լսումների հանդիպումների արձանագրություններ (Հատվածներ 6 և 7)
- Հավելված 14 Հանրային լսման ընթացքում ԱԵԱ-ներին տրամադրված Ծրագրի տեղեկագրերը

# ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

## 1. Ծրագրի պատմությունը

- 1) Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակում Ծրագիր 2-ը (Ծրագիրը), որը ֆինանսավորվում է ԱԶԲ-ի Բազմափուլային ֆինանսական գործիքի (ԲՖԳ) միջոցով, իրականացվում է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (ՏՁՆՆ) կողմից, որը հանդես է գալիս որպես Գործադիր մարմին (ԳՄ), և Երևանի քաղաքապետարանի (ԵՔ) կողմից, որը հանդես է գալիս որպես Իրականացնող մարմին (ԻՄ) և գործում է անմիջապես ԾԻԳ-ի հետ: Սույն ծրագրի նպատակն է խթանել կայուն, ինտեգրված, սոցիալապես հասանելի ու ծախսերի տեսանկյունից արդյունավետ քաղաքային տրանսպորտի համակարգի ստեղծումը: Հակիրճ ասած՝ հիմնական նպատակն է լրացնել քաղաքային արևմտյան օղակի բացակայող ճանապարհային հանգույցները: Ծրագիրը ներառում է ճանապարհների և մայրուղիների վերականգնման և շինարարության երեք Ենթածրագիր: Բոլոր Ենթածրագրերն ունենալու են տարաբնակեցման ազդեցություններ:
- 2) Նախագծման գործընթացի, բյուջեի սահմանափակումների և մանրամասն չափագրման հետազոտության (ՄՉՀ) համար իրավական սահմանափակումների հետ համատեղելի լինելու նպատակով Տրանշ 2-ի շրջանակում չորս առանձին Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրեր (ՀՕՏՕ-ներ) կտրամադրվեն 3 Ենթածրագրերի համար (նախնական ուսումնասիրության տևողությունը չի կարող երկու ամսից ավելի լինել՝ սկսած այն պահից, երբ ուժի մեջ է մտնում նախնական ուսումնասիրության վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումը ( «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-185-Ն օրենք, Հոդված 8, կետ 4բ): Երկու ՀՕՏՕ կատարատարի 3-րդ ենթածրագրի համար՝ Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհային հանգույց:
  - ա. **Ենթածրագիր 1.** Արգավանդ-Շիրակ ճանապարհային հանգույց՝ շինարարության փուլում է:
  - բ. **Ենթածրագիր 2.** Դավթաշեն-Աշտարակ ճանապարհային հանգույց՝ հաստատված է ԱԶԲ-ի և ՀՀ կառավարության կողմից, Աշխատանքների գնումն իրականացման փուլում է:
  - գ. **Ենթածրագիր 3.** Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհային հանգույց. սպասվում է բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշում՝ Բաբաջանյան-Հին Միլիկյան ճանապարհահատվածի համար: Տիչինա-Աշտարակ ճանապարհահատվածը սույն փաստաթղթի առարկան է:
- 3) Սույն Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիրը (ՀՕՏՕ) մշակվել է Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկողության խորհրդատուի (ՄՆՇՎԽ) կողմից Երևանի քաղաքապետարանի (ԵՔ) Ծրագրերի իրականացման գրասենյակի (ԾԻԳ) համար: Սույն ՀՕՏՕ-ն անդրադառնում է Տրանշ 2-ի շրջանակներում իրականացվող Տիչինա-Աշտարակ՝ հատվածներ 7-ի և 8-ի հողի օտարման և տարաբնակեցման ազդեցություններին:

## 2. Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի նպատակն ու շրջանակը

- 4) Սույն ՀՕՏՕ-ի հիմնական նպատակն է բացահայտել Տրանշ 2/հատվածներ 7-ի և 8-ի արդյունքում ազդեցության ենթակա անձանց և աջակցել նրանց՝ վերականգնելու իրենց

կենսամակարդակը: ՀՕՏՕ-ն համապատասխանում է ՀՀ օրենսդրությանը և ԱԶԲ-ի Անվտանգության քաղաքականության հայտարարագրի (ԱԲՀ, 2009թ.) պահանջներին:

- 5) ՀՕՏՕ-ի շրջանակը ներառում է՝ 1) ԱԵԱ-ների նկարագրությունը (100% ընտրանքով մարդահամարի միջոցով), 2) ազդեցության ենթակա ամբողջ գույքի մանրամասն չափագրման հետազոտությունը (ՄՉՀ), 3) տեղեկատվության հրապարակումը և ԱԵԱ-ների հետ հանրային լուսմների կազմակերպումը, 4) վերականգնման և փոխհատուցումների վճարման քաղաքականությունը և շրջանակը, 5) բողոքների և դժգոհությունների լուծման մեխանիզմը, 6) տարաբնակեցման բյուջեն, 7) ինստիտուցիոնալ շրջանակը, 8) ՀՕՏՕ իրականացման ժամանակացույցը և 10) ՀՕՏՕ իրականացման մոնիթորինգի մեխանիզմը:

### 3. Ազդեցությունների ամփոփում

- 6) ԱԵՏՏ/ԱԵԱ-ների մարդահամարի և ազդեցության ենթակա բոլոր գույքերի մանրամասն չափագրման հետազոտությունն իրականացվել է 2016 թ. ապրիլի 20-ից մայիսի 28-ն ընկած ժամանակահատվածում:
- 7) Մարդահամարի արդյունքում բացահայտվեցին ծրագրի ազդեցությանը ենթակա 52 տնային տնտեսություն՝ ներառյալ սեփականատերերը և հողերի կամ շինությունների օգտագործողները, ձեռնարկատերերը և աշխատողները՝ ընդհանուր առմամբ տնային տնտեսությունների 223 անդամներով: Ընդհանուր առմամբ հատվածներում ազդեցության կենթարկվեն 55 հողակտոր, 66 բնակելի և ոչ բնակելի շենքեր և շինություններ, 5 ձեռնարկատիրական գործունեություն և 1 աշխատող: Մանրամասները ներկայացված են ստորև բերված պարբերություններում:
  - 8) ՀՕՏՕ-ի շրջանակում բացահայտվել է ազդեցության ենթակա 55 հողակտոր (41,049.75մ<sup>2</sup>), որոնցից
    - ա. 29-ը սեփականության իրավունքով պատկանում են 25 ԱԵՏՏ-ների (29,325.801 մ<sup>2</sup>),
    - բ. 26 հողակտոր (11,723.95 մ<sup>2</sup>) սեփականության իրավունքով պատկանում է ԵԲ-ին, որոնք ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվում են 26 ԱԵՏՏ-ների կողմից,
  - 9) Ընդհանուր առմամբ կքանդվեն 44 բնակելի շենքեր (2,136.46 մ<sup>2</sup>) և 22 ոչ բնակելի շենքեր և շինություններ (607.68 մ<sup>2</sup>): Բացի այդ, կվերանորոգվեն 3 շինություն: Ազդեցության են ենթարկվում 861.15զծամետր ցանկապատ և 2,015.77 մ<sup>2</sup> երկաթբետոնե/քարե պատեր/ցանկապատեր: Ազդեցության են ենթարկվում թվով 7 բարելավումներ, օրինակ՝ խողովակներ, բետոնե և ասֆալտե պատվածքներ և այլն, ընդամենը՝ 1,509.01 մ<sup>2</sup>, 126 մ:
  - 10) Ազդեցության կենթարկվեն 875.00 մ<sup>2</sup> մակերեսով մշակաբույսեր, 1,826.00 մրգատու ծառեր ու թփեր, 27 փայտանյութ սովող ծառեր և 545.00 դեկորատիվ ծառեր ու թփեր: 5 ձեռնարկատիրական գործունեություններ կկրեն մշտական ազդեցություն, և 1 աշխատող մշտապես կկորցնի իր աշխատանքը:
  - 11) 52 ԱԵՏՏ-ներից 20-ը (107 ԱԵԱ) ազդեցության ենթարկված հողակտորներում մրգատու ծառերի ու թփերի կորստի պատճառով կկորցնեն իրենց գյուղատնտեսական եկամտի 10%-ը կամ ավելին, իսկ 12 ԱԵՏՏ-ներ (56 ԱԵԱ) կտեղափոխվեն իրենց բնակության վայրից: 8 ԱԵՏՏ համարվում է խոցելի:
  - 12) Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների (ԱԵՏՏ) և ազդեցության ենթակա անձանց (ԱԵԱ) տարբեր կատեգորիաների վերաբերյալ տեղեկությունները, ըստ ազդեցության

տեսակի, ինչպես նաև զուտ թվերը՝ առանց կրկնահաշվարկի, ներկայացված են ԱԵՏՏ-ներ/ԱԵԱ-ների՝ ստորև բերված ամփոփ աղյուսակում:

**Աղյուսակ Ե.1 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունները/անձինք՝ ըստ ազդեցության տեսակի**

Ազդեցության տեսակը	Հատված 7				Հատված 8				Ընդամենը			
	ԱԵՏՏ-ներ	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ	Նշումներ	ԱԵՏՏ-ներ	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ	Նշումներ	ԱԵՏՏ-ներ	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ	Նշումներ
	Ու Շտ ազդեցության տեսակի	Առանց կրկնահաշվարկի	Բացարձակ No		Ու Շտ ազդեցության տեսակի	Առանց կրկնահաշվարկի	Բացարձակ No		Ու Շտ ազդեցության տեսակի	Առանց կրկնահաշվարկի	Բացարձակ No	
<b>Ա. Ազդեցությունը հողի վրա ըստ իրավական կարգավիճակի</b>												
Ա1. Մասնավոր	5	5	13	-	20	20	90	-	25	25	103	-
Ա2. Համայնքային	15	14	57	1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա1-ում:	11	10	51	1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա1-ում:	26	24	108	2 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա1-ում:
<b>Բ. Ազդեցությունը շենքերի վրա</b>												
Բ1. Բնակելի շինություններ	12	0	0	Բոլոր ԱԵՏՏ-ները ընդգրկված են Ա2-ում:	1	0	0	1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա1-ում:	13	0	0	1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա1-ում: 12 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում:
Բ2. Ոչ բնակելի շինություններ	1	0	0	1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա1-ում:	9	0	0	3 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա1-ում: 6 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում:	10	0	0	4 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա1-ում: 6 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում:
Բ3. Ցանկապատեր	13	0	0	Բոլոր ԱԵՏՏ-ները ընդգրկված են Ա2-ում:	8	0	0	5 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա1-ում: 3 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում:	21	0	0	5 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա1-ում: 16 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում:
<b>Գ. Ազդեցությունը ծառերի և սյակաբույսերի վրա</b>												
Գ1. Մրգատու ծառեր և թփեր	13	0	0	Բոլոր ԱԵՏՏ-ները ընդգրկված են Ա2-ում:	8	0	0	Բոլոր ԱԵՏՏ-ները ընդգրկված են Ա1-ում և Ա2-ում:	21	0	0	Բոլոր ԱԵՏՏ-ները ընդգրկված են Ա1-ում և Ա2-ում:
Գ2. Փայտանյութ տվող ծառեր	8	0	0		2	0	0		10	0	0	

Ազդեցության տեսակը	Հատված 7				Հատված 8				Ընդամենը			
	ԱԵՏՏ-ներ	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ	Նշումներ	ԱԵՏՏ-ներ	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ	Նշումներ	ԱԵՏՏ-ներ	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ	Նշումներ
	No Ըստ ազդեցության տեսակի	Առանց կրկնահաշվարկի	Բացարձակ No		No Ըստ ազդեցության տեսակի	Առանց կրկնահաշվարկի	Բացարձակ No		No Ըստ ազդեցության տեսակի	Առանց կրկնահաշվարկի	Բացարձակ No	
Գ3. Դեկորատիվ ծառեր, թփեր, ծաղիկներ	9	0	0		4	0	0		13	0	0	
Գ4. Մշակաբույսեր	9	0	0		5	0	0		14	0	0	
<b>Դ. Ազդեցությունը ձեռնարկատիրական գործունեության վրա</b>												
Դ1. Մշտական՝ հարկային հայտարարագրի առկայությամբ	0	0	0	-	4	2	8	2 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում:	4	2	8	2 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում:
Դ2. Մշտական՝ առանց հարկային հայտարարագրի	0	0	0	-	1	0	0	1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա2-ում:	1	0	0	1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա2-ում:
<b>Ե. Ազդեցությունն աշխատանքի վրա</b>												
Ե. Զբաղվածության մշտական կորուստ	0	0	0	-	1	1	4	-	1	1	4	-
<b>Զ. ԱԵՏՏ-ների խոցելիությունը</b>												
Զ. Խոցելի ԱԵՏՏ-ներ	7	0	0	1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա1-ում: 6 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում:	1	0	0	1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա2-ում:	8	0	0	1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա1-ում: 7 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում:
<b>Ը. Վերաբնակեցման ազդեցություն</b>												
Ը1. Ձեռնարկատիրական գործունեության տեղափոխում	0	0	0	-	5	0	0	3 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում: 2 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են	5	0	0	3 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում: 2 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Դ1-



Ազդեցության տեսակը	Հատված 7				Հատված 8				Ընդամենը			
	ԱԵՏՏ-ներ	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ	Նշումներ	ԱԵՏՏ-ներ	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ	Նշումներ	ԱԵՏՏ-ներ	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ	Նշումներ
	No Ըստ ազդեցության տեսակի	Առանց կրկնահաշվարկի	Բացարձակ No		No Ըստ ազդեցության տեսակի	Առանց կրկնահաշվարկի	Բացարձակ No		No Ըստ ազդեցության տեսակի	Առանց կրկնահաշվարկի	Բացարձակ No	
								Դ1-ում:				ում:
Է2. Վերաբնակեցում	11	0	0	Բոլոր ԱԵՏՏ-ները ընդգրկված են Ա2-ում:	1	0	0	1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա1-ում:	12	0	0	1 ԱԵՏՏ ընդգրկված է Ա1-ում: 11 Բոլոր ԱԵՏՏ-ները ընդգրկված են Ա2-ում:
<b>Ընդամենը</b>	-	<b>19</b>	<b>70</b>	-	-	<b>33</b>	<b>153</b>	-	-	<b>52</b>	<b>223</b>	-

- 13) Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական հետազոտությունը (USZ) իրականացվել է 2016 թվականի ապրիլի 20-ից մայիսի 28-ն ընկած ժամանակահատվածում: Հետազոտվել է ազդեցության ենթակա 52 տնային տնտեսություն (մնացած 11 ԱԵՏՏ-ներից (2 ԱԵՏՏ՝ հատված 7-ի և 9 ԱԵՏՏ՝ հատված 8-ի շրջանակներում) 7-ը հրաժարվել են պատասխանել հարցերին (նրանցից 2-ը խոշոր ընկերություններ ունեն, ովքեր հրաժարվեցին իրենց ԱԵՏՏ անդամների և եկամտի մասին տեղեկություններ «հրապարակել», 3 ԱԵՏՏ կարևորություն չտվեցին հետազոտությանը և պարզապես տեղեկացրեցին, որ իրենց ԱԵՏՏ-ն խոցելի չէ), 2 ԱԵՏՏ ողջ հետազոտության ընթացքում ընդհանրապես հրաժարվեց որևէ համագործակցությունից: 1 ԱԵՏՏ եղել է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, և 3 ԱԵՏՏ անհասանելի էր մարդահամարի և սոցիալ-տնտեսական հետազոտության համար):

#### 4. Փոխհատուցման քաղաքականությունը և վերականգնման միջոցառումները

- 14) Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի (ՀՕՏԾ) համաձայն, որը հիմնված է ՀՀ օրենսդրության և ԱԶԲ ԱԲՀ (2009թ.) պահանջների վրա, փոխհատուցման և/կամ առնվազն վերականգնման իրավունք ունեցող ԱԵԱ-ներն են՝ 1) բոլոր ԱԵԱ-ները, ովքեր կորցնում են ինչպես ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ, անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով, այնպես էլ օրենսդրության պահանջների չպահպանմամբ, անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով տնօրինվող, տիրապետվող և օգտագործվող հողը, 2) վարձակալները, որոնք տիրապետում և օգտագործում են անշարժ գույքը՝ ինչպես ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ, անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով, այնպես էլ օրենսդրության պահանջների չպահպանմամբ, անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով, 3) շենք/շինությունների, մշակաբույսերի, բույսերի կամ հողին ամրացված այլ օբյեկտների սեփականատերերը, 4) ձեռնարկատիրական գործունեությունը, եկամուտը և աշխատավարձը կորցնող ԱԵԱ-ները: Հատվածներ 7- և 8-ի ազդեցություններին համապատասխան Իրավունքների սխեման բերված է ստորև:
- 15) Փոխհատուցման իրավունքը սահմանափակված է կասեցման օրով, որը Ծրագրի համար սահմանվել է 2016 թվականի օգոստոսի 3-ը, որը բոլոր ԱԵԱ-ների համար նույնն է՝ անկախ նրանց իրավական կարգավիճակից: Մա ազդեցության ենթարկված գույքերին կարագրության արձանագրությունների կազմման (ԱԵԱ-ների և Օտարողի կողմից արձանագրությունների ստորագրման) օրն է: Քանի որ ազդեցության ենթարկված գույքերի նկարագրության արձանագրությունների կազմման ամսաթիվը յուրաքանչյուր գույքի համար տարբեր է, նշված ամսաթիվը ԱԵԱ-ների և Օտարողի կողմից առաջին գույքի նկարագրության արձանագրության ստորագրման օրն է:

Աղյուսակ Ե.2 Ծրագրի համար մշակված իրավունքների սխեման

Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
1. Գյուղատնտեսական հողերի կորուստ	ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են գյուղատնտեսական հողերը՝ անկախ ազդեցության աստիճանից	Սեփականատեր	Փոխհատուցում՝ փոխարինման արժեք +15%՝ շուկայական կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է): Հողի շուկայի բացակայության դեպքում փոխհատուցումը կիրականացվի հիմք ընդունելով հողի տարեկան արտադրողականությունը՝ հաշվարկված տարիների այն քանակով, որը կապահովի ԱԵՏՏ-ի կորցրած հողի դիմաց վերականգնումը:
		Իրավական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա ԱԵՏՏ-ներ	Այս ԱԵԱ-ները կստանան վերականգնման նպաստ ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեքի (որն ավելի բարձր է) 25% -ի չափով:

Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
2. Ոչ գյուղատնտեսական հողեր	ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են իրենց հասարակական նշանակության կամ բնակելի հողերը	Մեփականատեր	Փոխհատուցում՝ փոխարինման արժեք +15%՝ շուկայական կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է)
		Իրավական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա ԱԵՏՏ-ներ	Այս ԱԵՏՏ-ները կստանան վերականգնման նպաստ ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեքի (որն ավելի բարձր է) 25%-ի չափով:
3. Բնակելի կառույցներ		Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ սեփականության իրավական գրանցման կարգավիճակից	Շինության կորստի դեպքում՝ դրամական փոխհատուցում փոխարինման ամբողջ արժեքով (շուկայական արժեքից ոչ պակաս) + 15%՝ առանց ամորտիզացիոն մասնահանումների, գործարքի համար ծախսերի և փրկված նյութերի: Մասնակի ազդեցության դեպքում և ԱԵՏՏ համաձայնությամբ՝ փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի, ինչպես նաև շինության վերանորոգման համար (ԱԵԱ-ի համաձայնությամբ):
4. Ոչ բնակելի կառույցներ/ գույք		Իրավական գրանցման կարգավիճակ ունեցող ԱԵՏՏ-ներ	Շինության կորստի դեպքում՝ դրամական փոխհատուցում փոխարինման ամբողջ արժեքով (շուկայական արժեքից ոչ պակաս) + 15%՝ առանց ամորտիզացիոն մասնահանումների, գործարքի համար ծախսերի և փրկված նյութերի: Մասնակի ազդեցության դեպքում և ԱԵՏՏ համաձայնությամբ՝ փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի, ինչպես նաև շինության վերանորոգման համար (ԱԵԱ-ի համաձայնությամբ):
		Իրավական գրանցման կարգավիճակ ունեցող հողի վրա ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով շինություններ ունեցող ԱԵՏՏ-ներ	Շինության կորստի դեպքում՝ դրամական փոխհատուցում փոխարինման ամբողջ արժեքով (շուկայական արժեքից ոչ պակաս)՝ առանց ամորտիզացիոն մասնահանումների, գործարքի համար ծախսերի և փրկված նյութերի:
		Իրավական գրանցման կարգավիճակ չունեցող հողի վրա ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով շինություններ ունեցող ԱԵՏՏ-ներ	Վերականգնման նպաստ փոխարինման արժեքով (առանց ամորտիզացիոն մասնահանումների և գործարքի համար ծախսերի)՝ հանած օրինականացման ծախսերը, առավելագույնը մինչև շուկայական արժեքի 20% :
5. Բերք	Ազդեցության ենթակա բերքի գանգված	Բոլոր ԱԵՏՏ-ները անկախ իրավական գրանցման կարգավիճակից (ներառյալ	Մեկ տարվա բերքի փոխհատուցում հաշվարկված շուկայական գներով՝ ակնկալվող համախառն բերքի համար:

Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
		իրավական կարգավիճակ ստանալու ենթակաս փականատեր և կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները)	
6. Ծառեր	Ազդեցության ենթակա ծառեր	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից (ներառյալ իրավական կարգավիճակ ստանալու ենթակաս փականատեր և կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները)	Շուկայական գներով հաշվարկված դրամական փոխհատուցում՝ հիմնված ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա:
7. Ձեռնարկատիրական գործունեություն կամ զբաղվածություն	Ձեռնարկատիրական գործունեություն/զբաղվածություն	Բոլոր ԱԵԱ/ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից (ներառյալ իրավական կարգավիճակ ստանալու ենթակաս փականատեր և կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները)	Մեփականատերեր (մշտական ազդեցության դեպքում) դրամական փոխհատուցում տարեկան զուտ եկամտի չափով: Փոխհատուցումը պետք է հիմնված լինի հարկային հայտարարագրի վրա: Հայտարարագրի բացակայության դեպքում ԱԵՏՏ-ը կստանա վերականգնման նպաստ առավելագույն չհարկվող աշխատավարձի չափով՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատվող ամիսների հաշվարկով՝ մինչև 1 տարի: Առավելագույն չհարկվող աշխատավարձը հավասար է նվազագույն աշխատավարձին: Մշտական աշխատողներ/աշխատակիցներ. (մշտական ազդեցության դեպքում) վեց ամսվա կորցրած միջին աշխատավարձի չափով գումարի տրամադրում
8. Օժանդակություն զգալի ազդեցությունների դեպքում	ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են գյուղատնտեսական եկամտի 10 և ավելի տոկոսը	Զգալի ազդեցության ենթարկված բոլոր ԱԵՏՏ-ները, ներառյալ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները և վարձակալները	1) Զգալի գյուղատնտեսական եկամտի կորուստ ունեցող ԱԵԱ-ներին մեկ տարվա բերքի չափով հավելյալ փոխհատուցում բերքի կորստի դիմաց: 2) վերականգնման նպաստ վերաբնակեցվող ԱԵՏՏ-ներին՝ 6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով
9. Օժանդակություն վերաբնակեցման դեպքում	Տրանսպորտի և տեղափոխումների ծախսեր	Տեղահանված բոլոր ԱԵԱ, ներառյալ վարձակալները	Տրանսպորտային և մեկ ամսվա համար կենսապահովման ծախսերը հոգալու համար բավարար գումարների տրամադրում:
10. Օժանդակություն խոցելի անձանց		Աղքատության սահմանագծից ցածր կենսամակարդակ ունեցող և (կամ) կանանց և (կամ)	6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով դրամական օժանդակության տրամադրում: Ծրագրի իրականացման հետ կապված աշխատատեղերի համար ընտրություն կատարելիս այս անձանց պետք է առաջնայնություն տալ:

Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
		տարեց անձանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ	
11. Ժամանակավոր ազդեցություն		Բոլոր ԱԵՏՏ-ները	Պատշաճ վարձակալություն և վերականգնման աջակցություն կտրամադրվի ժամանակավոր ազդեցություն կրող գույքի/սեփականության համար:
12. Ժամանակավոր ազդեցություն հաղորդողիների տեղափոխման հետևանքով	Իրավական կարգավիճակի հիման վրա ԱԵՏՏ-ների բոլոր կորուստները	Սեփականատերեր	Փոխհատուցում կտրամադրվի թե՛ հողի, թե՛ բարելավումների դիմաց, ինչպես մշտական ազդեցությունների դեպքում է:
		Օրինականացման ենթակա չհանդիսացող ԱԵՏՏ-ներ	Փոխհատուցում կվճարվի միայն ազդեցության ենթակա հողի վրա օգտագործողի կողմից արված բարելավումների համար, ինչպիսիք են՝ ծառերը, մշակաբույսերը, ցանկապատերը և այլն: Նման դեպքերում օգտագործողները նպաստ չեն ստանա ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողի դիմաց, այնուամենայնիվ, այդ հողակտորները պետք է ծածկվեն և վերադարձվեն օգտագործողին
13. ՀՕՏ չնախատեսված ազդեցություններ, եթե այդպիսիք լինեն			Ծրագրի իրականացման ընթացքում ԵՔ-ն կանդրադառնա չնախատեսված ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը/վերականգնումը՝ ըստ վերոհիշյալ պայմանների:

## 5. Ծրագրի ինստիտուցիոնալ կառուցվածքը

- 16) ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը (ՏՁՆՆ) հանդիսանում է Գործադիր մարմին: Երևանի քաղաքապետարանը (ԵՔ) Իրականացնող մարմինն է և Ծրագրի իրականացման համար կրում է ընդհանուր պատասխանատվություն, ներառյալ՝ ՀՕՏ-ի մշակումն ու իրականացումը: ԻՄ-ն կգործի Ծրագրի իրականացման գրասենյակի (ԾԻԳ) միջոցով, որի կառուցվածքում ընդգրկված է նաև տարաբնակեցման մասնագետ:
- 17) Ծրագրի կառավարման խորհուրդը (ԾԿԽ) կազմված է ԵՔ-ի, ՀՀ շահառու նախարարությունների ներկայացուցիչներից և ղեկավարվում է ՀՀ վարչապետի կողմից: ԾԿ խորհրդի գործունեության հիմնական նպատակը Ծրագրերի իրականացման համար Ասիական զարգացման բանկի և այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից համապատասխան համաձայնագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը տրամադրված միջոցների կառավարումն է, ՀՀ վարչապետի 2009 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 892-Ա որոշմամբ հաստատված կանոնադրության համապատասխան որոշումների ընդունումը:
- 18) Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկողության խորհրդատուն (ՄՆՇՎԽ) ծրագրի համար մշակել է ՀՕՏ: ՀՕՏ-ի իրականացման ընթացքում ՄՆՇՎԽ-ն կաջակցի ԾԻԳ-ին՝ մասնակցելով հանրային լուսնակցության, պարզաբանելով ՀՕՏ-ի իրականացման ընթացքում ի հայտ եկած հարցերը, արձագանքելով ԱԵԱ-ների առաջ քաշած բողոքներին, ստուգելով փոխհատուցման բյուջեն, վերանայելով/փոփոխելով նկարագրության արձանագրությունները և գնահատման հաշվետվությունները, եթե կիրառելի են:

## 6. Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացումը

- 19) Իրականացնող մարմինը կսկսի ՀՕՏ-ի իրականացումն ԱԶԲ-ի և ՀՀ կառավարության կողմից՝ վերջինիս հաստատումից անմիջապես հետո: Այն սահմանված կարգով ԱԵԱ-ներին կտրամադրի Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի մեկնարկի վերաբերյալ պայմանագրերի/համաձայնագրերի նախագծային տարբերակները: ԾԻԳ-ը կստորագրի սեփականության օտարման պայմանագրեր ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով տնօրինվող, տիրապետվող և օգտագործվող գույքի համար՝ նոտարական վավերացմամբ կամ առանց վերջինիս, և փոխհատուցման համաձայնագրեր՝ ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով տնօրինվող, տիրապետվող և օգտագործվող գույքի և նպաստների համար: Վերաբնակեցման/տեղափոխման համար ԱԵԱ-ներին կտրվի 30 օր՝ սկսած ամբողջական փոխհատուցման/նպաստների հատկացման օրից, որը կսահմանվի պայմանագրի շրջանակներում կամ օտարման պայմանագրերի ներքո սահմանված ժամանակահատվածում (դատական կարգով օտարված գույքի սեփականատերերից չի պահանջվի տեղափոխվել երկամսյա ժամկետում՝ սկսած օտարման պայմանագրի կնքման օրվանից, տե՛ս «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-185-Ն օրենք, Հոդված 14, կետ 2):
- 20) ՀՕՏ-ից ազատ հատվածները Կապալառուին տրամադրելու գործընթացն արագացնելու նպատակով ԾԻԳ-ը կիրականացնի ՀՕՏ-ն ըստ հատվածների: Այսպիսով՝ յուրաքանչյուր հատվածի համար (հատված 7 և 8) կպատրաստվեն Համապատասխանության վերաբերյալ երկու հաշվետվություն:
- 21) Ստորև բերված աղյուսակում ներկայացված ժամանակացույցը ցույց է տալիս ՀՕՏ-ի իրականացման հստակ փուլերը.

**Աղյուսակ Ե.3 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման ժամանակացույց**

No	Առաջադրանքը/անվանումը	Պատասխանատվությունը	Սկիզբը	Ավարտը
<b>ՀՕՏ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ</b>			<b>17.12.2016</b>	<b>12.06.2017</b>
1	17.12.2016		17.12.2016	
2	Հարկադիր օտարման հնարավոր դեպքերի բացահայտում	ԾԻԳ	18.12.2016	18.03.2017
3	Նախնական պայմանագրերի ուղարկում ԱԵԱ-ներին	ԾԻԳ	17.12.2016	27.12.2016
4	Պայմանագրերի ստորագրում	ԾԻԳ	18.12.2016	27.03.2017
5	Փոխհատուցման տրամադրում	ԾԻԳ	19.12.2016	08.04.2017
6	Օտարման վերջնականացում	ԾԻԳ	27.03.2017	25.06.2017
7	ՀՕՏ Համապատասխանության հաշվետվության պատրաստում	ԱՄԳ	18.12.2016	27.04.2017
8	ՀՕՏ Համապատասխանության նախնական հաշվետվության հանձնումը ԱԶԲ-ին	ԾԻԳ	28.04.2017	03.05.2017
9	ԱԶԲ-ի կողմից ՀՕՏ Համապատասխանության հաշվետվության դիտարկումը	ԱԶԲ	10.05.2017	25.05.2017
10	ՀՕՏ Համապատասխանության վերջնական հաշվետվության հանձնումը ԱԶԲ-ին	ԾԻԳ	30.05.2017	04.06.2017
11	ԱԶԲ-ի կողմից ՀՕՏ Համապատասխանության հաշվետվության հաստատումը	ԱԶԲ	04.06.2017	10.06.2017

12	Շինհրապարակի հանձնումը Կապալառուին	ԾԻԳ	11.06.2017	11.06.2017
13	Շինարարական աշխատանքների մեկնարկը	Կապալառու	12.06.2017	12.06.2017
14	Մոնիթորինգ	ԾԻԳ/ԱՄԳ	Ընթացիկ	
15	Բողոքների լուծում	ԾԻԳ	Ընթացիկ	

## 7. Հանրային լուսմներ և տեղեկատվության հրապարակում

- 22) ԾԻԳ-ը երեք հանրային լուսմ անցկացրեց բոլոր ԱԵԱ-ների հետ. երկու հանրային լուսմ կազմակերպվեց նախնական ուսումնասիրության մասին որոշումը ներկայացնելու համար, իսկ մեկ հանրային լսման ընթացքում ներկայացվեց բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշումը: Առաջին երկուսը տեղի ունեցան 2016 թ. հունվարի 21-ին և 2016 թ. հունիսի 14-ին, իսկ երրորդը՝ 2016 թ. հուլիսի 26-ին: Հանրային լուսմների ընթացքում ներկայացվեցին իրավունքների սխեման, գնահատման մեթոդաբանությունը, ՄՉՀ-ն և մարդահամարը/ՄՍՀ: Մանրամասնորեն ներկայացվեց Բողոքների լուծման մեխանիզմը, մասնավորապես՝ շեշտադրվեցին տեղային կիզակետի դերն ու գործառույթները, որը Ծրագրի իրականացման բոլոր փուլերում ԱԵԱ-ների բողոքները բարձրաձայնելու, ձևակերպելու և ԻՄ-ին հասցեագրելու մեթոդ է: Ընդհանուր առմամբ 30 ԱԵԱ (5 կին և 25 տղամարդ) մասնակցեցին վերջին հանրային լսմանը (մասնակիցների ցանկը համապատասխան ստորագրություններով կցված է հանրային լսման արձանագրությանը):
- 23) Հողի օտարման և տարաբնակեցման գործընթացների հիմնական փուլերը նկարագրող ծրագրի տեղեկագիրը և ՀՀ կառավարության երկու որոշումների (նախնական և ԲԳՀՇՈ) տպված օրինակները տրամադրվեցին բոլոր ԱԵԱ-ներին, որտեղ ներկայացված էին Ծրագրի նկարագրությունը, Իրավունքների սխեման, բողոքների լուծման մեխանիզմը, իրավունքներն ու փոխհատուցումները, ինչպես նաև հաճախակի տրվող հարցերի պատասխանները: 14.07.2016-ին սեփականատերերին ներկայացվեցին մասնավոր գույքերի անհատական քարտեզները՝ ազդեցության ենթարկված/չենթարկված մակերեսի և հիմնական ազդեցության (շենքեր, ցանկապատեր և բարելավումներ) հստակ նշումով՝ համոզվելու համար, որ սեփականատերերը կկարողանան օգտվել գույքի ազդեցության չենթարկվող մասի օտարման վերաբերյալ դիմումը բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշման ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում ներկայացնելու հնարավորությունից: («Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-185-Ն օրենք, Հոդված 5, կետ 2.2):
- 24) Իրականացման համար պատրաստ սույն ՀՕՏ-ն ԱԶԲ-ի և ՀՀ կառավարության կողմից հաստատվելուց հետո կտեղադրվի ԱԶԲ, Ծրագրի (ԾԻԳ) և ԵՔ կայքէջերում: Բացի այդ, ՀՕՏ-ի հաստատումից հետո ԱԵԱ-ներին կտրամադրվի ծրագրի տեղեկագիրը:

## 8. Բյուջեի ամփոփում

- 25) ՀՕՏ-ի ամբողջական իրականացումը, ներառյալ՝ փոխհատուցումը, վերականգնման նպաստը, ինչպես նաև ՀՕՏ-ի իրականացման վարչական ծախսերը և չնախատեսված ծախսերը կազմում են **2,267,895,770.23** ՀՀ դրամ, որը համարժեք է **4,764,486.91** ԱՄՆ դոլարին (2016 թ. օգոստոսի փոխանակման կուրսի համաձայն): Բյուջեի միջոցները կտրամադրվեն 3 աղբյուրներից՝ 1) Երևանում գտնվող հողերի համար փոխհատուցումը կտրվի ԵՔ-ի բյուջեից, 2) հողի օտարման այլ ծախսերը, ներառյալ՝ հարկերը, տուրքերը, վճարները կֆինանսավորվեն ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման մասից: 3) Մնացած գույքերի դիմաց փոխհատուցումը, ներառյալ՝ նպաստները, կհատկացվեն ԱԶԲ-ի վարկից: ՀՀ կառավարության կողմից Հողի օտարման և տարաբնակեցման սույն ծրագրի հաստատումից հետո Երևանի քաղաքապետարանը և ՀՀ ֆինանսների նախարարությունը

համապատասխանաբար կապահովեն ՀՕՏ-ի բյուջեով նախատեսված ֆոնդերի ժամանակին հատկացումները:

### **9. Բողոքների լուծման մեխանիզմ**

- 26) Բողոքների լուծման մեխանիզմում ներգրավված կլինեն մի քանի կողմեր՝ 1) ԾԻԳ, Բողոքների դիտարկման խումբ (ԲԴԽ) և 2) ԵՔ: Անկախ բողոքի լուծման հիմնված մեխանիզմից և ընթացակարգից՝ ԱԵԱ-ներն իրավունք ունեն իրենց հայցը ներկայացնել դատարան՝ բողոքարկման գործընթացի ցանկացած պահին:

### **10. Մոնիթորինգ և գնահատում**

- 27) ՀՕՏ-ի իրականացումը կենթարկվի թե՛ ներքին, թե՛ արտաքին մոնիթորինգի: Ներքին մոնիթորինգը կիրականացվի ԾԻԳ-ի կողմից: Արտաքին մոնիթորինգը հանձնարարվում է Արտաքին մոնիթորինգային գործակալությանը (ԱՄԳ), որը սույն հատվածների համար վարձվել է ԾԻԳ-ի կողմից և հաստատվել ԱԶԲ-ի կողմից: ԱՄԳ-ն մոնիթորինգի կենթարկի ՀՕՏ-ի իրականացումը և կպատրաստի Համապատասխանության հաշվետվություններ, որոնք պետք է հաստատվեն ԱԶԲ-ի կողմից՝ որպես կապալի շինարարական աշխատանքները սկսելու պայման:



# 1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## 1.1 Ծրագրի պատմությունը

- 28) Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակում Ծրագիր 2-ը (Ծրագիրը), որը ֆինանսավորվում է ԱԶԲ-ի Բազմափուլային ֆինանսական գործիքի (ԲՖԳ) միջոցով, իրականացվում է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (ՏՁՆՆ) կողմից, որը հանդես է գալիս որպես Գործադիր մարմին (ԳՄ), և Երևանի քաղաքապետարանի (ԵՔ) կողմից, որը հանդես է գալիս որպես Իրականացնող մարմին (ԻՄ) և գործում է անմիջապես ԾԻԳ-ի հետ: Սույն ծրագրի նպատակն է խթանել կայուն, ինտեգրված, սոցիալապես հասանելի ու ծախսերի տեսանկյունից արդյունավետ քաղաքային տրանսպորտի համակարգի ստեղծումը: Հակիրճ ասած՝ հիմնական նպատակն է լրացնել քաղաքային արևմտյան օդակի բացակայող ճանապարհային հանգույցները: Ծրագիրը ներառում է ճանապարհների և մայրուղիների վերականգնման և շինարարության երեք Ենթածրագիր: Բոլոր Ենթածրագրերն ունենալու են տարաբնակեցման ազդեցություններ:
- 29) Նախագծման գործընթացի, բյուջեի սահմանափակումների և մանրամասն չափագրման հետազոտության համար իրավական սահմանափակումների հետ համատեղելի լինելու նպատակով 2-րդ տրանշի շրջանակում չորս առանձին ՀՕՏ-ներ կտրամադրվեն 3 Ենթածրագրերի համար (հետազոտության տևողությունը չի կարող երկու ամսից ավելի լինել՝ սկսած այն պահից, երբ ուժի մեջ է մտնում նախնական ուսումնասիրության մասին ՀՀ կառավարության որոշումը («Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի և ոյ ե մ բ եր ի 27-ի ՅՕ-185-Ն օրենք, Հոդված 8, կետ 4բ): Երկու ՀՕՏ կպատրաստվի 3-րդ ենթածրագրի համար՝ Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհային հանգույց:
- ա. Ենթածրագիր 1.** Արգավանդ-Շիրակ ճանապարհային հանգույց՝ շինարարության փուլում է,
  - բ. Ենթածրագիր 2.** Դավթաշեն-Աշտարակ ճանապարհային հանգույց՝ հաստատված է ԱԶԲ-ի և ՀՀ կառավարության կողմից, և Աշխատանքների գնումն իրականացման փուլում է:
  - գ. Ենթածրագիր 3.** Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհային հանգույց. սպասվում է բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշում՝ Բաբաջանյան-Տիչինա ճանապարհահատվածի համար: Տիչինա-Աշտարակ ճանապարհահատվածը սույն փաստաթղթի առարկան է:
- 30) Սույն Հոդվածի օտարման և տարաբնակեցման ծրագիրը (ՀՕՏ) մշակվել է Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկողության խորհրդատուի (ՄՆՇՎԽ) կողմից Երևանի քաղաքապետարանի (ԵՔ) Ծրագրերի իրականացման գրասենյակի (ԾԻԳ) համար: Սույն ՀՕՏ-ն անդրադառնում է Տրանշ 2-ի շրջանակներում իրականացվող Տիչինա-Աշտարակ հատվածներ 7-ի և 8-ի հողի օտարման և տարաբնակեցման ազդեցություններին:

## 1.2 Ծրագրի տեղակայվածությունը

- 31) Հայաստանի Հանրապետությունը դեպի ծով ելք չունեցող երկիր է և տեղակայված է Սև և Կասպից ծովերի միջև: Հյուսիսում այն սահմանակից է Վրաստանին, արևելքում՝ Ադրբեջանին, հարավում՝ Իրանին, իսկ արևմուտքում՝ Թուրքիային, ինչպես ցույց է տրված Նկար 1.1-ում: Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է և զբաղեցնում է 260 կմ<sup>2</sup> տարածք՝ տարածվելով 18 կմ դեպի հյուսիս-հարավ ուղղությամբ և 16 կմ՝ արևելք-արևմուտք ուղղությամբ:
- 32) Այս ճանապարհային հանգույցը Երևանի արևմտյան շրջանցիկ ճանապարհին ամբողջականացնելու ճանապարհային բարելավումների ծրագրի մի մասն է՝ նպատակ ունենալով շրջանցել Երևանի կենտրոնը և այդպիսով բարելավել երթևեկության հոսքը, ինչպես նաև նվազեցնել տեղական նշանակության ճանապարհների գերբեռնվածությունը: Ներկայումս Աշտարակից և Երևանից դեպի արևմուտք գտնվող քաղաքներից եկող և դեպի հյուսիսային արվարձանները մեկնող փոխադրամիջոցները երթևեկում են Երևանի բնակելի համայնքներով: Առաջարկվող ճանապարհային հանգույցը երթևեկության հոսքը կփոխի՝ շատավրայինից դարձնելով տանգենցիալ Երևան քաղաքի կենտրոնի նկատմամբ:

**Նկար 1-1 Հայաստանի Հանրապետության և Երևանի տեղակայվածությունը**



Աղբյուրը. Երևանի քաղաքապետարանի գլխավոր հատակագիծ, 2004

## 1.3 Ծրագրի նկարագրությունը


- 33) Ծրագրի 2-րդ տրանշը բաժանված է երեք ենթածրագրերի.
- ա. Արգավանդ-Շիրակ ճանապարհային հանգույց. մոտավորապես 1,3 կմ երկարությամբ ճանապարհային հանգույցի շինարարություն Արգավանդի մայրուղու և Շիրակի փողոցի արևմտյան կողմի միջև: Ծրագիծն անցնում է հնագիտական վայրով, որը հայտնի է Կարմիր բլուր տեղանվամբ:
  - բ. Դավթաշեն - Աշտարակի մայրուղի՝ 2,3 կմ երկարությամբ:
  - գ. Բաբաջանյան - Աշտարակի մայրուղի՝ 6,5 կմ երկարությամբ:
- 34) Բոլոր կողմերի միջև հաղորդակցությունը ավելի դյուրին դարձնելու նպատակով՝ Ծրագիր 1-ի և Ծրագիր 2-ի տարածքը (Տրանշ 1 և Տրանշ 2) բաժանվել է մի քանի հատվածների, որոնք համարակալվել են Հ1-ից Հ9 և ներկայացված են ստորև բերված աղյուսակում: Դրանք ցուցադրված են հետևյալ քարտեզում (տե՛ս Նկար 1-2 Ծրագրի տեղակայվածության քարտեզ):

**Աղյուսակ 1-1 Ծրագրի ճանապարհահատվածները**

Ծրագիր/Տրանշ	Հատված	Անվանումը	Երկարությունը
Ծրագիր 1/Տրանշ1	Հ1	Արշակունյաց փողոց	1, 280 մ
	Հ 2	Նոր Շիրակի փողոց	3, 200 մ
	Հ 3	Արտաշատի խճուղի	
	Հ 4	Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք/ Փոխհատում	
Ծրագիր 2/Տրանշ2	Հ 5	Արգավանդ-Նոր Շիրակի փողոց	1,350 մ
	Հ 6	Բաբաջանյան-Տիչինա	2,200 մ
	Հ 7	Տիչինա-Հին Միլիկյան	2,000 մ
	Հ 8	Հին Միլիկյան-Աշտարակ մայրուղի	2,300 մ
	Հ 9	Դավթաշեն-Աշտարակ մայրուղի	2,240 մ

- 35) Ըստ ՀՕՏ ազդեցության մակարդակի՝ Տրանշ 2/Ծրագիր 2-ը դասակարգվել է որպես Կատեգորիա Ա՝ հարկադիր տարաբնակեցման համար (համաձայն ԱԶԲ-ի Գործառնական ձեռնարկի, 2009 թ. (ADB Operation Manual (OM) F1/OP (2009))՝ ծրագիրը դասակարգվում է որպես Կատեգորիա «Ա», եթե ավելի քան 200 անձինք կրում են զգալի ազդեցություն (վերաբնակեցում կամ եկամուտ ստեղծող գույքի ավելի քան 10%-ի կորուստ): Հակառակ դրան՝ ծրագիրը դասակարգվում է որպես Կատեգորիա «Բ», եթե զգալի ազդեցության են ենթարկվում 200-ից պակաս թվով անձինք: «Գ» կատեգորիայի ծրագրերը ՀՕՏ ազդեցություններ չեն կրում):

Նկար 1-2 Ծրագրի տեղակայվածության քարտեզ



## 1.4 Ենթաձրագիր 2. Տիչինա-Աշտարակ ճանապարհային հանգույց

### 1.4.1 Տեղակայվածություն և նկարագրություն

- 36) Սույն ՀՕՏՕ փաստաթուղթը ներկայացնում է Ծրագիր 2/Տրանշ 2-ի 7-րդ և 8-րդ հատվածները:
- 37) Տիչինա-Աշտարակ մայրուղին գտնվում է Աջափնյակ և Մալաթիա-Մեքաստիա (Երևան քաղաքի կենտրոնից մոտ 6 կմ դեպի հարավ-արևմուտք) վարչական շրջաններում, Երևանի հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան մասերում: Ծրագրի այս մասը հիմնականում բաղկացած է Տիչինա-Հին Միլիկյան (հատված 7) և Հին Միլիկյան-Աշտարակ (հատված 8) ճանապարհահատվածներից: Տե՛ս Նկար 1-3:
- 38) Այս ճանապարհահատվածները բաղկացած կլինեն կենտրոնական բաժանիչ գոտիով մոտ 4.3 կմ քաղաքային երկկողմ երթևեկելի մասի կառուցումից: Նոր ծրագծի (2.8 կմ) վրա կկառուցվի մայր/ուղքի ճանապարհ կամ կլայնացվի գոյություն ունեցող քաղաքային երթևեկելի մասը (1.5 կմ):
- 39) Սույն ՀՕՏՕ-ի շրջանակներում այդ երկու հատվածների աշխատանքները ներառում են հետևյալը՝ երկմակարդակ փոխհատումներ ուղեանցներով և իջատեղերով, գոյություն ունեցող հանգույցների վրա երկու կառուցվածքներ, տեղական նշանակության մուտքային և սպասարկման ճանապարհներ, ջրահեռացում, հենապատեր և մայրուղու հետ կապված այլ էլեմենտներ՝ ներառյալ խրամուղիների խողովակները, հաղորդողիների տեղափոխումը (ջրագիծ, կոյուղագիծ, ոռոգում, գազատար խողովակներ, հեռահաղորդակցություն, հոսանք, արտաքին լուսավորություն):

### 1.4.2 Ենթաձրագրի իրականացման ժամանակացույցը

- 40) ՀՕՏՕ-ի իրականացումը մեկնարկելու է 2017 թ. հունվարի սկզբին և ամբողջովին ավարտվելու է 2017 թ. ապրիլի վերջին: Տեղամասի հանձնումը Կապալառուին նախատեսված է 2017 թ. հունիսին, եթե ԱԶԲ-ն ապրիլի սկզբին հաստատի համապատասխանության մասին հաշվետվությունը: ԾԻԳ-ը նախատեսում է ՀՕՏՕ-ն իրականացնել և ՀՕՏ-ից ազատ հատվածները Կապալառուին տրամադրել ըստ հատվածների, հետևաբար ՀՕՏՕ իրականացման ժամանակացույցի, ինչպես նաև համապատասխանության մասին հաշվետվությունների մեջ արտացոլված է այս տրամաբանությունը:

Նկար 1-3 Տիչինա-Աշտարակ ճանապարհային հանգույց



## 1.5 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի շրջանակն ու կարգավիճակը

- 41) ՀՕՏՕ-ն հիմնված է Ենթածրագիր 2-ի մանրամասն նախագծի վրա: Այն վերջնական է և պատրաստ է իրականացման համար: Սույն ՀՕՏՕ-ն ավարտելու համար նախաձեռնվել են հետևյալ քայլերը.
- ա. ԱԵՏՏ-ների, ԱԵԱ-ների մարդահամարի և կորուստների գույքագրման/տեղազննման իրականացում,
  - բ. ազդեցության ենթակա հողերի, շենքերի, կառույցների և այլ գույքերի մանրամասն չափագրման, նկարագրության և գնահատման իրականացում,
  - գ. ԱԵՏՏ-ների 79% ընտրանքային խումբ ներառող սոցիալ-տնտեսական հետազոտության իրականացում,
  - դ. ԱԵԱ-ների հետ հանրային լսումների իրականացում,
  - ե. բոլոր տեսակի կորուստների համար փոխհատուցման մանրամասն բյուջեի պատրաստում:

## 1.6 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի նպատակը

- 42) ՀՕՏՕ-ի հիմնական նպատակն է բացահայտել Ենթածրագրի ազդեցության ենթակա անձանց և աջակցել նրանց՝ վերականգնելու իրենց նախկին կենսամակարդակը, իսկ խոցելի և տեղահանված աղքատներին աջակցել՝ առնվազն հասցնելով նրանց կենսամակարդակը ազգային նվազագույն չափանիշներին: ՀՕՏՕ-ն գնահատում է Ենթածրագրի հողի օտարման և տարաբնակեցման ազդեցությունը ԱԵԱ-ների վրա՝ համաձայն ՀՀ օրենսդրությանը և կանոնակարգերին, ԱԶԲ-ի Անվտանգության քաղաքականության հայտարարագրին (ԱՔՀ 2009 թ.) և ՀՕՏՕ-ին (N273-Ն առ 7.03.2012 թ.):
- 43) Այս նպատակներն իրագործելու համար ՀՕՏՕ-ն ներկայացնում է մանրամասներ, որոնք անհրաժեշտ են փոխհատուցման, տարաբնակեցման և վերականգնման համար՝ սահմանելով.
- ա. ԱԵԱ-ի նկարագիրը,
  - բ. Ենթածրագրի ազդեցությունը և կորուստների չափը,
  - գ. տեղեկատվության հրապարակումը, հանրային լսումները և մասնակցությունը,
  - դ. վերականգնման և փոխհատուցումների վճարման քաղաքականությունը և շրջանակը,
  - ե. բողոքների և դժգոհությունների լուծման մեխանիզմը,
  - զ. տարաբնակեցման բյուջեն և ֆինանսավորման պլանը, ներառյալ՝ կորցրած գույքերի, վերաբնակեցման և վերականգնման գնահատումն ու փոխհատուցման չափը,
  - է. տարաբնակեցման ծրագրի իրականացման համար ինստիտուցիոնալ շրջանակը և
  - ը. ՀՕՏՕ-ի իրականացման մոնիտորինգը:



## 1.7 Հողի օտարում և տարաբնակեցում. Ծրագրի իրականացմանն առնչվող պայմանները

- 44) ԱԶԲ-ի երաշխիքների պահանջների և ԲՖԳ Ծրագրի համաձայն՝ յուրաքանչյուր տրանշի հաստատումը/իրականացումը հիմնված է հետևյալ պայմանների վրա.
- ա. ԲՖԳ/Առաջին տրանշի գնահատում.** պայմանավորված է հետևյալ գործողություններով՝
    - ա) ԱԶԲ-ի և ՀՀ կառավարության համար ընդունելի ձևաչափով և բովանդակությամբ ամբողջ ԲՖԳ-ի համար ՀՕՏԾ-ի պատրաստում/ներկայացում, բ) Աղքատության և սոցիալական հարցերի նախնական գնահատում (ԱՍՀՆԳ) և գ) ԱԶԲ-ի և ՀՀ կառավարության համար ընդունելի ՀՕՏԾ-ների պատրաստում/ներկայացում Ծրագրի յուրաքանչյուր տրանշի համար, որը պահանջում է ՀՕՏ:
  - բ. Պարբերական ֆինանսավորման հայտի (ՊՖՀ) հաստատում հետագա տրանշների և յուրաքանչյուր ենթաձրագրի համար.** պայմանավորված է հետևյալ գործողություններով՝
    - ա) ՀՕՏԾ-ի վերանայում/փոփոխում/ներկայացում, բ) Աղքատության նվազեցման և սոցիալական ռազմավարության ամփոփագրի պատրաստում (ԱՆՍՌԱ), գ) յուրաքանչյուր տրանշի համար, որն ունի ՀՕՏ, պատրաստել/ներկայացնել առնվազն ՀՕՏՕ նախագծային տարբերակներ՝ փոփոխված ՀՕՏԾ-ին համահունչ, ինչպես նաև ԱԶԲ-ի և կառավարության համար ընդունելի ձևաչափով և բովանդակությամբ:
  - գ. Պայմանագրի ստորագրումը.** պայմանավորված է հետևյալ գործողություններով՝
    - ա) ՀՀ կառավարության և ԱԶԲ կողմից ՀՕՏԾ-ի հաստատում, բ) իրականացման համար պատրաստ փաստաթղթի և տեղեկագրի ներկայացում հանրությանը, գ) Անկախ մոնիթորինգի գործակալության վարձում:
  - դ. Շինարարական աշխատանքների մեկնարկը.** պայմանավորված է ՀՕՏԾ-ի ամբողջական իրականացմամբ, որն արձանագրված կլինի ԱԶԲ-ի համար ընդունելի ԱՄԳ-ի կողմից պատրաստված Համապատասխանության հաշվետվությունում:

## 1.8 Փաստաթղթի հրապարակումը

- 45) Իրականացման համար պատրաստ սույն վերջնական թարմացված ՀՕՏԾ-ն հայերեն լեզվով կտեղադրվի ԵՔ-ի պաշտոնական կայքէջում՝ ՀՀ կառավարության կողմից հաստատվելուց հետո: Անգլերեն լեզվով ՀՕՏԾ-ն կտեղադրվի ԱԶԲ-ի պաշտոնական կայքէջում՝ ԱԶԲ-ի կողմից հաստատվելուց անմիջապես հետո: ՀՕՏԾ-ի ամփոփ տեղեկագիրը հայերեն լեզվով կտրամադրվի ԱԵԱ-ներին ՀՕՏԾ-ի հաստատումից հետո:

## 1.9 Ծրագրի կասեցման օրը

- 46) Ծրագրի համար կասեցման օրը 2016 թվականի օգոստոսի 3-ն է, երբ վերջնական ՀՕՏԾ-ի համար սկսվել է գույքերի նկարագրության արձանագրությունների ստորագրումը: Արձանագրությունների ձևաչափերը ներկայացված են Հավելված 8-ում:



## 2 ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

### 2.1 Ընդհանուր տեղեկություններ

47) Սույն ՀՕՏՕ-ի մշակման համար ընդունված հիմնական սկզբունքներից մեկն այն է, որ Ծրագրի առնչությամբ փոխհատուցման բոլոր վճարումները և կենսապահովման միջոցների վերականգնմանն ուղղված աջակցությունը պետք է հիմնված լինեն ազդեցության ենթակա անձանց վրա Ծրագրի ազդեցությունների մանրամասն վերլուծության վրա: Սույն ՀՕՏՕ-ի համար տվյալները հավաքագրվել են 2016 թվականի հունվար-մարտ ամիսներին՝ ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ 2 Հին Սիլիկյան-Աշտարակ մայրուղու ճանապարհահատվածում առկա գույքի և հողատարածքների նախնական ուսումնասիրման մասին» թիվ 1531-Ն որոշման շրջանակներում, ապա թարմացվել՝ 2016թ. հունիսին, բացառիկ՝ ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 30-ի «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ 2 Հին Սիլիկյան-Աշտարակ ճանապարհահատվածում առկա որոշ գույքերի և հողատարածքների նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» թիվ 683-Ն որոշումն ընդունվելուց հետո («Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-185-Ն օրենքը նախատեսում է Օտարողի պահանջով օտարվող գույքի նախնական ուսումնասիրության հնարավորություն՝ նախքան գույքի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշման (ԲԳՀՇՈ) մեջ ներառվելը: Այն ՄՀՀ անցկացնելու հնարավորություն է տալիս՝ ԲԳՀՇՈ-ի մեջ ընդգրկվող ազդեցության ենթակա գույքերի ցանկը վերջնականացնելու, ազդեցության տեսակը և չափը որոշելու համար, որպեսզի պատրաստվեն առանձին/անհատական քարտեզներ՝ առանց ԱԵԱ-ների հետ նկարագրության արձանագրությունը ստորագրելու պարտավորության, ինչպես ԲԳՀՇՈ-ի դեպքում է): Ծրագրի ՀՕՏ ազդեցությունների չափը ճշգրտորեն գնահատելու համար իրականացվել են հետևյալ հետազոտությունները.

**ա. Մանրամասն չափագրման հետազոտություն (ՄՀՀ)**՝ ազդեցության ենթակա հողակտորների, շենքերի/շինությունների տարածքի և գույքի այլ տեսակների և քանակի ճշգրիտ նկարագրությունն ու չափագրումը:

**բ. Կորուստների գույքագրում**՝ օտարման ենթակա հողի, շենքերի/շինությունների և գույքի հատկանիշների բացահայտում և գնահատում:

**գ. Ազդեցության ենթակա գույքի փոխարինման արժեքի գնահատում**՝ ՀՕՏ բյուջեն մշակելու համար կորցրած գույքի արժեքի, եկամտի և կենսապահովման այլ աղբյուրների բացահայտում և օժանդակությունների/նպաստների սահմանում:

**դ. Մարդահամար**՝ ԱԵՏՏ-ների և դրանց անդամների ճշգրիտ քանակի բացահայտում, ներառյալ՝ որոշ տարրական առանձնահատկություններ, ինչպիսիք են՝ սեռը և էթնիկ պատկանելությունը:

**ե. Սոցիալ-տնտեսական հետազոտություն (ՄՏՀ)**՝ ազդեցության ենթակա անձանց, տնային տնտեսությունների և ձեռնարկատիրական գործունեությունների սեփականատերերի ներկա սոցիալ-տնտեսական կարգավիճակի, ինչպես նաև հանրային ծառայությունների մատչելիության, փոխհատուցման վերաբերյալ պատկերացումների և նրանց կենսամակարդակի վրա Ծրագրի ազդեցության բացահայտում:

## **2.2 Հետազոտության մեթոդաբանությունը և ազդեցության գնահատման մոտեցումները**

### **2.2.1 Հետազոտության մեթոդաբանությունը**

48) ՄՆՇՎԽ-ն ծրագրի շրջանակներում որպես ենթակապալառու վարձեց արտոնագրված չափագրող և գնահատող կազմակերպություն՝ նախորդ բոլոր հետազոտությունների արդյունքներից անկախ՝ օտարման ենթակա յուրաքանչյուր գույք չափելու և վերագնահատելու համար: Սա իրականացվեց անկախ այն տվյալներից, որոնք կարելի էր ձեռք բերել կադաստրային քարտեզներից, ՀՕՏՕ-ների նախագծային տարբերակների պատրաստման ընթացքում ձեռք բերված տվյալներից, ինչպես նաև Ծրագրի արդյունքում ազդեցության ենթակա գույքի իրավական կարգավիճակից:

49) ՄՉՀ շրջանակը և գույքերի գույքագրումը ներառում էին ներքոնշյալ գույքի կամ հատկանիշների բացահայտումը, դասակարգումը, չափագրումը և գնահատումը.

ա. հող (գյուղատնտեսական, բնակելի, արդյունաբերական և հասարակական նշանակության հողակտորներ), ներառյալ՝ այդ հողակտորների վրա բարելավումները,

բ. շենքեր/շինություններ (ներառյալ՝ դասակարգումն ըստ շենքի կատեգորիայի և շինության տեսակի),

գ. ԱԵԱ-ի կողմից հողի և շինությունների զբաղեցման իրավական կարգավիճակը,

դ. մշակաբույսերի տեսակը և զբաղեցրած տարածքը,

ե. ծառերի տեսակն ու քանակը,

զ. ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեությունները (ազդեցության տեսակը և իրավական կարգավիճակը),

է. զբաղվածության կորուստ,

ը. ազդեցության ենթակա համայնքների/հանրային գույքի քանակը, տեսակը և տարածքը:

50) ՄՉՀ-ն ներառում էր գոյություն ունեցող անշարժ գույքի՝ հողերի և նրանց վրա կառուցված շենքերի/շինությունների չափագրումը, դրանց նպատակային նշանակության, սեփականության, օգտագործման ձևի, դրանց որակի և քանակի, տեսքի և տեսակի որոշումը: Չափագրումներն իրականացվեցին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ) նախագահի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 283-N հրամանով հաստատված Հավելված 1-ի՝ անշարժ գույքի չափագրման (գրանցման) վերաբերյալ հրահանգի: Չափագրումները կատարվեցին արբանյակային տեղորոշման կայանների, տախիեոմետրի և լազերային որոնիչների միջոցով: ԱԶԲ քաղաքականության պահանջների համաձայն՝ ներկայիս փաստացի չափագրումը հիմնված է չափագրման ժամանակ ԱԵԱ-ի կողմից օգտագործվող գույքի իրական չափի վրա (Եթե իրական չափագրումը համապատասխանում է ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի կողմից տրված սեփականության վկայագրում նշված պարամետրերին (հաշվի առնելով ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի կողմից սահմանված շեղումների թույլատրելի սահմանները), ապա

սեփականության հատակագիծը ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ հանձնելու համար պատրաստվում է ՀՕՏ-ի իրականացման ընթացքում: Իսկ եթե այդպես չէ, սեփականատիրոջը տեղեկացվում է այդ մասին: Եթե սեփականատերը ցանկանում է, պատրաստվում է նոր հատակագիծ՝ ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ հանձնելու համար: Սեփականության վկայականում համապատասխան ուղղումներ կատարելուց հետո պատրաստվում է վերջնական հատակագիծ ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ հանձնելու համար և նախքան գույքի օտարման պայմանագրի ստորագրումը անշարժ գույքի վերագրանցման համար): ԱԵԱ-ներին դաշտային այցելության նախորդ օրը հեռախոսով տեղեկացվել է չափագրման օրն ու ժամը: Այս ընթացակարգն ապահովում էր ԱԵԱ-ների կողմից չափագրման գործընթացի մոնիթորինգը (մանրամասները ներկայացված են Հավելված 2-ում):

## 2.2.2 Ազդեցության գնահատման մոտեցումներ

51) Ստորև ներկայացված են սույն ՀՕՏ-ի շրջանակներում ազդեցության գնահատման ընթացքում կիրառված մոտեցումները մի քանի տիպական դեպքերի համար, մասնավորապես՝ 1. բացահայտման և գնահատման մեխանիզմներ այն դեպքերի համար, երբ ազդեցության ենթակա գույքերի մնացած մասը ենթարկվում է Ծրագրի անուղղակի ազդեցության և, հետևաբար, պետք է օտարվի և փոխհատուցվի ՀՕՏ-ի ներքո, 2. ազդեցության գնահատման և փոխհատուցման մեխանիզմներ, որոնք կիրառվում են Ծրագրի շրջանակներում ժամանակավոր ազդեցության դեպքում, 3. գնահատման և հաշվարկման մեխանիզմներ այն դեպքերի համար, երբ ըստ ՄՉՀ ազդեցության և ըստ կադաստրային քարտեզների/տվյալների գնահատված ազդեցության միջև առկա են տարբերություններ և 4. Ծրագրի շրջանակներում վերականգնման ենթակա հաղորդուղիները:

**ա. Ազդեցության ենթակա գույքերի՝ անուղղակի ազդեցության ենթակա մասերը.** Մանրամասն նախագծման վերլուծության, ինչպես նաև ՄՉՀ և գույքերի տեղագնման արդյունքում բացահայտվել է մի քանի դեպք, երբ ազդեցության ենթակա գույքերի մնացած մասը օտարումից հետո կորցնում է իր նպատակային նշանակությունը տարբեր պատճառներով, այսինքն՝ ենթարկվում է անուղղակի ազդեցության Ծրագրի ներքո: Նման դեպքերի համար անուղղակի ազդեցության ենթակա մասերը ներառվել են սույն ՀՕՏ-ի մեջ որպես օտարման և փոխհատուցման ենթակա գույքեր: Այդ դեպքերի ցանկը համապատասխան մանրամասներով բերված է Հավելված 10-ում: Ստորև ամփոփված են նշված դեպքերը.

- Դեպքեր, երբ գույքի մնացած մասն ազդեցության ենթակա գույքի օտարման հետևանքով կորցնում է իր մուտքի/ելքի հնարավորությունը (Նույն մուտքը, որը գույքն ունի Ծրագրի մեկնարկից առաջ: Մանրամասների համար տե՛ս Հավելված 10),
- Դեպքեր, երբ գույքի մնացած մասը հողի օտարման արդյունքում պիտանի չէ հետագա ֆունկցիոնալ օգտագործման համար (սրանք այն դեպքերն են, երբ հողակտորների մնացած մասը կազմում է ամբողջ հողի 14,77%-30,90%, հետևաբար, պիտանի չեն ֆունկցիոնալ օգտագործման և բնակավայրի վերականգնման համար),
- Դեպքեր, երբ շենքը կամ շինությունը ենթարկվում է մասնակի ազդեցության, և սեփականատերը չի ուզում պահել կամ վերականգնել մնացած մասը, մնացած անուղղակի ազդեցությունը ներառվել էր ուղղակի ազդեցության ենթարկված գույքերի մեջ՝ նախապես համաձայնեցնելով ԱԵԱ-ների հետ (ինչպես սահմանված է Ծրագրի ՀՕՏ-ի և ՀՕՏ-ի ՄՉՀ-ի մեթոդաբանության համաձայն):

**ա. Բոլոր ժամանակավոր ազդեցությունները համապատասխան կորուստներով ներառված են ԱԵԱ-ների ցանկում (Հավելված 11)**

**բ. Ժամանակավոր ազդեցություն.** Ծրագրի մանրամասն նախագծի համաձայն, ի լրումն ազդեցության ենթակա հողակտորների, որոնք ներառված են ՀՕՏ սահմաններում, Հատված 7-ի շրջանակներում կա հինգ դեպք և Հատված 8-ի շրջանակներում՝ մեկ դեպք, երբ Ծրագրին ժամանակավորապես անհրաժեշտ են հողակտորների որոշակի մասեր, մասնավորապես՝ այն դեպքերում, երբ ազդեցության ենթակա հողակտորների վրա նախատեսվում է անցկացնել հաղորդուղիներ, օր.՝ կոյուղի, ջրագիծ և այլն:

52) Սույն ՀՕՏՕ-ի շրջանակներում վերոնշյալ ժամանակավոր ազդեցությունների համար կիրառվող ազդեցության գնահատման և փոխհատուցման սկզբունքները հետևյալն են՝ ա. Մասնավոր սեփականություն հանդիսացող հողակտորները համարվում են օտարման և փոխհատուցման ենթակա և՛ հողի, և՛ բարելավումների մասով (նման դեպքերն իրականում համարվում են մշտական ազդեցություն): բ. ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող ազդեցության ենթակա հողակտորների դեպքում փոխհատուցում կվճարվի միայն ազդեցության ենթակա հողի վրա օգտագործողի կողմից արված բարելավումների համար, ինչպիսիք են՝ ծառերը, մշակաբույսերը, ցանկապատերը և այլն: Նման դեպքերում օգտագործողները նպաստ չեն ստանա ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողի դիմաց, այնուամենայնիվ, այդ հողակտորները պետք է ծածկվեն և վերադարձվեն օգտագործողին (այդ աշխատանքները պետք է ներառվեն Կապալառուի Պայմանագրի մեջ):

**գ. ՄՉՀ-ի և կադաստրային քարտեզների/տվյալների հիման վրա գնահատված ազդեցությունների միջև առկա տարբերություններ**

53) Կադաստրային քարտեզի և տվյալների վերլուծության, ինչպես նաև իրականացված ՄՉՀ արդյունքում (փաստացի չափագրում) բացահայտվել է երկու դեպք, երբ ազդեցության ենթակա հողակտորների փաստացի կոորդինատների հիման վրա ՄՉՀ արդյունքում բացահայտված ազդեցությունը և ազդեցության ենթակա հողակտորների կոորդինատներն ըստ կադաստրային քարտեզի/տվյալների միմյանց չեն համապատասխանում: Մասնավորապես՝ այն դեպքերում, երբ գույքերն իսկապես ենթարկվում են ազդեցության, սակայն ազդեցության ենթակա հողակտորների կոորդինատները պետք է ուղղվեն կադաստրային քարտեզի վրա և տվյալներում՝ հիմք ընդունելով փաստացի չափագրման արդյունքում ստացված կոորդինատները, ինչի հետևանքով կարող է փոխվել ազդեցությունը (ազդեցության ենթակա մակերեսը):

54) Սույն ՀՕՏՕ-ի մշակման ընթացքում վերոնշյալ դեպքերի մանրամասն նկարագիրը ներկայացվել է ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ին համապատասխան հատակագծերի հետ՝ շտկման համար, ինչը ներկայումս կատարման ընթացքում է: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն, որ սույն ՀՕՏՕ-ի մշակման ընթացքում նշված դեպքերը դեռևս շտկված չեն եղել, ազդեցությունները (ազդեցության ենթակա մակերեսը) և փոխհատուցումը հաշվարկվել և ներառվել են սույն ՀՕՏՕ-ի մեջ ներկայիս կադաստրային քարտեզի և տվյալների հիման վրա. ((Այս գույքերի ազդեցությունները և, հետևաբար, փոխհատուցման գումարը կարող են փոխվել ՀՕՏՕ-ի իրականացման ընթացքում՝ շտկված կադաստրային քարտեզի և տվյալների հիման վրա):

55) Այդ դեպքերին վերաբերող համապատասխան դիտողությունները ներառված են սույն ՀՕՏՕ-ում ներկայացված ազդեցության տվյալների մեջ: Բոլոր այդ դեպքերի մանրամասները, ինչպես նաև դրանց շտկման ընթացակարգերը, ներառված են Գլուխ 10-ում՝ «Օրինականացման և շտկող միջոցառումների պլան»-ում (ՕՇՄՊԾ):

- Ծրագրի շրջանակներում վերականգնվող հաղորդուղիներ

56) Ծրագրի շրջանակներում կվերականգնվեն միայն ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով օգտագործվող

հաղորդողինները: ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չբռնանկարված իրավունքով օգտագործվող հաղորդողինների դեպքում (սույն ՀՕՏԾ-ի շրջանակներում նման դեպքեր չեն հայտնաբերվել) ԱԵԱ-ները կփոխհատուցվեն միայն իրենց կողմից կատարված բարելավումների համար (խողովակներ և այլն) և կկարողանան դրանք վերականգնել հողակտորների մնացած մասերի վրա: Քանի որ ԱԵԱ-ների բնակելի տներն ամբողջությամբ օտարվում են, ԱԵԱ-ների կողմից փորված ազդեցության ենթակա բոլոր կոյուղահորերը ենթակա են փոխհատուցման և ներառված են ՀՕՏ ազդեցությունների և բյուջեի մեջ: Մասնակի ազդեցության ենթարկված բնակելի և ոչ բնակելի գույքերի կոյուղիններն ազդեցության չեն ենթարկվում:

## 2.3 Ազդեցությունը հողի վրա

### 2.3.1 Հողի դասակարգումն ըստ Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի Հողային օրենսգրքի

57) Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի Հողային օրենսգիրքը Հայաստանի հանրապետության հողային ֆոնդը ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների) դասակարգում է հետևյալ ինը խմբերի՝ 1) գյուղատնտեսական նշանակության, 2) բնակավայրերի/բնակելի, 3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 4) ենթադեղակայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, 5) հատուկ պահպանվող տարածքների, 6) հատուկ նշանակության, 7) անտառային, 8) ջրային և 9) պահուստային հողերի:

58) Ծրագիրը տեղակայված է քաղաքային վայրում: Ազդեցության ենթակա գրեթե բոլոր հողերը ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի կողմից դասակարգված են որպես բնակավայրեր/բնակելի հողեր: Պարզություն ապահովելու և իրական օգտագործման հետ համահունչ լինելու նպատակով սույն ՀՕՏԾ-ի շրջանակներում ազդեցության ենթակա հողի կատեգորիաները խմբավորվել են հետևյալ կերպ՝

**ա. Բնակելի հողեր**, որոնք օգտագործվում են բնակելի տների, հարակից օժանդակ շինությունների և այգեգործության նպատակով:

**բ. Պտղատու/գյուղատնտեսական նշանակության հողեր**, որոնք օգտագործվում են մրգեր, փայտանյութ/դեկորատիվ ծառեր և թփեր աճեցնելու նպատակով:

**գ. Հասարակական նշանակության հողեր**, որոնք օգտագործվում են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակներով, ինչպիսիք են՝ խանութները և բենզալցակայանները:

### 2.3.2 Հողի կորուստ

59) Ազդեցության ենթակա հողերը գտնվում են քաղաքային բնակավայրում՝ Երևանի Մալաթիա-Սեբաստիա և Աջափնյակ վարչական շրջաններում: Ընդհանուր առմամբ առկա է ազդեցության ենթակա 55 հողակտոր, որոնք ծրագրային տարածքում զբաղեցնում են **41,049.75** մ<sup>2</sup>: Ընդհանուր առմամբ 49 տնային տնտեսությունների պատկանող հողակտորներ կկրեն որոշակի ազդեցություն: Ազդեցության ենթակա հողակտորները հիմնականում բնակելի տարածքներ են, պտղատու այգիներ կամ հասարակական նշանակության հողեր: Հողի վրա ազդեցությունները ներառում են նաև Օրինականացման և շտկող միջոցառումների պլանում (ՕՇՄՕ) ներառված երկու դեպք:

60) Ազդեցության ենթակա հողակտորները բաժանվել են ներքոնշյալ երկու տեսակի՝ ըստ իրենց սեփականության կարգավիճակի.

**ա. Սեփականության իրավունքով տնօրինվող հող.** ընդհանուր առմամբ 29 հողակտոր (29,325.80մ<sup>2</sup>) պատկանում են անձանց, ովքեր ազդեցության ենթարկված հողակտորների նկատմամբ ունեն օրենքով սահմանված կարգով գրանցված սեփականության իրավունք: Սեփականության իրավունքով տնօրինվող հողակտորների մեծ մասը հասարակական նշանակության հողեր են (21): (18 հողակտոր դատարկ են, 2-ը՝ հանդիսանում են սպասարկման տարածք, որոնց վրա տեղակայված են խանութ և գրասենյակ, սակայն ազդեցության են ենթարկվում միայն դրանց աստիճանավանդակները: 1 հողակտոր կադաստրային տվյալներով հասարակական նշանակության է, սակայն օգտագործվում է բնակելի նպատակով): 8 հողակտոր ունի բնակելի նշանակություն: Սեփականության իրավունքով տնօրինվող հողակտորների թվի մեջ ներառված են այն հողակտորները, որոնք գտնվում են կադաստրային շտկման փուլում ՕՇՄՊ-ի համաձայն, մասնավորապես՝ մեկ հասարակական նշանակության հողակտոր (11.56մ<sup>2</sup>), և մեկ բնակելի նշանակության հողակտոր (3.32մ<sup>2</sup>), որոնք փաստացիորեն ենթարկվում են ազդեցության, սակայն ազդեցության ենթակա հողակտորների կորդինատները պետք է շտկվեն կադաստրային քարտեզում և տվյալներում: Սեփականության իրավունքով տնօրինվող հողակտորների ազդեցության ենթակա մակերեսը կազմում է նվազագույնը 3.32մ<sup>2</sup> և առավելագույնը 8,964.26 մ<sup>2</sup> (միջինը 963.16 մ<sup>2</sup>):

**բ. Համայնքային հող.** հող, որը պատկանում է Երևանի քաղաքապետարանին: Ընդհանուր առմամբ Ծրագրի հետևանքով ազդեցության է ենթարկվում 26 համայնքային հողակտոր (11,723.95մ<sup>2</sup>): Հետազոտության արդյունքում պարզվել է, որ այդ բոլոր հողակտորներն օգտագործվում են առանց սեփականության իրավունքի: Այդ 26 հողակտորներից 11-ն օգտագործվում են բնակելի նպատակով, 5-ը՝ որպես պտղատու այգի, իսկ 10-ը՝ ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հասարակական նշանակության հողակտորներ են, որոնք օգտագործվում են առևտրային նպատակով (7 հողակտոր օգտագործվում է որպես ձեռնարկատիրական գործունեություն, 1 հողակտոր գտնվում է ազդեցության չենթարկված օժանդակ կառույցներով գազայցակայանի հարևանությամբ, 2 հողակտոր տեղակայված են բնակելի տների հարևանությամբ, մայթի ուղղությամբ): Ազդեցության ենթակա համայնքային հողակտորների շարքում չկա ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով վարձակալված հող:

Համայնքային հողակտորների ազդեցության ենթակա մակերեսը կազմում է նվազագույնը 10.00մ<sup>2</sup> և առավելագույնը 1,954.58մ<sup>2</sup> (միջինը 450.92մ<sup>2</sup>):

61) Ծրագրի հետևանքով որևէ պետական հող ազդեցության չի ենթարկվում:

62) Համայնքային հողակտորի սեփականատիրոջը (Երևանի քաղաքապետարան) փոխհատուցում չի վճարվելու:

63) Ազդեցության ենթակա հողի մնացած բոլոր կատեգորիաների համար վճարվելու է փոխհատուցում: Հողի վրա ազդեցության վերաբերյալ տվյալները, ըստ հատվածների, ամփոփված են հետևյալ աղյուսակում:

Աղյուսակ 2-1 Հողի կրած ազդեցությունը՝ ըստ հողի տեսակի և սեփականության/հողի զբաղեցման կարգավիճակի

Հողի տեսակը		Բնակելի		Պտղատու Այգի		Հասարակական		Ընդամենը		Նշում
		Հողա-կտոր-ները	Ազդեցության ենթակա տարածքը	Հողա-կտոր-ները	Ազդեցության ենթակա տարածքը	Հողա-կտոր-ները	Ազդեցության ենթակա տարածքը	Հողա-կտոր-ները	Ազդեցության ենթակա տարածքը	
		No	մ <sup>2</sup>	No	մ <sup>2</sup>	No	մ <sup>2</sup>	No	մ <sup>2</sup>	
<b>Հատված 7</b>										
Ա. Համայնքային	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող	11	9,555.71	2	530.46	1	101.50	14	10 187,67	-
Բ. Մասնավոր	Սեփական	1	800.00	-	-	3	1,382.81	4	2 182,81	Միայն մեկ Ժամանակավոր ազդեցության ենթակա 434.21 քմ (ծածկագիր՝ 01-001-0661-0004) հասարակական հողի համար փոխհատուցում հաշվարկված չէ, քանի որ սեփականատերը համաձայնել է օգտագործել հաղորդողիների տեղադրումից հետո վերականգնված հողը՝ առանց վերջինիս օտարման:
<b>Ընդամենը (Ա+Բ)</b>		<b>12</b>	<b>10,355.71</b>	<b>2</b>	<b>530.46</b>	<b>4</b>	<b>1,484.31</b>	<b>18</b>	<b>12,370.48</b>	-
<b>Հատված 8</b>										
Գ. Համայնքային	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող	-	-	3	582.30	9	953.98	12	1,536,28	-
Դ. Մասնավոր	Սեփական	6	15,919.66	-	-	17	11,208.45	23	27,128.11	-

Հողի տեսակը		Բնակելի		Պտղատու Այգի		Հասարակական		Ընդամենը		Նշում
		Հողակտորները	Ազդեցության ենթակա տարածքը	Հողակտորները	Ազդեցության ենթակա տարածքը	Հողակտորները	Ազդեցության ենթակա տարածքը	Հողակտորները	Ազդեցության ենթակա տարածքը	
		No	մ <sup>2</sup>	No	մ <sup>2</sup>	No	մ <sup>2</sup>	No	մ <sup>2</sup>	
	ՕՇՄՊ ներքո գույքեր	1	3.32	-	-	1	11.56	2	14,88	Համաձայն փաստացի չափագրման արդյունքների՝ գույքերը էլեկտրոնային կադաստրային քարտեզում նշված հողերի սահմաններից 2,5 մ առաջ են տեղադրված: Կադաստրային կոորդինատների ուղղումից հետո ազդեցությունը (ազդեցության ենթակա մակերեսը) կարող է փոփոխվել:
<b>Ենթաընդհանուր Դ</b>		7	15,922.98	-	-	18	11,220.01	25	27,142.99	-
<b>Ընդամենը (Գ+Դ)</b>		<b>7</b>	<b>15,922.98</b>	<b>3</b>	<b>582.3</b>	<b>27</b>	<b>12,173.99</b>	<b>37</b>	<b>28,679.27</b>	-
Ընդամենը (Ա+Գ)		11	9,555.71	5	1,112.80	10	1,055.48	26	11,723.95	-
Ընդամենը (Բ+Դ)		8	16,722.98	-	-	21	12,602.82	29	29,325.80	-
<b>Ընդամենը (Ա+Բ+Գ+Դ)</b>		<b>19</b>	<b>26,278.69</b>	<b>5</b>	<b>1,112.76</b>	<b>31</b>	<b>13,658.30</b>	<b>55</b>	<b>41,049.75</b>	-



## 2.4 Ազդեցությունը շենքերի և շինությունների վրա

### 2.4.1 Բնակելի շենքեր և շինություններ

- 64) Ընդհանուր առմամբ հատվածներ 7 և 8-ում Տրանշ 2-ի ՀՕՏՕ-ն ազդելու է 44 բնակելի շենքերի և շինությունների վրա: Դրանցից 12-ը բնակելի տներ են, 32-ը՝ օժանդակ շինություններ: (Ազդեցության ենթակա 12 բնակելի տների հետ միասին ազդեցության ենթակա են նաև 32 առանձին օժանդակ շինություններ: Յուրաքանչյուր շինություն գնահատվել է առանձին, քանի որ փոխարինման արժեքը հաշվարկվել է հիմք ընդունելով յուրաքանչյուր կոնկրետ շինության նյութը:) Օժանդակ շինություններից 29-ը պատկանում են ազդեցության ենթակա հիմնական բնակելի շենքերին, մինչդեռ 3 օժանդակ շինություն պատկանում է տնային տնտեսություններին, որոնք ընդհանրապես ազդեցության ենթակա չեն: Ընդհանուր առմամբ 13 հողակտորների վրա գտնվող բոլոր բնակելի շենքերի և շինությունների ազդեցությունը կրելու են 12 տնային տնտեսություններ:
- 65) Ազդեցության ենթակա շենքերի մակերեսը կազմում է 2,136.46 մ<sup>2</sup>: Ազդեցության ենթակա շենքերը կառուցված են հիմնականում քարից և մետաղից: Օժանդակ շինությունները հիմնականում կառուցված են քարից, մետաղից, փայտից և երկաթբետոնից:

Աղյուսակ 2-2 Ազդեցությունը բնակելի շենքերի և շինությունների վրա

Անվանումը	Նյութը	Հատված 7			Հատված 8			Ընդամենը		
		No	Ընդամենը	Հողա-կտորներ	No	Ընդամենը	Հողա-կտորներ	No	Ընդամենը	Հողա-կտորներ
			մ <sup>2</sup>	No		մ <sup>2</sup>	No		մ <sup>2</sup>	No
<b>Ա. Տուն</b>										
Բնակելի տուն	Քար, մետաղ	11	1,002.02	10	1	581.70	1	12	1,583.72	11
<b>Ենթաընդհանուր (Ա)</b>		<b>11</b>	<b>1,002.02</b>	<b>10</b>	<b>1</b>	<b>581.70</b>	<b>1</b>	<b>12</b>	<b>1,583.72</b>	<b>11</b>
<b>Բ. Օժանդակ շինություն</b>										
<b>Բ1. Օժանդակ շինություններ ազդեցության ենթակա հիմնական շենքերով</b>										
Թոնրատուն	Քար	1	23.80	9	-	-	-	1	23.80	9
Ծածկ	Քար, մետաղ	5	66.70		-	-	-	5	66.70	
Անավարտ շինություն	Քար	1	129.40		-	-	-	1	129.40	
Հոր	-	1	2.30		-	-	-	1	2.30	
Մարզասրահ	Քար	1	122.80		-	-	-	1	122.80	
Մետաղական տնակ	Մետաղ	1	16.90		-	-	-	1	16.90	
Ջրաչափի հոր	Քար	3	3.14		-	-	-	3	3.14	
Սանհանգույց	Քար, մետաղ	4	5.70		-	-	-	4	5.70	
Սեպտիկ հոր	Միաձույլ ե/բ	8	54.50		-	-	-	8	54.50	
Ներքնագավիթ	-	1	14.70		-	-	-	1	14.70	
Օժանդակ շինություն	Քար, փայտ	3	102.00		-	-	-	3	102.00	
<b>Ենթաընդհանուր</b>	-	<b>29</b>	<b>541.94</b>	-	-	-	<b>29</b>	<b>541.94</b>		

Անվանումը	Կույթը	Հատված 7			Հատված 8			Ընդամենը		
		No	Ընդամենը	Հողա-կտորներ	No	Ընդամենը	Հողա-կտորներ	No	Ընդամենը	Հողա-կտորներ
			մ <sup>2</sup>	No		մ <sup>2</sup>	No		մ <sup>2</sup>	No
(Բ1)										
<b>Բ2. ԱԵՏՏ-ների օժանդակ շինություններ առանց բնակելի շենքերի կորստի</b>										
Օժանդակ շինություն	Քար	1	6.80	1	-	-	-	1	6.80	1
Լողավազան	Քար	1	1.30		-	-	-	1	1.30	
Աստիճանավանդակ	-	1	2.70		-	-	-	1	2.70	
<b>Ենթաընդհանուր (Բ2)</b>	-	<b>3</b>	<b>10.80</b>	<b>1</b>	-	-	-	<b>3</b>	<b>10.80</b>	
<b>Ենթաընդհանուր (Բ1+Բ2)</b>	-	<b>32</b>	<b>552.74</b>	<b>10</b>	-	-	-	<b>32</b>	<b>552.74</b>	<b>10</b>
<b>Ընդամենը</b>	-	<b>43</b>	<b>1,554.76</b>	<b>12</b>	<b>1</b>	<b>581.70</b>	<b>1</b>	<b>44</b>	<b>2,136.46</b>	<b>13</b>

#### 2.4.2 Ոչ բնակելի շենքեր և շինություններ

66) Ընդհանուր առմամբ ազդեցության ենթակա են 22 ոչ բնակելի շինություններ 607.68 մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով, որոնցից 15-ն օգտագործվում են ձեռնարկատիրական գործունեության համար, 7-ը ոչ բնակելի/ոչ ձեռնարկատիրական շինություններ են, որոնք ԱԵՏ-ների կողմից օգտագործվում են անձնական նպատակներով: Ազդեցության ենթակա 15 հիմնական և օժանդակ ձեռնարկատիրական շինությունները պատկանում են 7 հողակտորների վրա տեղակայված 5 ձեռնարկատիրական գործունեություններին: Այդ շինությունների ընդհանուր մակերեսը կազմում է 366.6մ<sup>2</sup>, որից 96.57մ<sup>2</sup> ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող տարածք է: Բոլոր 5 ձեռնարկատիրական գործունեությունները առևտրային բնույթի են: (Սույն ՀՕՏՕ-ի շրջանակներում առևտրային են համարվում այն ձեռնարկատիրական գործունեությունները, որոնք աշխատողներ վարձելով՝ տրամադրում են ծառայությունների մատուցում, իրականացում են առևտուր և սննդի արտադրություն): 7 ոչ ձեռնարկատիրական շինություններն օգտագործվում են անձնական նպատակներով: Ազդեցության ենթակա շինությունները կառուցված են հիմնականում քարից, մետաղից և երկաթբետոնից:

**Աղյուսակ 2-3 Ազդեցությունը ոչ բնակելի շենքերի և շինությունների վրա**

No	Շինության տեսակը	Նյութը	Հատված 7				Հատված 8				Ընդամենը						
			No	ՀՀ օրենսդրության պահանջների անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով օգտագործվող մ²	ՀՀ օրենսդրության պահանջների անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող մ²	Ընդամենը մ²	Հողակտորների No	No	ՀՀ օրենսդրության պահանջների անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով օգտագործվող մ²	ՀՀ օրենսդրության պահանջների անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող մ²	Ընդամենը մ²	Հողակտորների No	No	ՀՀ օրենսդրության պահանջների անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով օգտագործվող մ²	ՀՀ օրենսդրության պահանջների անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող մ²	Ընդամենը մ²	Հողակտորների No
<b>Ա. Ոչ ձեռնարկատիրական շինություններ</b>																	
1	Հոր	-	-	-	-	-	1	1	-	209.00	209.00	4	1	-	209.00	209.00	5
2	Աստիճանավանդակ	Միաձույլ է/բ	-	-	-	-		3	1.21	0.03	1.24		3	1.21	0.03	1.24	
3	Սանհանգույց	Քար	1	-	2.20	2.20		-	-	-	-		1	-	2.20	2.20	
4	Տաղավար	-	1	-	15.20	15.20		-	-	-	-		1	-	15.20	15.20	
5	Զգործող խանութ	Քար	1	-	13.40	13.40		-	-	-	-		1	-	13.40	13.40	
<b>Ենթաընդհանուր (Ա)</b>			<b>3</b>	<b>-</b>	<b>30.80</b>	<b>30.80</b>		<b>4</b>	<b>1.21</b>	<b>209.03</b>	<b>210.24</b>		<b>7</b>	<b>1.21</b>	<b>239.80</b>	<b>241.04</b>	
<b>Բ. Ձեռնարկատիրական շինություններ</b>																	
Ձեռնարկատիրական գործունեություն N 1	Ավտոյուղերի խանութ	Քար, մետաղ	-	-	-	-	-	1	47.80	-	47.80	2	1	47.80	-	47.80	2
	Ավտովագման կետ	Քար	-	-	-	-		1	40.50	-	40.50		1	40.50	-	40.50	
	Պահեստ	Քար	-	-	-	-		2	40.40	-	40.40		2	40.40	-	40.40	
	Տեխսպասարկման հոր	Միաձույլ է/բ	-	-	-	-		2	-	5.40	5.40		2	-	5.40	5.40	
	Ծածկ	-	-	-	-	-		2	3.80	45.00	48.80		2	3.80	45.00	48.80	
	Սանհանգույց	Քար	-	-	-	-		1	-	2.80	2.80		1	-	2.80	2.80	
Ձեռնարկատիրական գործունեություն N 2	Տաղավար	Մետաղ	-	-	-	-	1	-	10.00	10.00	1	1	-	10.00	10.00	1	

No	Ծիւրային տեսակը	Նյութը	Հատված 7					Հատված 8					Ընդամենը				
			No	ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմանը՝ անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով օգտագործվող մե	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմանը՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող մե	Ընդամենը մե	Հողակտորների No	No	ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմանը՝ անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով օգտագործվող մե	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմանը՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող մե	Ընդամենը մե	Հողակտորների No	No	ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմանը՝ անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով օգտագործվող մե	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմանը՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող մե	Ընդամենը մե	Հողակտորների No
նյութուն N 2																	
Ձեռնարկա տիրական գործունեություն N 3	Ավտոմասերի խանութ	Քար	-	-	-	-	-	2	116.97	-	116.97	2	2	116.97	-	116.97	2
Ձեռնարկա տիրական գործունեություն N 4	Ծաղկի խանութ	Քար	-	-	-	-	-	1	-	28.77	28.77	1	1	-	28.77	28.77	1
Ձեռնարկա տիրական գործունեություն N 5	Տեխսպասարկ ման կետ	Քար	-	-	-	-	-	1	20.60	-	20.60	1	1	20.60	-	20.60	1
	Տեխսպասարկ ման հոր	Միաձույլ ե/բ	-	-	-	-	-	1	-	4.60	4.60		1	-	4,60	4,60	
<b>Ենթաընդհանուր (Բ)</b>			-	-	-	-	-	<b>15</b>	<b>270.07</b>	<b>96.57</b>	<b>366.60</b>	<b>7</b>	<b>15</b>	<b>270.07</b>	<b>96.57</b>	<b>366.6</b>	<b>7</b>
<b>Ընդամենը</b>			<b>3</b>	<b>-</b>	<b>30.80</b>	<b>30.80</b>	<b>1</b>	<b>19</b>	<b>271.28</b>	<b>305.6</b>	<b>576.88</b>	<b>11</b>	<b>22</b>	<b>271.28</b>	<b>336.4</b>	<b>607.68</b>	<b>12</b>

### 2.4.3 Ապամոնտաժման ենթակա շինություններ

- 67) Սույն հատվածների շրջանակներում ապամոնտաժման ենթակա որևէ շինություն չի ենթարկվում ազդեցության:

### 2.4.4 Ցանկապատեր և այլ բարելավումներ

- 68) Ընդհանուր առմամբ հատվածներ 7 և 8-ում Տրանշ 2-ի ՀՕՏՕ-ի ազդեցությանը կենթարկվի 861.15 մ ցանկապատ և 2,015.77մ<sup>2</sup> երկաթբետոնե/քարե պատ/ցանկապատ՝ 21 հողակտորների վրա: Նշված ընդհանուր երկարությունից ցանկապատի 861.15 մ տարբեր տեսակի մետաղներից է, որից 286.85 մ մետաղից է, իսկ 574.3 մ՝ երկաթբետոնից, մետաղական բազրիքներով և շիֆերով: Ընդհանուր առմամբ ազդեցության կենթարկվի 21 տնային տնտեսություն, ներառյալ՝ ժամանակավոր ազդեցությունները, որոնք կփոխհատուցվեն փոխարինման արժեքով:

Աղյուսակ 2-4 Ազդեցությունը ցանկապատերի և պատերի վրա

Նյութը	Հատված 7		Հատված 8		Ընդամենը	Ընդամենը
	Երկարությունը	Մակերեսը	Երկարությունը	Մակերեսը	Երկարությունը	Մակերեսը
	մ	մ <sup>2</sup>	մ	մ <sup>2</sup>	մ	մ <sup>2</sup>
Մետաղ Ա	179.85	-	-	-	<b>179.85</b>	-
Մետաղ Բ	107.00	-	-	-	<b>107.00</b>	-
Միաձույլ ե/բ Ա	-	27.00	-	-	-	<b>27.00</b>
Միաձույլ ե/բ Բ	-	3.60	-	-	-	<b>3.60</b>
Միաձույլ ե/բ Գ	-	-	-	7.50	-	<b>7.50</b>
Շիֆեր, Միաձույլ ե/բ	24.00	-	-	-	<b>24.00</b>	-
Ճաղավանդակ Միաձույլ ե/բ Ա	-	-	83.30	-	<b>83.30</b>	-
Ճաղավանդակ Միաձույլ ե/բ Բ	-	-	467.00	-	<b>467.00</b>	-
Տուֆ/Քար	-	196.80	-	835.90	-	<b>1,032.70</b>
Քար	-	806.87	-	-	-	<b>806.87</b>
Տուֆ, Միաձույլ ե/բ, Երեսպատված	-	138.10	-	-	-	<b>138.10</b>
<b>Ընդամենը</b>	<b>310.85</b>	<b>1,172.37</b>	<b>550.30</b>	<b>843.40</b>	<b>861.15</b>	<b>2,015.77</b>

- 69) ԱԵԱ-ները որոշ այլ բարելավումներ են կատարել 21 հողակտորների վրա, որոնք չափազրվել և հաշվարկվել են փոխհատուցման համար: Դրանք բետոնե, ասֆալտապատ, մետաղական, մետաղապլաստմասե, բազալտե և աղյուսապատ մակերեսներ են, որոնք կառուցվել են ԱԵԱ-ների կողմից ազդեցության ենթակա հողակտորների վրա: Բարելավումներից առավել մեծ ազդեցություն են կրելու բետոնապատ և ասֆալտապատ տարածքները, որոնց մակերեսը կազմում է 1,331.94մ<sup>2</sup>: Ազդեցության ենթակա են ընդամենը 1,509.01 մ<sup>2</sup>, 126 մ և 7 բարելավումներ, որոնց համար վճարվելու է փոխհատուցում, ներառյալ՝ ժամանակավոր ազդեցությունները:

**Աղյուսակ 2-5 Ազդեցությունը բարելավումների վրա**

Տեսակը	Նյութը	Հողակտորները	Տարածքը	Երկարու- թյունը	No
		No	մ <sup>2</sup>	մ	
<b>Հատված 7</b>					
Տարածք	Ասֆալտ	6	656.35	-	-
Տարածք	Բետոնապատ	7	462.86	-	-
Տարածք	Տրավերտինե սալիկներ	1	19.62	-	-
Տարածք	Բազալտ/մարմարե սալիկներ	1	17.90	-	-
Տարածք	Բազալտե սալիկներ	1	80.65	-	-
Եզրաքար Ա	Քար/տուֆ	1	-	22	-
Հարթակ	Բազալտ	1	3	-	-
Թոնիք	Կավ	1	-	-	1
Բակի բարեկարգում	Քար/բետոնապատ	1	8	-	-
Դարպաս	Մետաղ	1	-	-	1
Մեղան	Քար	2	-	-	2
Խողովակ d=100մմ	Մետաղապլաստ	1	-	25	-
Խողովակ d=35 մմ	Մետաղապլաստ	1	-	25	-
Խողովակ d=700 մմ	Ասբոցեմենտ	1	-	20	-
<b>Ենթարևոյհանուր (Ա)</b>		<b>12*</b>	<b>1,248.38</b>	<b>92</b>	<b>4</b>
<b>Հատված 8</b>					
Տարածք	Ասֆալտ	2	27.97	-	-
Տարածք	Բետոնապատ	1	2	-	-
Տարածք	Բետոնե սալիկներ	3	182.76	-	-
Տարածք	Բազալտե սալիկներ	1	47.9	-	-
Եզրաքար	Բետոնե	2	-	34	-
Ոռոգման համակարգ	Մետաղապլաստ	3	-	-	3
<b>Ենթարևոյհանուր (Բ)</b>		<b>9*</b>	<b>260.63</b>	<b>34</b>	<b>3</b>
<b>Ընդամենը (Ա+Բ)</b>		<b>21*</b>	<b>1,509.01</b>	<b>126</b>	<b>7</b>
* Ընդհանուր քանակը հաշվարկվել է առանց կրկնահաշվարկի, քանի որ միևնույն հողակտորի վրա արված են մի քանի տեսակի բարելավումներ:					

## 2.4.5 Շինությունների վրա ազդեցությունները և վերաբնակեցման ռազմավարությունը

- 70) Համաձայն ՀՕՏԾ-ի՝ բոլոր շենքերը (մասնակիորեն կամ ամբողջությամբ ազդեցության ենթակա) կստանան լիարժեք փոխհատուցում: Ծրագրի համար ընդունված վերաբնակեցման ռազմավարությունը հիմնված է փոխարինման արժեքի փոխհատուցման սկզբունքի վրա (շինանյութերի նյութերի, աշխատուժի, նյութերի տեղափոխման տրանսպորտային ծախսերի շուկայական արժեք և այլ համապատասխան ծախսեր): ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով օգտագործվող ազդեցության ենթակա շինությունների դեպքում սեփականատերերը կստանան փոխարինման արժեքին գումարած 15%-ի չափով փոխհատուցում, ինչպես նախատեսված է օրենքով: Ազդեցության ենթակա բնակելի շենքերի դեպքում ԱԵԱ-ները կստանան փոխարինման արժեքի 115%-ը՝ անկախ այն հանգամանքից, թե՛ արդյոք շենքերն օգտագործվում են ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով, թե՛ ոչ: ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով օգտագործվող հողակտորների վրա անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով շինությունների առկայության դեպքում ԱԵԱ-ները կստանան փոխհատուցում՝ շինության լիարժեք փոխարինման արժեքի չափով: ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողակտորների վրա անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով շինությունների առկայության դեպքում ԱԵԱ-ները կստանան փոխհատուցում՝ փոխարինման արժեքից հանած օրինականացման գործընթացին առնչվող ծախսերը, սակայն ոչ ավել, քան փոխհատուցման ողջ գումարի 20%-ի չափով:
- 71) Սույն ՀՕՏԾ-ի շրջանակում պետք է քանդվեն 12 բնակելի և 15 ձեռնարկատիրական գործունեության իրականացման շենք, և նախատեսվում է 89 ԱԵԱ-ների վերաբնակեցում: 12 բնակելի տների կորուստն ազդելու է 12 ԱԵՏՏ-ների վրա (56 ԱԵԱ): Մշտական ազդեցության ենթակա ոչ բնակելի 15 շինության կորուստն ազդելու է հինգ ձեռնարկատիրական գործունեության վրա: Արդյունքում 5 ԱԵՏՏ-ներ (33 ԱԵԱ) կտեղափոխեն իրենց ձեռնարկատիրական գործունեությունները: Ստորև նշված են այն ԱԵՏՏ-ները/ԱԵԱ-ները, որոնք վերաբնակեցվելու են Ծրագրի շրջանակներում՝ անկախ ձեռնարկատիրական գործունեության կարգավիճակից (հարկային հայտարարագրով, թե՛ առանց հարկային հայտարարագրի): Ձեռնարկատիրական գործունեությունների վրա ընդհանուր ազդեցության մանրամասները, ինչպես նաև կենսապահովման միջոցների վերականգնման ռազմավարությունը ներկայացված են Գլուխ 7-ում՝ «Փոխհատուցում, վերաբնակեցում և եկամտի վերականգնում»:

Աղյուսակ 2-6 Ազդեցությունը վերաբնակեցման վրա

Վերաբնակեցման ազդեցություն	Հատված 7		Հատված 8		Ընդամենը	
	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ
	No	No	No	No	No	No
Ձեռնարկատիրական գործունեության իրականացման վայրի տեղափոխում (մշտական ազդեցության ենթակա)	-	-	5	33	5	33
Վերաբնակեցում	11	48	1	8	12	56
<b>Ընդամենը</b>	<b>11</b>	<b>48</b>	<b>6</b>	<b>41</b>	<b>17</b>	<b>89</b>

- 72) Իրենց բնակավայրերից վերաբնակեցման ենթակա ԱԵԱ-ների վրա ազդեցության չափի մասին ամբողջական և հստակ պատկերացում կազմելու համար մանրամասն նկարագրված կորուստները ներկայացված են հետևյալ աղյուսակում: Իրենց տները կորցնելու են 12 տնային տնտեսություն, որոնք բաղկացած են 56 ընտանիքնի անդամներից:



**Աղյուսակ 2-7 Մանրամասնորեն ներկայացված ազդեցությունները բնակավայրերից վերաբնակեցման վրա**

No	Ազդեցության ենթակա հող						Ազդեցության ենթակա շինություն		Ազդեցության ենթակա ցանկապատ		Ազդեցության ենթակա բարելավումներ			Ազդեցության ենթակա տնային սնտեսություններ		
	Սեփականության տեսակը	Օգտագործման կարգավիճակը	Ընդհանուր մակերեսը, մ²	Ազդեցության ենթակա մակերեսը, մ²	Ազդեցության ենթակա % ընդհանուրի մեջ	Հողի տեսակը	Անվանումը	մ²	Նյութը	Ազդեցության ենթակա գ.մ/մ²	Անվանումը	Նյութը	Մակերեսը, մ², մ², No	ԱԵՏՏ-ների No	ԱԵՏՏ անդամների թիվը	Վերաբնակեցում
<b>Հատված 7</b>																
1	Համայնքային (ԵՔ)	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող	1,954.58	1,954.58	100.00	Բնակելի	Բնակելի տուն	61,50	Մետաղ	90.00	Խողովակ d=700մմ	Ասբցեմենտ	20.00	1	6	Վերաբնակեցում
							Մարզասրահ	122,80								
							Անավարտ շինություն	129,40								
							Օժանդակ շինություն	77,20								
							Թոնիք	23,80								
2	Համայնքային (ԵՔ)	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող	853.25	853.25	100.00	Բնակելի	Բնակելի տուն	42.00	Տուֆ, քար	196,80	Տարածք	Ասֆալտ	40.00	1	3	Վերաբնակեցում
							Ծածկ	26,10								
							Ջրաչափի հոր	1.00	Միաձույլ ե/բ	27.00	Տարածք	Բետոնապատ	100.00			
							Սեպտիկ հոր	4,40								
3	Համայնքային (ԵՔ)	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող	940.85	940.85	100.00	Բնակելի	Բնակելի տուն	272,10	Տուֆ, Միաձույլ ե/բ, Երեսպատված	138,10	Հարթակ	Բազալտե սայիկներ	3.00	1	5	Վերաբնակեցում
							Ջրաչափի հոր	1,50			Տարածք	Ասֆալտ	99.00			
							Սեպտիկ հոր	7,02			Տարածք	Բետոնապատ	83.12			
4	Համայնքային (ԵՔ)	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող	516.00	516.00	100.00	Բնակելի	Բնակելի տուն	212,60	-	-	Խողովակ d=35մմ	Մետաղապլաստ	25.00	1	5	Վերաբնակեցում
							Ջրաչափի հոր	0,64			Տարածք	Ասֆալտ	71.78			
							Սեպտիկ հոր	6.00			Խողովակ d=100մմ	Մետաղապլաստ	25.00			
							Սեպտիկ հոր	9.00								

No	Ազդեցության ենթակա հող						Ազդեցության ենթակա շինություն		Ազդեցության ենթակա ցանկապատ		Ազդեցության ենթակա բարեկալումներ			Ազդեցության ենթակա տնային տնտեսություններ		
	Մեխանիկական տեսակը	Օգտագործման կարգավիճակը	Ընդհանուր մակերեսը, մ²	Ազդեցության ենթակա մակերեսը, մ²	Ազդեցության ենթակա % ընդհանուրի մեջ	Հողի տեսակը	Անվանումը	մ²	Նյութը	Ազդեցության ենթակա գ.մ/մ²	Անվանումը	Նյութը	Մակերեսը, մ², մ³, No	ԱԵՏՏ-ների No	ԱԵՏՏ անդամների թիվը	Վերաբնակեցում
5	Համայնքային (ԵՔ)	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող	1,000.00	1,000.00	100.00	Բնակելի	Բնակելի տուն	21,40	Քար	110,23	-	-	-	1	3	Վերաբնակեցում
6	Համայնքային (ԵՔ)	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող	1,000.00	1,000.00	100.00	Բնակելի	Բնակելի տուն	176.80	Շիֆեր, Միաձույլ Ե/Բ	24.00	Տարածք	Բազալտե սալիկներ	80.65	1	4	Վերաբնակեցում
							Մետաղական տնակ	16.90		Մետաղ						
							Ծածկ	22.10	Քար	21.60	Սեղան	Քար	1.00			
							Սանհանգույց	1.00								
							Սեպտիկ հոր	7.02								
7	Համայնքային (ԵՔ)	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող	1,000.00	1,000.00	100.00	Բնակելի	Բնակելի տուն	86.52	Քար	201.60	Սեղան	Քար	1.00	2	8	Վերաբնակեցում
							Բնակելի տուն	21.10								
							Հոր	2.30			Տարածք	Բազալտ, մարմար	17.90			
							Սանհանգույց	1.40								
							Օժանդակ շինություն	10.80			Տարածք	Ասֆալտ	39.87			
							Սեպտիկ հոր	7.02								
8	Համայնքային (ԵՔ)	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող	555.87	555.87	100.00	Բնակելի	Բնակելի տուն	11.10	Քար	98.64	Տարածք	Բետոնապատ	16.40	1	2	Վերաբնակեցում
							Ծածկ	7.60								
							Սանհանգույց	2.10								
9	Համայնքային	ՀՀ օրենսդրության	359.70	359.70	100.00	Բնակելի	Բնակելի տուն	24.8	Քար	99.00	Դարպաս	Մետաղ	1.00	1	5	Վերաբնակեցում

No	Ազդեցության ենթակա հող						Ազդեցության ենթակա շինություն		Ազդեցության ենթակա ցանկապատ		Ազդեցության ենթակա բարեկալումներ			Ազդեցության ենթակա տնային տնտեսություններ		
	Սեփականության տեսակը	Օգտագործման կարգավիճակը	Ընդհանուր մակերեսը, մ²	Ազդեցության ենթակա մակերեսը, մ²	Ազդեցության ենթակա % ընդհանուրի մեջ	Հողի տեսակը	Անվանումը	մ²	Նյութը	Ազդեցության ենթակա գ.մ/մ²	Անվանումը	Նյութը	Մակերեսը, մ², մ³, No	ՄԵՏՏ-ների No	ՄԵՏՏ անդամների թիվը	Վերաբնակեցում
(ԵՔ)		պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող					Ներքնագավիթ	14.7	Մետաղ	7.50	Տարածք	Բետոնապատ	43.00			
							Ծածկ	4.00	Միաձույլ է/բ	Բակի բարեկարգում	Քար, բետոն	8.00				
							Սեպտիկ հոր	7.02								
10	Համայնքային (ԵՔ)	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող	637.46	637.46	100.00	Բնակելի	Բնակելի տուն	72.10	Քար	111.10	Տարածք	Բետոնապատ	75.43	1	7	Վերաբնակեցում
							Օժանդակ շինություն	14.00								
							Ծածկ	6.90	Մետաղ	52.35						
							Մանհանգույց	1.20								
							Սեպտիկ հոր	7.02								
<b>Հատված 8</b>																
11	Մասնավոր	Անմիջապես սեփականատիրոջ կողմից օգտագործվող	800.00	800.00	100.00	Բնակելի	Բնակելի տուն	581.70	Տուֆ, քար	237.50	-	-	-	1	8	Վերաբնակեցում

## 2.5 Մշակաբույսեր

- 73) Թեև ազդեցության ենթակա տարածքը քաղաքային է, որոշ բնակիչներ բանջարեղեն են աճեցնում իրենց տնային տնտեսությունն ապահովելու համար: Սովորաբար, բանջարեղենն աճեցնում են պտղատու այգիներում, ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողակտորների վրա կամ տնամերձ այգիներում, ԱԵՍ-ների բնակավայրերի մոտ: Այնուամենայնիվ, այստեղ «գյուղատնտեսական» կորուստ հասկացությունն ունի այլ իմաստ, քան գյուղատնտեսական կորուստը գյուղական բնակավայրերում: Հատվածներ 7 և 8-ում Տրանշ 2-ի ՀՕՏԾ-ի շրջանակներում ազդեցության կենթարկվեն 14 ԱԵՏՏ-ների կողմից օգտագործվող 875 մ<sup>2</sup> հողակտորների մշակաբույսեր: 11 ԱԵՏՏ-ի համար գյուղատնտեսությունն ապրուստի միջոց չէ, այլ ուղղակի հավելյալ միջոց իրենց տնային տնտեսությունների համար: Սոցիալ-տնտեսական տվյալները ցույց են տալիս, որ գյուղատնտեսական գործունեությունը եկամտի հիմնական աղբյուր է հանդիսանում 3 ԱԵՏՏ-ի համար, որոնցից միայն 1 ԱԵՏՏ-ի պտղատու այգին է ազդեցության ենթարկվում Ծրագրի հետևանքով: Այդ 1 ԱԵՏՏ-ն ունի թե՛ գյուղատնտեսական եկամտի, թե՛ բնակավայրի կորուստ, որի համար վերականգնման (զգալի ազդեցության և խոցելիության համար նպաստներ) և կենսապահովման վերականգնման նպաստներ են հաշվարկվել: Առավել հաճախ աճեցվող մշակաբույսերն են գազոնը, ելակը, լոլիկը, կարտոֆիլը, վարունգը և կանաչին: Ծրագրի հետևանքով ազդեցության է ենթարկվում 39 մ<sup>2</sup> տարածք, որի վրա դեկորատիվ ծաղիկներ են աճեցվում: Այսպիսով, տարբեր տեսակի բանջարեղենների տարեկան ընդհանուր կորուստը կազմում է 1,024.70 կգ:

Աղյուսակ 2-8 Ազդեցությունը մշակաբույսերի վրա

Մշակաբույսի տեսակը	Տարեկան արտադրողականությունը	Հատված 7		Հատված 8		Ընդհանուր ազդեցության ենթակա տարածքը	Ընդհանուր կորուստը
		Ազդեցության ենթակա տարածքը	Ընդհանուր կորուստը	Ազդեցության ենթակա տարածքը	Ընդհանուր կորուստը		
		կգ/մ <sup>2</sup>	մ <sup>2</sup>	կգ	կգ		
- 116) Բողոքների և դժգոհությունների ժամանակին, թափանցիկ և գոհացուցիչ քննարկումն ու ազդեցության ենթակա անձանց բողոքների ներկայացման համար բոլոր հնարավոր միջոցների տրամադրումն ապահովելու նպատակով նախքան ՀՕՏՕ-ի իրականացման մեկնարկը ԾԻԳ-ը կստեղծի բողոքների և դժգոհությունների լուծման պաշտոնական մեխանիզմ: Բողոքների լուծման այս պաշտոնական մեխանիզմի մեջ կներգրավվեն մի քանի կողմեր, օրինակ՝ ԾԻԳ-ը, Բողոքների դիտարկման խումբը (ԲԴԽ) և Երևանի քաղաքապետարանը: Բողոքների դիտարկման խմբի օգնությամբ և բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ կկատարվեն բողոքները ԾԻԳ-ի մակարդակում լուծելու փորձեր: ԲԴԽ-ն կապահովի ծրագրի ազդեցությունը կրող անձանց բողոքների գրանցման և կարգավորման արդարությունն ու թափանցիկությունը:
- 117) Ազդեցության ենթակա անձինք ԲԼՄ-ի գոյության մասին տեղեկացվել են ՀՕՏՕ-ի նախապատրաստման փուլում, հանրային լուսման ժամանակ: ՀՕՏՕ-ի հաստատումից հետո ազդեցության ենթակա անձինք ՀՕՏՕ-ի տեղեկագրի միջոցով կտեղեկանան վերանայված ԲԼՄ-ի մասին:
- 118) Տարաբնակեցման փուլում ստացված դժգոհությունների ու բողոքների կարգավորումը կկատարվի հետևյալ քայլերի և գործողությունների միջոցով.

#### **Քայլ 1**

- 119) Ծրագրի ազդեցությանը ենթարկված անձը կարող է բողոք-նամակի, էլ. փոստի կամ տեղային կիզակետի (ԱԵԱ-ների ներկայացուցչի/ների) (մանրամասները ներկայացված են ենթագլուխ 5.3-ում) միջոցով իր առաջարկները, մտահոգությունները կամ դժգոհությունները ներկայացնել նախ ԾԻԳ-ին: ԾԻԳ-ը ստանում և լուծում է տալիս կամ պատասխանում/արձագանքում է ազդեցության ենթակա անձանց բողոքներին: Բողոքներն առաջին հերթին կընդունի ԾԻԳ-ը: ԾԻԳ-ի ծրագրի ղեկավարը բողոքները կուղղի համապատասխան մասնագետին: Բողոքը ստորագրելու է ազդեցության ենթակա անձը, և այն պարունակելու է հետևյալ տեղեկությունները՝ 1) բողոքի բնույթը, 2) վայրը և 3) բողոքարկողի ամբողջական հասցեն:
- 120) Խնդիրը կկարգավորվի բողոքը և համապատասխան փաստաթղթերը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում (եթե ՀՀ օրենսդրությամբ այլ ժամկետներ սահմանված չեն): Պատասխաններն ազդեցության ենթակա անձանց կտրվեն գրավոր տեսքով: Եթե գործը բարդ է և հետաքննություն է պահանջում (օրինակ՝ տեխնիկական փորձագետների մանրագնին հետազոտում կամ պետական կամ հավաստագրված մասնավոր կազմակերպությունների իրավաբանական եզրակացություն), ապա բողոքի ուսումնասիրման ժամանակաշրջանը կարող է երկարաձգվել: Այդպիսի դեպքերում գրավոր ծանուցում կուղարկվի բողոքարկուին, որտեղ կբացատրվեն երկարաձգման պատճառները, կնկարագրվի գործընթացը և կնշվի ուսումնասիրության արդյունքների ներկայացման ակնկալվող օրը:
- 121) Եթե պատասխանը չի գոհացնում ազդեցության ենթակա անձին, կամ ԾԻԳ-ի պատասխանատու անձնակազմը ԱԵԱ-ի բողոքին պատասխանելու համար լրացուցիչ կարողությունների կարիք ունի, ապա կարող է ձևավորվել Բողոքների դիտարկման խումբ (ԲԴԽ)՝ գործի համապարփակ, անաչառ և թափանցիկ քննարկումն ապահովելու համար: (Ի պատասխան՝ ԱԵԱ-ները գրավոր կերպով կտեղեկացվեն հաջորդ ԲԼՄ-ի հնարավորությունների մասին: Պատասխան նամակում նշված կլինի, որ ԱԵԱ-ն պետք է

գրավոր կերպով ԾԻԳ-ին տեղեկացնի իր դժգոհության և ԲԴԽ կազմելու իր ցանկության մասին) ԲԴԽ-ի՝ ազդեցության ենթակա անձի բողոքի ուսումնասիրության և գլխավոր ելույթի մասին դատողության օրինական լինելու համար պետք է ԲԴԽ-ի կազմը լինի հավասարակշռված և ներառի անկախ դիտորդ՝ բողոքի ուսումնասիրման գործընթացի անկողմնակալությունն ու թափանցիկությունն ապահովելու համար: Առաջարկվում է ԲԴԽ-ի հետևյալ կազմը՝

<b>Անդամներ</b>	<b>Կարգավիճակը</b>
ա. ԾԻԳ-ի ներկայացուցիչ	Նախագահ
բ. Անվտանգության անձնակազմի ներկայացուցիչ (ԾԻԳ)	Անդամ
գ. Տեղական կառավարման մարմինների ներկայացուցիչ՝ հարկ եղած դեպքում	Անդամ
դ. Վկայագրված տեխնիկական փորձագետ՝ հարկ եղած դեպքում	Անդամ
ե. Ինժեների կամ Կապալառուի ներկայացուցիչ՝ հարկ եղած դեպքում	Անդամ
զ. Ազդեցության ենթակա անձանց ներկայացուցիչ	Անդամ
է. Անկախ կողմ (օրինակ՝ հասարակական կազմակերպություն)	Դիտորդ

122) Բողոքի քննարկման արդյունավետ ընթացքին նպաստելու համար պետք է մանրագնի մշակվեն ու բացատրվեն ԲԴԽ-ի յուրաքանչյուր անդամի դերն ու պարտականությունները:

123) ԲԴԽ-ի կողմից բողոքների ուսումնասիրման գործընթացի ժամանակ կարող են ներգրավվել մի քանի փորձագետներ, օրինակ՝ գույքի գնահատման փորձագետ, գյուղատնտես, չափումների մասնագետ, նախագծային ինժեներ և այլն՝ ըստ յուրաքանչյուր դեպքի անհրաժեշտության: Ազդեցության ենթակա անձի պահանջով կարող է հրավիրվել անկախ կողմ (օրինակ՝ հասարակական կազմակերպության ներկայացուցիչ):

124) Խնդրի կարգավորումը կկատարվի ԲԴԽ-ի ուսումնասիրության մեկնարկից հետո 30 օրվա ընթացքում: Պատասխաններն ազդեցության ենթակա անձանց կտրվեն գրավոր տեսքով:


**Քայլ 2**

- 125) Եթե ազդեցության ենթակա անձը համաձայն չէ ԾԻԳ-ի փոխհատուցման առաջարկին կամ բողոքի մերժման պատճառաբանություններին, ապա նա պետք է բողոքով դիմի Երևանի քաղաքապետարան: Ազդեցության ենթակա անձը պետք է բողոքը ներկայացնի ԾԻԳ-ի պատասխանը ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում: Հայցը հիմնավորող փաստաթղթերը պետք է ներկայացվեն այս փուլում: Երևանի քաղաքապետարանը պարտավոր է բողոքին պատասխանել 30 օրվա ընթացքում: Երևանի քաղաքապետարանը գործի գրանցումը, վերանայումը և կարգավորումը կատարում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի փետրվարի 18-ի ՀՕ-41-Ն օրենքի պահանջների համաձայն:
- 126) Բողոքների քննարկման մեխանիզմից և ընթացակարգերից անկախ՝ ազդեցության ենթակա անձինք իրավունք ունեն բողոքների լուծման գործընթացի ցանկացած պահին իրենց գործերը հանձնելու ընդհանուր իրավասության դատարան: Կգործադրվեն բոլոր ջանքերը, որպեսզի հարցերը կարգավորվեն ԾԻԳ-ի մակարդակով՝ համայնքային լսումների միջոցով: Եթե դա հնարավոր չէ, փորձ կարվի հարցերը լուծելու Երևանի քաղաքապետարանի մակարդակով՝ դատավարական գործընթացներից խուսափելու կամ դրանք հնարավորինս նվազագույնի հասցնելու համար: ԾԻԳ-ը պատշաճորեն կվավերագրի բոլոր բողոքներն ու դրանց լուծումները և հասանելի կդարձնի ուսումնասիրման, մոնիթորինգի և գնահատման նպատակներով:
- 127) Բոլոր ստացված ու քննարկված բողոքները կվավերագրվեն՝ անկախ դրանց արդյունքներից: Բողոքների վերաբերյալ գործերի բոլոր փաստաթղթերը կմուտքագրվեն ՀՕՏԾ ԲԼՄ-ի տվյալների բազայում: Մշակվել է բողոքների գրանցման ձևանմուշ, որը կտրվի ազդեցության ենթակա անձանց, երբ նրանք ներկայացնեն իրենց բողոքները:

128) ԲԼՄ-ի իրականացումը մոնիթորինգի կենթարկվի ներքին և արտաքին մոնիթորինգի միջոցով: ԲԼՄ-ի մոնիթորինգի հիմնական ցուցանիշներն են՝ բողոքների քանակն ու տեսակը, լուծում ստացած գործերը, կարգավորման համար նախատեսված ժամկետները և այլն: ԾԻԳ-ն ու արտաքին մոնիթորինգային գործակալությունը (ԱՄԳ) կմշակեն ներքին և արտաքին մոնիթորինգի ու գնահատման լրացուցիչ ցուցանիշներ, որոնք մոնիթորինգի արդյունքների հետ միասին կներկայացվեն Սոցիալական մոնիթորինգի կիսամյակային հաշվետվություններում (ՄՄԿՀ), Առաջընթացի վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններում (ԵԱՀ) և Համապատասխանության մասին հաշվետվություններում:

129) ԲԼՄ-ի ինստիտուցիոնալ սխեման ներկայացված է Նկար 5-1-ում:

**Նկար 5-1 Բողոքների կարգավորման գործընթացի գծապատկեր**



### 5.3 Տեղեկատվական և բողոքների կարգավորման ծառայություններից օգտվելու հնարավորություն

130) Թափանցիկություն և ծրագրի ազդեցությունը կրող համայնքների հանդեպ հաշվետվողականություն պահպանելու և տեղեկատվության տրամադրման, օժանդակման և բողոքների կարգավորման ծառայություններն ազդեցության ենթակա անձանց հասանելի դարձնելու նպատակով՝ ԾԻԳ-ը հաշվի է առել հետևյալ լրացուցիչ միջոցները:

#### ԾԻԳ-ի համացանցային կայք

131) ԾԻԳ-ը ստեղծել և գործարկում է համացանցային կայք: Ծրագրին առնչվող փաստաթղթերը մատչելի են համացանցում և կանոնավորապես թարմացվում են: Շահագրգիռ կողմերը, ծրագրի ազդեցությունը կրած մարդիկ և համայնքի անդամները կարող են կայքում տեղադրել իրենց հարցերը, կարծիքներն ու առաջարկները, ստանալ իրենց հարցերի պատասխանները և ձեռք բերել ցանկացած տեղեկություն Ծրագրի մասին:



## Հատուկ էլեկտրոնային փոստ

- 132) Ծրագրի մասին տեղեկատվությունը լայն հանրությանը և էլեկտրոնային հաղորդակցության միջոցները նախընտրող ԱԵԱ-ներին հասանելի դարձնելու նպատակով ՄԻԳ-ը հատուկ նշանակության էլեկտրոնային փոստի հասցե է ստեղծել լայն հասարակության համար, որպեսզի մարդիկ ուղարկեն իրենց բողոքները, առաջարկները, կարծիքները, հարցերը և այլն ([verabnaketsum@yerevan.am](mailto:verabnaketsum@yerevan.am)): Էլեկտրոնային փոստի հաշիվն ակտիվ կմնա Ծրագրի ամբողջ ընթացքում, ներառյալ՝ Թերությունների մասին ծանուցման ժամանակաշրջանը: Էլեկտրոնային փոստի հաշիվի մասին տեղեկություններն ազդեցության ենթակա անձանց հաղորդվել են հանրային լուսմների ժամանակ, տեղական իշխանության մարմինների կողմից, Ծրագրի տեղեկագրի միջոցով և տեղեկատվության տարածման այլ հնարավոր միջոցներով: Հաշիվն արդեն գործում է:

## Առերես հանդիպումներ

- 133) Եթե ազդեցության ենթակա անձինք չկարողանան օգտվել առկա միջոցներից, ապա հնարավոր կլինի կազմակերպել առերես հանդիպում ՄԻԳ-ի լիազոր պաշտոնատար անձի հետ: Ազդեցության ենթակա անձանց կտրամադրվեն հետևյալ կոնտակտային տվյալները՝ առերես հանդիպում նշանակելու համար.

ՄԻԳ-ի հեռ.՝ 010-52-09-73  
Կոնտակտային հասցեն՝ Փ. Բուզանդի փ. 1/3, 5-րդ հարկ, 0010  
Երևան, Հայաստան

## Բողոքների ուղարկում փոստով

- 134) Ազդեցության ենթակա անձինք, շահագրգիռ կողմերը և լայն հասարակությունը կունենան իրենց բողոքները, մտահոգությունները, կարծիքներն ու առաջարկները ՄԻԳ-ի հետևյալ հասցեին նամակով ուղարկելու տարբերակ

«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ  
Փ. Բուզանդի փ. 1/3, 5-րդ հարկ, 0010 Երևան, Հայաստան

- 135) Բոլոր հասանելի միջոցների մասին տեղեկատվությունն ազդեցության ենթակա անձանց հաղորդվում է համայնքային լուսմների ընթացքում: Եթե ազդեցության ենթակա անձինք այդ լուսմների ժամանակ առաջարկեն իրենց տեսակետներն ու մտահոգություններն արտահայտելու այլ, ավելի արդյունավետ եղանակներ, ապա նրանց առաջարկությունները կընդգրկվեն բողոքների քննարկման մեխանիզմի մեջ, և հանրությունը կտեղեկացվի համապատասխանաբար:

## Տեղային կիզակետ (ԱԵԱ-ների ներկայացուցիչներ)

- 136) Տեղային կիզակետը (ԱԵԱ-ների ներկայացուցիչներ) կնշանակվի ԱԵԱ-ների կողմից: Այն կունենա հետևյալ գործառնությունները. տեղեկատվության փոխանցում ՄԻԳ-ից ԱԵԱ-ներին և հակառակը, ԱԵԱ-ների բողոքները հավաքելը, մասնավորապես՝ ԱԵԱ-ներ բանավոր բողոքները գրանցամատյանում գրանցելը, ԱԵԱ-ներին ԲԼՄ-ի մասին տեղեկացնելը, անհրաժեշտության դեպքում ներգրավվածությունը ԲԼՄ-ում, մասնակցությունը ՄԻԳ-ում, հարկ եղած դեպքում ԲԼՄ-ի դաշտային այցելություններին մասնակցելը և այլն, ինչպես նաև ԲԼՄ-ի միջոցով ԱԵԱ-ների՝ դիմում ներկայացնելու գործընթացին աջակցելը: Տեղային կիզակետը (ԱԵԱ-ների ներկայացուցիչը) կընտրվի ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի՝ ներառյալ ՀՕՏՕ իրականացման և շինարարության փուլերի համար հանրային լսման ընթացքում, հանրային լսման մասնակիցների կողմից: Տեղային կիզակետ ընտրելուց հետո ՄԻԳ-ը ՄՆՇՎԽ-ի հետ միասին նրանց համար կկազմակերպի կողմնորոշում ապահովող ուսուցում: Այդ ուսուցման ընթացքում կներկայացվեն ՀՕՏՕ իրականացման գործընթացը, իրավունքների սխեման և ԲԼՄ-ն:

## 6 ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԲ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### 6.1 ՀՀ օրենսդրության և ԱԶԲ քաղաքականության նկարագրությունը

#### 6.1.1 Հողի օտարման և տարաբնակեցման վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը

- 137) Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններ) երաշխավորում է սեփականության իրավունքի պաշտպանությունը: Համաձայն վերջինիս՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ: Հողի օտարման և փոխհատուցման դեպքերը նախատեսվում են Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի Հողային օրենսգրքի 102, 104 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի Քաղաքացիական օրենսգրքով), «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-185-Ն օրենքով:
- 138) «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-185-Ն օրենքի համաձայն՝ Հասարակության և պետության կարիքների համար սեփականությունն օտարվում է միայն կառավարության կողմից օտարման նպատակը բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու դեպքում: Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշման մեջ նշվում են՝
- ա. այն բացառիկ՝ գերակա հանրային շահը, որի համար պետք է օտարվի սեփականությունը,
  - բ. օտարվող սեփականության ձեռքբերողը,
  - գ. օտարման ենթակա սեփականության իրավունքի օբյեկտները (հասցեները կամ գտնվելու վայրը կամ այլ տվյալներ, որոնցով տվյալ սեփականությունը տարբերվում է այլ սեփականությունից,
  - դ. սեփականության օտարման գործընթացը սկսելու վերջնաժամկետը:
- 139) «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-185-Ն օրենքով սահմանվում են հողի օտարման ընթացակարգերը և հողամասի և անշարժ գույքի սեփականատերերի՝ փոխհատուցում ստանալու իրավունքը: Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո կառավարության կողմից սահմանված կարգով և ժամկետներում լիազոր մարմնի կողմից պետք է կազմվի արձանագրություն, որտեղ կնկարագրվի օտարվող սեփականությունը՝ կառավարության կողմից սահմանված ընթացակարգերի և վերջնաժամկետների համաձայն, ձեռքբերող կողմը, սեփականատերերը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողները կարող են մասնակցել արձանագրության կազմմանը, եթե վերջինս արդեն չի կազմվել սեփականության նախնական ուսումնասիրության ժամանակ:

Օտարվող սեփականության նկարագրության արձանագրության մեկ օրինակը, այն կազմելուց հետո ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում, պատշաճ ձևով ուղարկվում է սեփականատիրոջը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող անձանց, որոնք իրավունք ունեն արձանագրությունն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում այն բողոքարկել լիազոր մարմնին և/կամ դատարանում:

- 140) Հողամասի/սեփականության օտարումն իրականացվում է ԵՔ-ի և ԱԵԱ-ների կամ նրանց օրինական ներկայացուցիչների միջև պայմանագրի և համաձայնագրի հիման վրա՝ հաշվի առնելով հողի շուկայական արժեքը և կորուստները, այդ թվում՝ նաև դրանից բխող հետևանքային վնասները և կարող է ներառել հողամասի/սեփականության փոխարինումը: Իր գույքի օտարման դիմաց սեփականատիրոջը կվճարվի համարժեք փոխհատուցում: Համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարը:
- 141) Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գնահատումը պետք է իրականացվի «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-189-Ն օրենքի շրջանակներում սահմանվող ընթացակարգերի համաձայն: Սա իրականացվում է գույքի արտոնագրված գնահատողի կողմից:

### **6.1.2 Անվտանգության քաղաքականության հայտարարագրի շրջանակներում հարկադիր տարաբնակեցման վերաբերյալ ԱԶԲ դրույթները**

- 142) Հարկադիր տարաբնակեցման ԱԶԲ քաղաքականությունը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.
- ա. խուսափել կամ առնվազն նվազագույնի հասցնել հարկադիր տարաբնակեցման դեպքերը:
  - բ. Փոխհատուցման/վերականգնման վերաբերյալ դրույթները կապահովեն ԱԵԱ-ների նախքան Ծրագրի իրականացումն ունեցած կենսամակարդակը:
  - գ. ԱԵԱ-ները պետք է լիարժեք տեղեկացված լինեն, և նրանց պետք է խորհրդատվություն տրամադրվի ՀՕՏ փոխհատուցման տարբերակների վերաբերյալ:
  - դ. Հարկ է հնարավորինս օժանդակել ԱԵԱ-ների սոցիալ-մշակութային ինտեգրացիային:
  - ե. Փոխհատուցումը կիրականացվի կանանց և տղամարդկանց հավասարության դիտարկմամբ:
  - զ. Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի բացակայությունը չպետք է խոչընդոտ հանդիսանա փոխհատուցման/վերականգնման համար:
  - է. Հատուկ ուշադրություն պետք է դարձվի կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսություններին և այլ խոցելի խմբերին, և համապատասխան օժանդակություն պետք է ցուցաբերվի վերջիններին՝ իրենց կենսամակարդակը բարելավելու համար:
  - ը. ՀՕՏ-ը պետք է հանդիսանա և իրականացվի որպես Ծրագրի մի մաս, իսկ փոխհատուցման ողջ արժեքը պետք է ներառվի Ծրագրի ծախսերի մեջ:
  - թ. Փոխհատուցումն ու տարաբնակեցման նպաստները պետք է ամբողջությամբ տրամադրվեն նախքան ճանապարհի շինարարական աշխատանքների մեկնարկը:

**6.1.3 Հողի օտարման և տարաբնակեցման վերաբերյալ ՀՀ օրենսդրության և ԱԶԲ Տարաբնակեցման քաղաքականության համեմատությունը**

143) ՀՀ օրենսդրության և ԱԶԲ քաղաքականության նկարագրությունն ու տարբերությունները ներկայացվում են հետևյալ աղյուսակում, որտեղ առաջին վեց տողերը վերաբերում են ՀՕՏՀ-ի համապատասխան վերլուծության աղյուսակին, իսկ վերջինն ավելացվել է ձեռքով:

**Աղյուսակ 6-1 Հողի օտարման և տարաբնակեցման ՀՀ օրենսդրության և ԱԶԲ Տարաբնակեցման քաղաքականության համեմատություն**

ՀՀ օրենսդրություն	ԱԶԲ ԱՔՀ
Հողի փոխհատուցում, միայն անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական ունեցող սեփականատերերին:	Սեփականության վկայականի բացակայությունը խոչընդոտ չէ փոխհատուցման և/կամ վերականգնման համար: Առանց վկայականի անշարժ գույքի օգտագործողները նույնպես ստանում են վերականգնման նպաստ:
Բոլոր տները/շինությունները փոխհատուցվում են Ծրագրի շրջանակներում վնասված/քանդված շինությունների համար բացառությամբ չգրանցված հասարակական շինությունների:	ԱԶԲ քաղաքականությունը ներառում է փոխհատուցում նաև չգրանցված հասարակական շինությունների համար:
Բերքի կորստի դիմաց փոխհատուցում տրամադրվում է միայն ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ հողամասը տնօրինող սեփականատերերին:	Բերքի կորստի դիմաց փոխհատուցում տրամադրվում է բոլոր ԱԵԱ-ներին:
Անշարժ գույքի գնահատում՝ հիմնված ներկայիս շուկայական արժեք + գնահատված արժեքի 15%:	Անշարժ գույքի գնահատում՝ հիմնված ներկայիս շուկայական գնի/փոխարինման արժեքի վրա:
Նախքան գնահատումը հարկ է ԱԵՏՏ/ԱԵԱ-ներին ներկայացնել ազդեցությունների քանակի և արժեքի, փոխհատուցման գումարների և ֆինանսական օժանդակության վերաբերյալ տեղեկատվություն:	Նույնն է:
Ոչ մի դրույթ չկա զգալի ազդեցություն կրած ԱԵԱ-ների և խոցելի խմբերի եկամտի/ապրուստի վերականգնման միջոցառումների, նպաստների կամ վերաբնակեցման ծախսերի վերաբերյալ:	ԱԶԲ քաղաքականությունը պահանջում է եկամտի/ապրուստի վերականգնում, լուրջ կորուստների, ինչպես նաև վերաբնակեցման գործընթացի շրջանակներում ԱԵԱ-ների կողմից կրած ծախսերի համար:
ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ ծրագրի մակարդակով սահմանված որոշակի ԲԼՄ, սակայն ՀՀ օրենսդրությունը նախատեսում է մեխանիզմներ, որոնց միջոցով ԱԵԱ-ները կարող են օտարման յուրաքանչյուր փուլի ընթացքում դիմումներ, բողոքներ, առարկություններ և առաջարկներ ներկայացնել օտարողին և համապատասխան ղեկավար մարմիններին, ինչպես նաև դիմել դատարանի միջնորդությանը: Անկախ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-185-Ն օրենքի պահանջներից ՀՀ Սահմանադրության համաձայն յուրաքանչյուր անձ դատարանի և պատկան մարմինների առջև ունի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ անցկացնել հանրային լսումներ ԱԵԱ-ների հետ: Սակայն, ՀՀ	ԻՄ/ԳՄ պետք է հաստատի գործառնական մեխանիզմ ֆիզիկական և տնտեսական տեղահանման վերաբերյալ ԱԵԱ-ների մտահոգություններն ու բողոքները ստանալու և լուծում տալու համար: ԻՄ/ԳՄ պետք է իմաստալից հանրային լսումներ անցկացնի Ծրագրի իրականացման սկզբում և ընթացքում, ժամանակին հրապարակի ազդեցությունների գնահատման, ԱԵԱ/ԱԵՏՏ-ների իրավունքների, փոխհատուցում ստանալու իրավասությունների և վերջիններիս տրամադրվող ֆինանսական օժանդակության վերաբերյալ համապատասխան և պատշաճ, ԱԵԱ-ներին հասկանալի և հասանելի տեղեկությունները:

<p>օրենսդրությունը սահմանում է օտարման տարբեր փուլերի ընթացքում ԱԵԱ-ներին իրենց քայլերի և իրավունքների մասին ծանուցելու վերաբերյալ պահանջներ և պայմաններ, մասնավորապես բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, օտարվող սեփականության նկարագրության արձանագրության մեկ օրինակը, օտարվող սեփականության պայմանագրի նախնական տարբերակն ուղարկվում է սեփականատիրոջը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող անձանց: Սեփականության ձեռքբերողը պետք է տեղեկություններ տրամադրի փոխհատուցումը դատարանի կամ նոտարի դեպոզիտային հաշվին փոխանցելու վերաբերյալ: Եթե Օտարողն իրականացնում է օտարվող գույքի նախնական ուսումնասիրություն, սեփականատիրոջը, ձեռքբերողին և օգտագործողին պետք է նախապես տրամադրել բավականաչափ և պատշաճ տեղեկատվություն տվյալ վարույթների բնույթի, հիմքերի և իրավական հետևանքների մասին:</p>	
--	--

- 144) Ընդհանուր առմամբ ՀՀ օրենսդրությունն ու ԱԶԲ քաղաքականությունը ՀՕՏ-ի վերաբերյալ սկզբունքորեն չեն տարբերվում: Այնուամենայնիվ, ՀՀ օրենքները և կանոնակարգերը այնքան էլ հստակ չեն սահմանում, թե ԱԵԱ-ների վերականգնումն ինչ ճանապարհով պետք է իրականացվի: Մեկ այլ խնդիր է, որ ԱԶԲ-ն փոխհատուցման կամ նվազագույնը վերականգնման համար իրավասու է ճանաչում անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի վկայական ունեցող կամ առանց վկայականի սեփականատերերին կամ գրանցված և չգրանցված օգտագործողներին: ՀՀ օրենսդրության և ԱԶԲ քաղաքականության միջև այս անհամապատասխանությունները համաձայնեցնելու նպատակով ԵԲ-ն Ծրագրի համար պատրաստեց ՀՕՏ նախագիծը, որն ապահովում է փոխհատուցում՝ փոխարինման ողջ արժեքով, բոլոր տարրերի համար և նվազագույնը փոխհատուցում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների չպահպանմամբ/առանց սեփականության վկայականի բնակվողների և ձեռնարկատիրական գործունեության համար: ՀՕՏ-ն նախատեսում է նաև վերականգնողական փաթեթներ՝ խոցելի և զգալի ազդեցության ենթակա ԱԵԱ-ների համար, որոնք պետք է վերաբնակեցվեն:
- 145) Առաջին հերթին պետք է փորձել սեփականության իրավունքով տնօրինվող անշարժ գույքը օտարել ազդեցության ենթակա անձանց/միավորների հետ առանձին բանակցությունների հիման վրա: Բանակցությունների ձախողման դեպքում կգործի «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-185-Ն օրենքը և կնախաձեռնվի հարկադիր օտարման վարույթ: Բանակցության հիման վրա վաճառքի դեպքում ԱԶԲ-ն պահանջում է հավուր պատշաճի ապահովել, որ ԱԵԱ-ներին առաջարկվի արդար գին, տեղեկատվություն և սակարկելու բավարար սահման, ինչպես նաև, որպեսզի նրանց դեպքը մոնիթորինգի ենթարկվի արտաքին գործակալության կողմից: Այս պայմանները լիովին երաշխավորվում են արտաքին գործակալության և, ՀՀ կառավարության փորձի համաձայն, գույքի փոխհատուցման դրույքաչափերը սահմանելու համար՝ գույքի անկախ արտոնագրված գնահատողի ներգրավմամբ:

#### 6.1.4 Սույն Բազմափուլ ֆինանսավորման գործիքի (ԲՖԳ) համար ընդունված Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի սկզբունքները և իրավասությունները

- 146) ՀՀ օրենսդրության և ԱԶԲ Անվտանգության քաղաքականության հայտարարագրի (ԱՔՀ) (2009 թվ.) հիման վրա սույն ԲՖԳ-ի համար մշակվել են հարկադիր տարաբնակեցման հիմնական հետևյալ սկզբունքները.
- ա. Հողի օտարման և այլ հարկադիր տարաբնակեցման ազդեցություններից պետք է խուսափել կամ հասցնել նվազագույնի՝ ուսումնասիրելով բոլոր կենսունակ այլընտրանքային ծրագրի նախագծերը:
  - բ. Անխուսափելի լինելու դեպքում կմշակվի սեղմ ժամկետներով նոր ՀՕՏԾ (ինչպես սույն ՀՕՏԾ-ն), և ԱԵԱ-ները աջակցություն կստանան բարելավելու կամ առնվազն պահպանելու՝ նախքան Ծրագրի իրականացումը իրենց ունեցած կենսամակարդակը:
  - գ. Պետք է երաշխավորվի ԱԵԱ-ների հետ փոխհատուցման հարցի շուրջ բովանդակալից հանրային լսումների կազմակերպումը, տարաբնակեցման հետ կապված տեղեկատվության տրամադրումը և ենթածրագրերի մշակման/իրականացման շրջանակներում ԱԵԱ-ների մասնակցությունը՝ նախագծի այլընտրանքների վերաբերյալ իրենց տեսակետն արտահայտելու, ինչպես նաև անկախ մոնիթորինգային գործակալության կողմից իրականացվող մոնիթորինգին մասնակցելու միջոցով:
  - դ. Խոցելի և զգալի ազդեցություն կրող ԱԵԱ-ներին կտրամադրվի հատուկ օժանդակություն:
  - ե. Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական չունեցող ԱԵԱ-ները (օր.՝ ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով գույքը տիրապետող և օգտագործող ԱԵԱ-ներ) կստանան կենսապահովման նպաստ՝ հողի փոխհատուցման համար և փոխարինման արժեքով ամբողջությամբ կփոխհատուցվեն հողից բացի այլ կորուստների դիմաց:
  - զ. ԱԵԱ-ների կողմից ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով տիրապետվող և օգտագործվող գույքի նկատմամբ իրավունքները կգրանցվեն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և կփոխհատուցվեն հողի կորուստների դիմաց:
  - է. Եկամտի վերականգնման միջոցների ապահովում:
  - ը. ՀՕՏԾ-ն կտրամադրվի կամ հասանելի կլինի ԱԵԱ-ներին հայերեն լեզվով, Ծրագրի կայքէջի միջոցով:
  - թ. Փոխհատուցման, վերաբնակեցման նպատակով օժանդակությունը և վերականգնման միջոցառումներն ամբողջությամբ կտրամադրվեն նախքան ցանկացած շինարարական աշխատանքների որոշակի փաթեթի իրականացումը:
  - ժ. Մշակված է ԱԵԱ-ների բողոքների բավարարման համար համապատասխան մեխանիզմ:

#### 6.2 Փոխհատուցում ստանալու իրավունքը

- 147) Ծրագրի ներքո փոխհատուցման կամ առնվազն վերականգնման իրավունք ունեցող ԱԵԱ-ներն են՝
- ա. հողամասը կորցնող բոլոր ԱԵԱ-ները, ովքեր ունեն կամ չունեն անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական,

- բ. անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման առկայությամբ կամ բացակայությամբ՝ այդ գույքը փաստացի տիրապետող և օգտագործող ԱԵԱ-ները,
- գ. շինությունների, բերքի, մշակաբույսերի կամ հողամասին ամրագրված այլ օբյեկտների սեփականատերերը,
- դ. ձեռնարկատիրական գործունեությունը, եկամուտը և աշխատավարձերը կորցնող ԱԵԱ-ների փոխհատուցման իրավունքը սահմանափակված է կասեցման օրով (որը նկարագրության արձանագրությունների ստորագրման օրն է)՝ 2016 թվականի օգոստոսի 3-ը: ԱԵԱ-ները, ովքեր կհաստատվեն ազդեցության ենթակա տարածքներում կասեցման օրից հետո, փոխհատուցման իրավասություն չեն ունենա: Այնուամենայնիվ, նրանց կանխավ կներկայացվի համապատասխան ծանուցում, որով վերջիններիս կխնդրվի ազատել տարածքները, ապամոնտաժել կառուցված շինությունները՝ նախքան Ծրագրի իրականացումը սկսելը: Նրանց ապամոնտաժված կառույցներն ու նյութերը չեն առգրավվի, նրանք տուգանքներ չեն վճարի կամ սանկցիայի չեն ենթարկվի:

### 6.3 Փոխհատուցում ստանալու իրավունքները

148) Ծրագրի ներքո ՀՕՏ առաջադրանքները կիրականացվեն՝ ըստ փոխհատուցման իրավունքների և իրավասությունների շրջանակի ՀՀ օրենսդրությանն ու կանոնակարգերին և ԱԶԲ քաղաքականությանը համապատասխան: Փոխհատուցման գումարը սահմանելու համար հիմք է հանդիսանում գույքի շուկայական արժեքը, իսկ այն դեպքերում, երբ գույքի կադաստրային արժեքը գերազանցում է շուկայական արժեքին, ապա որպես հիմք ծառայում է կադաստրային արժեքը: Մանրամասների համար տե՛ս ստորև բերված Իրավունքների սխեման:

Աղյուսակ 6-2 Ծրագրի համար մշակված իրավունքների սխեման

Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
1. Գյուղատնտեսական հողերի կորուստ	ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են գյուղատնտեսական հողերը՝ անկախ ազդեցության աստիճանից	Սեփականատեր	Փոխհատուցում՝ փոխարինման արժեք +15%՝ շուկայական կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է): Հողի շուկայի բացակայության դեպքում փոխհատուցումը կիրականացվի հիմք ընդունելով հողի տարեկան արտադրողականությունը՝ հաշվարկված տարիների այն քանակով, որը կապահովի ԱԵՏՏ-ի կորցրած հողի դիմաց վերականգնումը:
		Իրավական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա ԱԵՏՏ-ներ	Այս ԱԵԱ-ները կստանան վերականգնման նպաստ ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեքի (որն ավելի բարձր է) 25% -ի չափով:
2. Ոչ գյուղատնտեսական հողեր	ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են իրենց հասարակական նշանակության կամ բնակելի հողերը	Սեփականատեր	Փոխհատուցում՝ փոխարինման արժեք +15%՝ շուկայական կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է)
		Իրավական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա ԱԵՏՏ-ներ	Այս ԱԵՏՏ-ները կստանան վերականգնման նպաստ ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեքի (որն ավելի բարձր է) 25%-ի չափով:
3. Բնակելի կառույցներ		Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ սեփականության իրավական գրանցման	Շինության կորստի դեպքում՝ դրամական փոխհատուցում փոխարինման ամբողջ արժեքով (շուկայական արժեքից ոչ պակաս) + 15%՝ առանց ամորտիզացիոն մասնահանումների, գործարքի համար ծախսերի և փրկված նյութերի: Մասնակի ազդեցության դեպքում և ԱԵՏՏ համաձայնությամբ՝

Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
		կարգավիճակից	փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի, ինչպես նաև շինության վերանորոգման համար (ԱԵԱ-ի համաձայնությամբ):
4. Ոչ բնակելի կառույցներ/գույք		Իրավական գրանցման կարգավիճակ ունեցող ԱԵՏՏ-ներ	Շինության կորստի դեպքում՝ դրամական փոխհատուցում փոխարինման ամբողջ արժեքով (շուկայական արժեքից ոչ պակաս) + 15%՝ առանց ամորտիզացիոն մասնահանումների, գործարքի համար ծախսերի և փրկված նյութերի: Մասնակի ազդեցության դեպքում և ԱԵՏՏ համաձայնությամբ՝ փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի, ինչպես նաև շինության վերանորոգման համար (ԱԵԱ-ի համաձայնությամբ):
		Իրավական գրանցման կարգավիճակ ունեցող հողի վրա ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով շինություններ ունեցող ԱԵՏՏ-ներ	Շինության կորստի դեպքում՝ դրամական փոխհատուցում փոխարինման ամբողջ արժեքով (շուկայական արժեքից ոչ պակաս)՝ առանց ամորտիզացիոն մասնահանումների, գործարքի համար ծախսերի և փրկված նյութերի:
		Իրավական գրանցման կարգավիճակ չունեցող հողի վրա ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով շինություններ ունեցող ԱԵՏՏ-ներ	Վերականգնման նպաստ փոխարինման արժեքով (առանց ամորտիզացիոն մասնահանումների և գործարքի համար ծախսերի)՝ հանած օրինականացման ծախսերը, առավելագույնը մինչև շուկայական արժեքի 20% :
5. Բեքք	Ազդեցության ենթակա բերքի զանգված	Բոլոր ԱԵՏՏ-ները անկախ իրավական գրանցման կարգավիճակից (ներառյալ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատեր և կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները)	Մեկ տարվա բերքի փոխհատուցում հաշվարկված շուկայական գներով՝ ակնկալվող համախառն բերքի համար:
6. Ծառեր	Ազդեցության ենթակա ծառեր	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից	Շուկայական գներով հաշվարկված դրամական փոխհատուցում՝ հիմնված ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա:



Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
		(ներառյալ իրավական կարգավիճակ ստանալու ենթակաս փականատեր և կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները)	
7. Ձեռնարկատիրական գործունեություն կամ զբաղվածություն	Ձեռնարկատիրական գործունեություն/զբաղվածություն	Բոլոր ԱԵԱ/ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից (ներառյալ իրավական կարգավիճակ ստանալու ենթակաս փականատեր և կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները)	Սեփականատերեր (մշտական ազդեցության դեպքում) դրամական փոխհատուցում տարեկան գուտ եկամտի չափով: Փոխհատուցումը պետք է հիմնված լինի հարկային հայտարարագրի վրա: Հայտարարագրի բացակայության դեպքում ԱԵՏՏ-ը կստանա վերականգնման նպաստ առավելագույն չհարկվող աշխատավարձի չափով՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատվող ամիսների հաշվարկով՝ մինչև 1 տարի: Առավելագույն չհարկվող աշխատավարձը հավասար է նվազագույն աշխատավարձին: Մշտական աշխատողներ/աշխատակիցներ. (մշտական ազդեցության դեպքում) վեց ամսվա կորցրած միջին աշխատավարձի չափով գումարի տրամադրում
8. Օժանդակություն զգալի ազդեցությունների դեպքում	ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են գյուղատնտեսական եկամտի 10 և ավելի տոկոսը	Զգալի ազդեցության ենթարկված բոլոր ԱԵՏՏ-ները, ներառյալ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները և վարձակալները	1) Զգալի գյուղատնտեսական եկամտի կորուստ ունեցող ԱԵԱ-ներին մեկ տարվա բերքի չափով հավելյալ փոխհատուցում բերքի կորստի դիմաց: 2) վերականգնման նպաստ վերաբնակեցվող ԱԵՏՏ-ներին՝ 6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով
9. Օժանդակություն վերաբնակեցման դեպքում	Տրանսպորտի և տեղափոխումների ծախսեր	Տեղահանված բոլոր ԱԵԱ, ներառյալ վարձակալները	Տրանսպորտային և մեկ ամսվա համար կենսապահովման ծախսերը հոգալու համար բավարար գումարների տրամադրում:
10. Օժանդակություն խոցելի անձանց		Աղքատության սահմանագծից ցածր կենսամակարդակ ունեցող և (կամ) կանանց և (կամ) տարեց անձանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ	6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով դրամական օժանդակության տրամադրում: Ծրագրի իրականացման հետ կապված աշխատատեղերի համար ընտրություն կատարելիս այս անձանց պետք է առաջնայնություն տալ:
11. Ժամանակավոր ազդեցություն		Բոլոր ԱԵՏՏ-ները	Պատշաճ վարձակալություն և վերականգնման աջակցություն կտրամադրվի ժամանակավոր ազդեցություն կրող գույքի/սեփականության համար:
12. Ժամանակավոր ազդեցություն հաղորդողիների	Իրավական կարգավիճակի հիման վրա ԱԵՏՏ-ների	Սեփականատերեր	Փոխհատուցում կտրամադրվի թե՛ հողի, թե՛ բարելավումների դիմաց, ինչպես մշտական ազդեցությունների դեպքում է:

Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
տեղափոխման հետևանքով	բոլոր կորուստները	Օրինականացման ենթակա չհանդիսացող ԱԵՏՏ-ներ	Փոխհատուցում կվճարվի միայն ազդեցության ենթակա հողի վրա օգտագործողի կողմից արված բարելավումների համար, ինչպիսիք են՝ ծառերը, մշակաբույսերը, ցանկապատերը և այլն: Նման դեպքերում օգտագործողները նպաստ չեն ստանա ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողի դիմաց, այնուամենայնիվ, այդ հողակտորները պետք է ծածկվեն և վերադարձվեն օգտագործողին
13. ՀՕՏ չնախատեսված ազդեցություններ, եթե այդպիսիք լինեն			Օրագրի իրականացման ընթացքում ԵԶ-ն կանդրադառնա չնախատեսված ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը/վերականգնումը՝ ըստ վերոհիշյալ պայմանների:

149) ԱԵԱ-ների իրավունքների վերաբերյալ դրույթները ներառում են հողամասի, շինության, մշակաբույսերի և ծառերի կորստի և հարկային հայտարարագրի հիման վրա և/կամ միանվագ վճարման տեսքով ձեռնարկատիրական գործունեության կորստի դիմաց, ինչպես նաև զգալի ազդեցության, վերաբնակեցման և խոցելիության նպաստների մասին դրույթներ: Ստորև մանրամասնորեն ներկայացված են այս իրավունքները:

**ա. Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի վրա ազդեցության** դեպքում կտրվի դրամական փոխհատուցում շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ավելի բարձր է)՝ գումարած 15% օժանդակություն՝ համաձայն օրենքի: Եթե ազդեցության է ենթարկվել ԱԵԱ-ի գյուղատնտեսական եկամտի ավելի քան 10%-ը, ապա ԱԵԱ-ն (սեփականատերերը, վարձակալները և բնավարձակալները) պետք է զգալի ազդեցության համար լրացուցիչ նպաստ ստանան, որը համարժեք է կորցրած հողամասից ստացված տարեկան համախառն եկամտի շուկայական արժեքին:

**բ.** Այն ԱԵԱ-ները, որոնց կողմից փաստացի տիրապետվող և օգտագործվող գույքի նկատմամբ իրավունքները **ենթակա չեն գրանցման**, պետք է միանվագ վերաբնակեցման նպաստի տեսքով դրամական փոխհատուցում ստանան, որը կհաշվարկվի՝ հիմք ընդունելով ազդեցության ենթակա հողի շուկայական կամ կադաստրային արժեքի (որն ավելի բարձր է) 25%-ը:

**գ.** ԱԵԱ-ները, որոնց կողմից փաստացի տիրապետվող և օգտագործվող գույքի նկատմամբ իրավունքները **ենթակա են գրանցման** (եթե այդպիսիք կան), օրենքով սահմանված կարգով գրանցման կարգավիճակ կստանան և կփոխհատուցվեն որպես իրավական կարգավիճակ ունեցող սեփականատերեր:

**դ. Վարձակալները** կստանան դրամական փոխհատուցում, որը համարժեք է ազդեցության ենթակա հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեքին (որն ավելի բարձր է)՝ գումարած 15% օժանդակություն՝ կախված վարձակալության մնացած տարիների թվից հետևյալ կերպով՝ ա) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%-ը, բ) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%-ը, գ) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%-ը, դ) 25 տարի և ավելի՝ հողի արժեքի 25%-ը:

**ե. Բնակելի շենքերի/շինությունների** համար փոխհատուցում պետք է տրամադրվի բոլոր ԱԵԱ-ներին փոխարինման արժեքով (շուկայական արժեքից ոչ ցածր) +15% օժանդակություն՝ անկախ տան գրանցման կարգավիճակից: Փոխհատուցումը տրամադրվելու է առանց ամորտիզացիոն մասհանումների, գործառնական ծախսերի, փրկված նյութերի և այլն: Մասնակի ազդեցություն կրելու դեպքում և այն դեպքում, երբ սեփականատերը չի ցանկանում տեղափոխել շինությունը, ազդեցությունները կընդգրկեն միայն շինության ազդեցության ենթարկված մասը և այդ մասի լիարժեք

վերականգնումը շահագործման համար պիտանիության (նախկին) վիճակին: Վերաբնակեցված վարձակալներին կտրվի վերաբնակեցման և զգալի ազդեցության բոլոր օժանդակությունները (տե ս ստորև):

**զ. Ոչ բնակելի շենքերի/շինությունների** համար փոխհատուցումը կտրամադրվի հետևյալ կերպ.

1. **Անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով գույքը տիրապետող և օգտագործող ԱԵՏՏ-ներ՝** շենքերի/շինությունների կորստի դիմաց դրամական փոխհատուցում փոխարինման արժեքով +15% օժանդակություն (շուկայական արժեքից ոչ ցածր) առանց ամորտիզացիոն մասհանումների, գործարքի համար ծախսերի, փրկված նյութերի և այլն:

2. **Անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով տիրապետվող և օգտագործվող հողամասի վրա ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով տիրապետվող և օգտագործվող շենքեր/շինություններ ունեցող ԱԵՏՏ-ներ՝** ինչպես վերոնշյալ դեպքում, սակայն առանց 15% օժանդակության:

3. **ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողամասի վրա ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող շենքեր/շինություններ ունեցող ԱԵՏՏ-ներ՝** փոխարինման արժեքին համարժեք վերականգնման օժանդակություն (առանց ամորտիզացիոն մասհանումների, գործառնական ծախսերի, փրկված նյութերի)՝ հանած օրենսդրության պահանջների պահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ գրանցման ծախսերի արժեքը, որը չի կարող գերազանցել շինության շուկայական արժեքի 20%-ը: Անհրաժեշտություն չկա օրենսդրության պահանջների պահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ ցրանցել այս շենքերը/շինությունները: Վերաբնակեցվող վարձակալներին կտրվեն վերաբնակեցման և զգալի ազդեցության բոլոր օժանդակությունները (տե ս ստորև):

**է. Մշակաբույսեր.** Մեկ տարվա բերքի համախառն արժեքի շուկայական գնի դրամական փոխհատուցում: Մշակաբույսերի դիմաց փոխհատուցումը պետք է կատարվի և՛ սեփականատերերին, և՛ վարձակալներին՝ իրենց առանձնահատուկ վարձակալության պայմանագրերի հիման վրա:

**ը. Ծառեր.** Շուկայական դրույքաչափերին համապատասխան դրամական փոխհատուցում՝ հիմնվելով ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա:

**թ. ձեռնարկատիրական գործունեության.** Մշտական կորուստների (1 տարի կամ ավել) դիմաց կտրվի դրամական փոխհատուցում 1 տարվա զուտ եկամտի չափով՝ հարկային հայտարարագրի հիման վրա, ժամանակավոր կորուստների դիմաց կտրվի դրամական փոխհատուցում ամսական եկամտին համարժեք՝ հարկային հայտարարագրի հիման վրա, ըստ ձեռնարկատիրական գործունեության դադարեցման ամիսների քանակի: Հարկային հայտարարագրի բացակայության դեպքում այս ԱԵԱ-ները կփոխհատուցվեն վերոնշյալ կարգով, սակայն հիմք ընդունելով առավելագույն չհարկվող աշխատավարձը՝ 55,000 ՀՀ դրամ (նվազագույն աշխատավարձը):

**ժ. Մշտապես գործող ձեռնարկատիրական գործունեության աշխատողները և աշխատակիցները** կստանան փոխհատուցում իրենց վեց ամսվա կորցրած աշխատավարձի դիմաց, յուրաքանչյուր ամսվա համար միջին ամսական աշխատավարձի չափով: Աշխատանքի ժամանակավոր կորուստ. փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության դադարեցված ժամանակահատվածում կորցրած աշխատավարձի դիմաց՝ առավելագույնը մինչև 6 ամիս:

- ի. Վերաբնակեցման նպաստ.** ԱԵԱ-ները, որոնք պետք է տարաբնակեցվեն (ներառյալ վարձակալները), 1 ամսվա կենսապահովման ծախսերի համար կստանան վերաբնակեցման նպաստ նվազագույն աշխատավարձի չափով (55,000 ՀՀ դրամ):
- լ. Համայնքային կառուցվածքները** պետք է ամբողջությամբ փոխարինվեն կամ վերականգնվեն՝ ապահովելով վերջիններիս՝ նախքան Ծրագիրն ունեցած գործառույթները:
- խ. Օժանդակություն զգալի ազդեցությունների դեպքում.** այս օժանդակությունը տրամադրվում է այն ԱԵՏՏ-ներին, որոնք կորցնում են գյուղատնտեսական հողի ավելի քան 10%-ը (տե՛ս վերոնշյալ) և բնակելի շինություններից վերաբնակեցված ԱԵՏՏ-ներին (ներառյալ վարձակալները):
- ծ. Օժանդակություն խոցելի անձանց.** Խոցելի անձանց (ԱԵՏՏ-ները, որոնց կենսամակարդակը ցածր է աղքատության սահմանագծից, ինչպես նաև կանանց և տարեցների կողմից ղեկավարվող տնային տնտեսությունների) կտրամադրվի վերականգնման նպաստ՝ 6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով և առաջնահերթություն կապված Ծրագրին առնչվող աշխատատեղերի հետ:

#### 6.4 Փոխհատուցման միավորի արժեքի գնահատում

150) Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գնահատումն իրականացվել է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-189-Ն օրենքով սահմանված կարգով: Գույքի տարբեր տեսակների միավորի դիմաց փոխհատուցման դրույքաչափերը ԱԶԲ-ն գնահատում է հետևյալ մեթոդաբանությամբ.

- ա. Գյուղատնտեսական նշանակության հողը** գնահատվում է շուկայական դրույքաչափերով՝ ազդեցությունների ուսումնասիրությանը նախորդող տարում անցկացված հողամասի վաճառքի ուսումնասիրության հիման վրա:
- բ. Առանձնատները/շինությունները** գնահատվել են՝ համաձայն շինարարության տեսակի, նյութերի, արժեքի, աշխատուժի, տրանսպորտի և շինարարական այլ ծախսերի փոխարինման դրույքաչափով: Փոխհատուցման գումարից ամորտիզացիայի/գործառնական ծախսերի նվազեցում չի կատարվել: Եթե ԱԵԱ-ն չի ցանկանա վերաբնակեցվել, ապա մասնակի ազդեցությունների դիմաց հնարավոր է վճարել բացառապես շինության վնասված մասնաբաժնի կամ վերջինիս վերանորոգման համար:
- գ. Տարեկան մշակաբույսերը** գնահատվել են՝ շուկայական գների համաձայն նախորդ տարվա բերքի մեծածախ առևտրի արժեքի դիմաց: Այն դեպքերում, երբ բերքի դիմաց ավելի, քան 1 տարվա փոխհատուցում պետք է վճարվի ԱԵԱ-ներին, ապա դա պետք է փոխհատուցվի շուկայի համախառն արժեքով:
- դ. Ծառերը** գնահատվել են տարբեր մեթոդաբանությունների համաձայն՝ պայմանավորված նրանով՝ արդյոք այն պտղատու է, թե ծառայում է որպես փայտանյութ.

1. Փայտանյութ տվող ծառերը գնահատվել են ըստ տարիքային կատեգորիայի (ա. նորատունկ, բ. միջին տարիք և գ. մեծ ծառեր) և փայտի ծավալի արժեքի,
2. Մրգատու/բերքատու ծառերը գնահատվել են ըստ տարիքային կատեգորիայի (ա. նորատունկ, բ. մեծ, սակայն ոչ մրգատու, և գ. մրգատու). ա. և բ. կատեգորիայի ծառերը կփոխհատուցվեն կատարված ներդրումների արժեքի հիման վրա, գ. կատեգորիայի ծառերը կփոխհատուցվեն 1 տարվա եկամտի

գուտ շուկայական արժեք x առավելագույն տարիների քանակը, որն անհրաժեշտ է ծառը լիարժեք բերքատվության տարիքին աճեցնելու համար:

- 151) Միավորի դիմաց փոխհատուցման դրույքաչափերը գնահատվել են արտոնագրված անկախ գնահատողի կողմից՝ հիմնվելով ԱԶԲ-ի համար ընդունելի հստակ և թափանցիկ մեթոդաբանության վրա: Գնահատված փոխհատուցման դրույքաչափերն այնուհետև ստուգվել և հաստատվել են ԾԻԳ-ի կողմից:

## 6.5 Հարկադիր օտարման պայմանները

- 152) Հողի օտարումը հարկադիր օտարման վարույթով ենթադրում է երկարատև գործընթաց և հաճախ կարող է դիմադրության հանդիպել: Նման մոտեցումը, հետևաբար, Ծրագրի համար կնախաձեռնվի միայն ծայրահեղ դեպքերում, երբ բանակցություններն ԱԵԱ-ների և ԵՔ-ի միջև ձախողվում են, և չկա այլընտրանքային հողամաս՝ հատվածներ 7-ի և 8-ի իրականացման համար, որոնք հանդիսանում են սույն ՀՕՏ-ի առարկան: Նման դեպքերում, այնուամենայնիվ, ԵՔ-ն չի զբաղեցնի անհրաժեշտ հողամասերը, մինչև՝ 1) օրենքով սահմանված կարգով համապատասխան դատական վարույթ չսկսվի, 2) ձեռք չբերվի դատարանի որոշումը և հավուր պատշաճի չհաղորդվի ԱԵԱ-ներին և 3) փոխհատուցման/վերականգնման գումարները չփոխանցվեն համապատասխան էսքրու հաշվին:

## 6.6 Օրենսդրության պահանջների պահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման պայմանները և մեխանիզմը

- 153) Սկզբունքորեն անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով բոլոր հողօգտագործողները կարող են օրենսդրության պահանջների պահպանմամբ գրանցվել, քանի դեռ նրանք չեն զբաղեցնում այնպիսի տարածքներ, որոնք պաշտոնապես պահվում են հատուկ հանրային նպատակներով օգտագործման համար, ինչպես օրինակ՝ ռազմական, հիվանդանոցի, դպրոցի տարածքներ կամ տարածքներ, որոնք էկոլոգիապես համապատասխան չեն բնակչության համար (գետի հուն, ռադիոակտիվ տարածք կամ այլ վտանգավոր կամ ոչ պիտանի հողեր): ՀՀ օրենսդրությունը սահմանում է օրենսդրության պահանջների պահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մանրամասն ընթացակարգը:
- 154) Այնուամենայնիվ, սույն Ծրագրի համար ընդունված մոտեցումը նախատեսում է օրենսդրության պահանջների պահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման ենթակա գույքի գրանցման ավելի հեշտ ընթացակարգ, որին հետևում է արդարացի և համարժեք փոխհատուցումը՝ որպես օրենսդրության պահանջների պահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ գրանցված գույքի դիմաց: ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով բնակելի շինությունների դեպքում ԱԵԱ-ները ստիպված են նախաձեռնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված անշարժ գույքի գրանցման գործընթացը՝ համաձայն համապատասխան վարչական կանոնակարգերի: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման խնդրի վերաբերյալ ՀՕՏ-ում սահմանված մոտեցումը հետևյալն է.

ա. Ազդեցության ենթակա ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով բնակելի շինությունների դեպքում ԱԵԱ-ները կանցնեն օրենքով սահմանված կարգով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման գործընթաց, սակայն կփոխհատուցվեն որպես օրենսդրության պահանջների

պահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձինք/սեփականատերեր (փոխարինման արժեքի 115%):

բ. Ազդեցության ենթակա ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով ոչ բնակելի շինությունների դեպքում ԱԵԱ-ները ստիպված չեն լինի անցնել օրենքով սահմանված կարգով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման գործընթաց: Փոխհատուցման գումարը կվճարվի փոխարինման արժեքով առանց օրենսդրության պահանջների պահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման ծախսերի:

գ. Ազդեցության ենթակա և ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողամասի դեպքում, որը ենթակա է գրանցման, ԱԵԱ-ները օրենքով սահմանված կարգով կգրանցվեն և կվճարվեն որպես անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքներ ունեցող սեփականատերեր:

դ. Ազդեցության ենթակա հողամասի դեպքում, որը ենթակա չէ օրենքով սահմանված կարգով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, ԱԵԱ-ներին կտրվի փոխհատուցում՝ տեղափոխության միանգամյա նպաստ, ազդեցության ենթակա հողամասի կադաստրային կամ շուկայական արժեքի (որն ավելի բարձր է) 25% -ի չափով:

155) Վարձակալները կօրինականացվեն և կփոխհատուցվեն որպես լիարժեք սեփականատերեր, կամ էլ նրանց վարձակալությամբ կտրվի նոր հող: Եթե դա հնարավոր չէ, նրանք կստանան դրամական փոխհատուցում, որը համարժեք է ազդեցության ենթակա հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեքին (որն ավելի բարձր է)՝ գումարած 15% օժանդակություն՝ կախված վարձակալության մնացած տարիների թվից հետևյալ կերպով՝ ա) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%-ը, բ) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%-ը, գ) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%-ը, դ) 25 տարի և ավելի՝ հողի արժեքի 25%-ը:

## 7 ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ, ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄ ԵՎ ԵԿԱՄՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

### 7.1 Ընդհանուր տեղեկություններ

- 156) Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների կենսապահովման միջոցների վերականգնման նկատառումով լրացուցիչ աջակցության միջոցների բացահայտման նպատակով՝ ԾԻԳ-ը և Խորհրդատուն ԱԵԱ-ների և համապատասխան տեղական իշխանությունների հետ իրականացրել են հանրային լուսմներ: Ծրագրի շրջանակներում սոցիալ-տնտեսական հետազոտության համար տվյալներ հավաքագրելու ընթացքում ԱԵԱ-ներին նաև տրվեց հնարավորություն՝ գնահատելու կենսապահովման միջոցները վերականգնելու իրենց հնարավորություններն այն փոխհատուցումով, որն իրենք իրավասու են ստանալ՝ համաձայն ՀՕՇ-ի: Ավելին՝ ԱԵԱ-ներին հնարավորություն է ընձեռվել առաջարկել լրացուցիչ միջոցառումներ, որոնք, իրենց կարծիքով, նվազագույնը կապահովեն նախքան Ծրագիրն ունեցած իրենց կենսամակարդակի վերականգնումը:
- 157) Իրականացված տեղական մարդահամարը բացահայտել է 52 ազդեցության ենթակա տնային տնտեսություն ՀՕՏ-ի տարածքում: Համաձայն ՀՕՇ-ի՝ բոլոր ԱԵՏՏ-ները հաշվի են առնվել սույն ՀՕՏ-ի մշակման ընթացքում չափված իրենց եկամուտների կորստի դիմաց համապատասխանաբար փոխհատուցվելու համար: Մարդահամարն ու սոցիալ-տնտեսական հետազոտությունը ցույց են տալիս, որ հատված 7-ում հիմնական ազդեցությունը կլինի բնակիչների վերաբնակեցումը, իսկ հատված 8-ում՝ ձեռնարկատիրական գործունեությունների վերաբնակեցումը ձեռնարկատիրական գործունեության հիմնական կառույցների/շինությունների կորստի պատճառով:

### 7.2 Ազդեցության ենթակա գյուղատնտեսական եկամուտ

- 158) Կան ընդամենը 20 ԱԵՏՏ-ներ (հատված 7-ում՝ 12 ԱԵՏՏ, հատված 8-ում՝ 8 ԱԵՏՏ), որոնք ազդեցության ենթակա հողակտորներից կկորցնեն գյուղատնտեսական եկամտի ավելի քան 10%-ը:

**Աղյուսակ 7-1 Փոխհատուցում և օժանդակություն եկամուտը կորցնող ազդեցության ենթակա անձանց համար**

ԱԵՏՏ-ների թիվը	Կորստի նկարագրությունը	Փոխհատուցման Մանրամասները	Տրամադրվող օժանդակությունը
20	Գյուղատնտեսական եկամտի կորուստ (ներառյալ իրենց սպառման համար)	Փոխհատուցում ազդեցության ենթակա բոլոր մշակաբույսերի և ծառերի դիմաց իրենց փոխարինման արժեքով՝ ազդեցության ենթակա գույքերի հիման վրա	Վերականգնման նպաստ ՀՀ պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողակտորների դիմաց՝ վերջինիս շուկայական արժեքի 25% -ի չափով Փոխարինման արժեքի փոխհատուցում + 15% սեփականություն հանդիսացող հողակտորների դեպքում
		Փոխհատուցում հողի վրա իրականացված բոլոր բարելավումների և գույքերի համար	Օժանդակություն զգալի ազդեցության ենթակա տնային տնտեսություններին մրգատու ծառերի կորստի դիմաց՝ 1 տարվա բերքի արժեքի չափով

**7.3 Ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեությունները**

159) Ծրագրի արդյունքում մշտական ազդեցության կենթարկվի ընդամենը թվով հինգ ձեռնարկատիրական գործունեություն: Ստորև բերված աղյուսակն (Աղյուսակ 7-2) ամփոփում է ազդեցության մանրամասները իրացման գոտում իրականացվող ձեռնարկատիրական գործունեության վրա, որոնք պետք է մշտապես տեղափոխվեն:



**Աղյուսակ 7-2 Գործունեության վայրը տեղափոխող ձեռնարկատիրական գործունեության վրա ազդեցության մանրամասները**

**Հասված 8**

No	Ձեռնարկատիրական գործունեության տեսակը	Աշխատողներ	Ազդեցության ենթակա հող					Ազդեցության ենթակա շինություն		Ազդեցության ենթակա բարելավումներ			Ազդեցության ենթակա տնային տնտեսություններ			
		Քանակը	Մեփականատեր	Օգտագործման կարգավիճակը	Ընդհանուր մակերես, մ <sup>2</sup>	Ազդեցության ենթակա տարածքը, (մ <sup>2</sup> )	Ազդեցության ենթակա % ընդհանուրի մեջ	Հողակտորի տեսակը	Անվանումը	մ <sup>2</sup> , հատ	Անվանումը	Լյութեր	Տարածքը, մ <sup>2</sup> , հատ	ԱԵՏՏ-ներ	ԱԵՏՏ անդամներ	Տեղափոխում
1	<b>Ավտոյուղերի վաճառք</b> (հարկային հայտարարագրի առկայությամբ)	0	Համայնք (ԵՔ)	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործում	195.15	195.15	100.00	Հասարակական	Ավտոյուղերի խանութ	47.80	-	-	-	1	4	Ձեռնարկատիրական գործունեության տեղափոխում
									Ավտոլվացման կետ	40.50						
									Պահեստ	40.40						
									Տեխսպասարկման հոր	5.40						
									Ծածկ	48.80						
Համայնք (ԵՔ)	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործում	39.24	39.24	100.00	Հասարակական	Սանհանգույց	2.80	Տարածք	Բետոնե սալիկներ	22.40	Տարածք	Բետոնապատ տարածք	2.00			
2	<b>Մարտկոցների վաճառք</b> (հարկային հայտարարագրի առկայությամբ)	0	Համայնք (ԵՔ)	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործում	10.00	10	100.00	Հասարակական	Տաղավար	10.00	-	-	-	1	4	Ձեռնարկատիրական գործունեության տեղափոխում
3	<b>Ավտոմասերի վաճառք</b> (հարկային հայտարարագրի առկայությամբ)	1	Համայնք (ԵՔ)	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ	111.12	111.12	100.00	Հասարակական	Ավտոմասերի խանութ	76.97	Տարածք	Բետոնե սալիկներ	23.10	1	8	Ձեռնարկատիրական գործունեության տեղափոխում

**Հատված 8**

No	Ձեռնարկատիրական գործունեության տեսակը	Աշխատողներ	Ազդեցության ենթակա հող						Ազդեցության ենթակա շինություն		Ազդեցության ենթակա բարելավումներ				Ազդեցության ենթակա տնային տնտեսություններ		
		Քանակը	Սեփականատեր	Օգտագործման կարգավիճակը	Ընդհանուր մակերես, մ²	Ազդեցության ենթակա տարածքը, (մ²)	Ազդեցության ենթակա % ընդհանուրի մեջ	Հողակտորի տեսակը	Անվանումը	մ², հատ	Անվանումը	Նյութեր	Տարածքը, մ², հատ	ԱԵՏՏ-ներ	ԱԵՏՏ անդամներ	Տեղափոխում	
				չգրանցված իրավունքով օգտագործում													
			Համայնք (ԵՔ)	ՀՀ օրենսդրության պահանջների՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործում	45.70	45.70	100.00	Հասարակական	Ավտոմատերի խանութ	40.00	-	-	-				
4	<b>Ծաղկի վաճառք</b> (առանց հարկային հայտարարագրի)	0	Համայնք (ԵՔ)	ՀՀ օրենսդրության պահանջների՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործում	20.00	20.00	100.00	Հասարակական	Ծաղկի սրահ	28.77	-	-	-	1	10	Ձեռնարկատիրական գործունեության տեղափոխում	
5	<b>Ավտոտեխսպասարկում</b> (հարկային հայտարարագրի առկայությամբ)	0	Համայնք (ԵՔ)	ՀՀ օրենսդրության պահանջների՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործում	40.70	40.70	100.00	Հասարակական	Տեխսպասարկման կետ	20.60	Տարածք	Ասֆալտ	16.22	1	7	Ձեռնարկատիրական գործունեության տեղափոխում	
									Տեխսպասարկման հոր	4.60							

- 192) ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում, որոնք վերաբերում են ԱԵԱ-ների գույքի օտարմանը, սեփականատերերը, իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը և ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք կարող են ունենալ հարկային պարտավորություններ: Այդ առնչությամբ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-185-Ն օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ օտարողը պետք է օտարվող գույքի սեփականատիրոջը փոխհատուցի գույքի օտարման հետ կապված բոլոր ֆինանսական պարտավորությունները (հարկեր, պարտադիր վճարներ և այլն):
- 193) Այնուամենայնիվ, հարկավոր է հաշվի առնել այն փաստը, որ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-107 օրենքի 15-րդ հոդվածի «բ» ենթակետի համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ հարկային օրենսդրությամբ, հարկ վճարողները պետք է ինքնուրույն հաշվարկեն հարկերի վճարվելիք գումարը և այն փոխանցեն բյուջե: Վերոնշյալ դրույթը ենթադրում է, որ հարկ վճարող ԱԵԱ-ները պետք է ինքնուրույն հաշվարկեն գույքի օտարման հետևանքով վճարման ենթակա հարկերը և վճարեն դրանք պետական բյուջե օրենքով սահմանված ժամկետներում, իսկ օտարողը պարտավոր է ԱԵԱ-ին փոխհատուցել գույքի օտարման հետևանքով առաջացող բոլոր հարկերի ամբողջ գումարը:
- 194) Միևնույն ժամանակ բնակելի և հասարակական նշանակության գույքերի, այդ թվում՝ հողակտորների և շինությունների, օտարման առնչությամբ վճարման ենթակա ԱԱՀ-ն հաշվարկված և ընդգրկված է ՀՕՏԾ-ի բյուջեում: (Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացվող առուվաճառքի գործարքները որոշ դեպքերում դիտարկվում են որպես ապրանքի մատակարարում և հարկվում են ավելացած արժեքի հարկով (ԱԱՀ), որը համարժեք է ապրանքի/գույքի արժեքի 20%-ին: Մասնավորապես՝ դա վերաբերում է գույքի օտարմանը (արտադրական, առևտրային և հասարակական նշանակության գույք, ներառյալ շենքերը և շինությունները, արդյունաբերական, ընդերքային և այլ արտադրական նշանակության գույք և հող), որը պատկանում է ֆիզիկական անձին և նախատեսված է ձեռնարկատիրական գործունեության համար: «Ավելացված Արժեքի Հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի մայիսի 14-ի ՀՕ-118 օրենք, հոդված 6:) 58,350,000 ՀՀ դրամ գումարից պակաս գործարքները չեն հարկվում: 58,350,000.00 ՀՀ դրամը գերազանցող գործարքները հարկվում են 58,350,000.00 ՀՀ դրամը գերազանցող մասի 20%-ի չափով:
- 195) Որպես ԱԱՀ, ազդեցության ենթակա գույքերի համար կվճարվի ընդամենը **21,071,131.06** ՀՀ դրամ:

**Աղյուսակ 8-23 Ավելացված արժեքի հարկ ազդեցության ենթակա գույքերի համար**

Գույքի տեսակը՝ ըստ կադաստրի	Փոխհատուցման գումարը	ԱԱՀ (ՀՀ դրամ)
<b>Ա. Հասված 7</b>		
Գազի լիցքավորման կայանի զբաղեցման համար (բնակելի)	31,354,621.00	6,270,924.20
<b>Բ. Հասված 8</b>		
Առևտրի սրահի սպասարկման համար (բնակելի)	18,659,423.80	3,731,884.76
Խառը կառուցապատում (բնակելի)	55,341,610.50	11,068,322.10
<b>Ենթաընդհանուր (Բ)</b>	<b>74,001,034.30</b>	<b>14,800,206.86</b>
<b>Ընդամենը (Ա+Բ)</b>	<b>105,355,655.30</b>	<b>21,071,131.06</b>

196) Հաշվի առնելով իրավական դրույթները՝ ՀՕՏ-ի մշակման փուլում չհաջողվեց հաշվարկել ճշգրիտ գումարը, որը պահանջվում է ՀՀ օրենսդրության համաձայն պարտավորությունը կատարելու համար: Դա կկատարվի ՀՕՏ-ի իրականացման փուլում (հարկերի ճշգրիտ գումարը պետք է հաշվարկվի ԱԵԱ-ների կողմից): (ՀՕՏ-ի իրականացման փուլում ԱԵԱ-ները կտեղեկացվեն հարկերի հետ կապված խնդիրների և այն գործողությունների մասին, որոնք պետք է կատարվեն իրենց կողմից: ԱԵԱ-ներին կտրամադրվի հատուկ ծանուցում և խորհրդատվություն հարկային օրենսդրության պահանջներին ուշադրություն դարձնելու առնչությամբ: ) Ի լրումն ազդեցության ենթակա գույքերի համար հաշվարկված ԱԱՀ-ի, այն դեպքերում, երբ ԱԵԱ-ները ՕԻԳ-ին ներկայացնեն հաշվարկված հարկերի գումարը՝ հիմնավորող փաստաթղթերի հետ միասին, օտարողի՝ ՀՀ օրենսդրության համաձայն առաջացող հարկային պարտավորությունները կվճարվեն ՀՕՏ-ի Ամփոփ բյուջեի «Չնախատեսված ծախսեր» հոդվածից:

### 8.9 Բյուջեի (ծախսերի) ամփոփում

- 197) Ծրագրի ՀՕՏ-ի իրականացման ընդհանուր ծախսերը կազմում են **2,267,895,770.23** ՀՀ դրամ, որը համարժեք է **4,764,486.91** ԱՄՆ դոլարի, ինչպես ցույց է տրված ստորև բերված աղյուսակում: Ընդհանուր գումարից Երևանի քաղաքապետարանի կողմից կտրամադրվի 1,070,286,831.88 ՀՀ դրամ և ՀՀ կառավարության կողմից՝ 47,193,480.24 ՀՀ դրամ: ՀՕՏ-ի իրականացման համար անհրաժեշտ մնացած 1,150,415,458.11 ՀՀ դրամը կհատկացվի ԱԶԲ-ի վարկից: Երևանի քաղաքապետարանը կապահովի, որ հողի օտարման և տարաբնակեցման համար վճարվող փոխհատուցման գումարները հաստատվեն բոլոր աղբյուրների կողմից և հատկացվեն ժամանակին՝ սույն ՀՕՏ-ի իրականացման նպատակով:
- 198) ՀՕՏ-ի բյուջեն նաև ներառում է վարչական այլ ծախսեր, որոնք կկատարվեն ՀՕՏ-ի իրականացման ընթացքում: Այդ ծախսը հաշվարկվել է և ներառվել է բյուջեում որպես միանվագ վճար:
- 199) Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ամփոփ բյուջեն՝ ըստ ֆինանսավորման աղբյուրի.

Աղյուսակ 8-24 Ամփոփ բյուջեն

Հոդվածը	Ֆինանսավորման աղբյուրը	Ընդամենը/ՀՀ դրամ	Ընդամենը/ԱՄՆ դոլար
<b>I. Փոխհատուցման բյուջեն, ներառյալ՝ նպաստները</b>			
Փոխհատուցում սեփականության իրավունքով տնօրինվող հողի համար (ներառյալ 15% օժանդակություն)	ԵՔ	822,255,223,30	1,727,426,94
Վերականգնման նպաստ ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողի համար	ԵՔ	69,661,606,25	146,347,91
Փոխհատուցում բնակելի շինությունների համար	ԱԶԲ վարկ	545,001,074,70	1,144,960,24
Փոխհատուցում ոչ բնակելի շինությունների համար	ԱԶԲ վարկ	165,294,402,25	347,257,15
Փոխհատուցում վերանորոգված շինությունների համար	ԱԶԲ վարկ	663,450,00	1,393,80
Փոխհատուցում ցանկապատերի համար	ԱԶԲ վարկ	60,582,282,40	127,273,70
Փոխհատուցում բարելավումների համար	ԱԶԲ վարկ	15,865,550,00	33,330,99
Փոխհատուցում մշակաբույսերի համար	ԱԶԲ վարկ	758,501,00	1,593,49
Փոխհատուցում մրգատու ծառերի համար	ԱԶԲ վարկ	66,070,080,00	138,802,69



Հոդվածը	Ֆինանսավորման աղբյուրը	Ընդամենը/ՀՀ դրամ	Ընդամենը/ԱՄՆ դոլար
<b>I. Փոխհատուցման բյուջեն, ներառյալ՝ նպաստները</b>			
Փոխհատուցում դեռևս ոչ պտղատու ծառերի և թփերի համար	ԱԶԲ վարկ	869,690,00	1,827,08
Փոխհատուցում նորատունկ մրգատու ծառերի և թփերի համար	ԱԶԲ վարկ	126,250,00	265,23
Փոխհատուցում փայտանյութ տվող ծառերի համար	ԱԶԲ վարկ	424,870,00	892,58
Փոխհատուցում դեկորատիվ ծառերի և թփերի համար	ԱԶԲ վարկ	2,408,500,00	5,059,87
Փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության կորուստների համար	ԱԶԲ վարկ	1,858,976,00	3,905,41
Փոխհատուցում զբաղվածության կորստի համար	ԱԶԲ վարկ	441,000,00	926,47
Նպաստ զգալի ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների համար	ԱԶԲ վարկ	18,099,441,00	38,024,04
Նպաստ սոցիալապես խոցելի անձանց համար	ԱԶԲ վարկ	2,640,000,00	5,546,22
Ապամոնտաժման ենթակա տարբեր մասեր ունեցող շենքերի և շինությունների տրանսպորտային ծախսեր	ԱԶԲ վարկ	1,907,250,00	4,006,83
Վերաբնակեցվող ԱԵՏՏ-ների կենսապահովման ծախսեր	ԱԶԲ վարկ	660,000,00	1,386,55
Պետական գրանցման ծառայությունների վճար	ՀՀ կառավարություն	3,258,000,00	6,844,54
ԱԱՀ	ՀՀ կառավարություն	21,071,131,06	44,267,08
<b>Ենթաընդհանուր I</b>	-	<b>1,799,917,277,96</b>	<b>3,781,338,82</b>
<b>II. Վարչական ծախսեր</b>			
Ուղղակի վարչական ծախսեր (Ենթաընդհանուրի 5%-ը)	ԱԶԲ վարկ (83.33%)	74,993,553.39	157,549.48
	ՀՀ կառավարություն (16.67%)	15,002,310.51	31,517.46
<b>Ենթաընդհանուր II</b>		<b>1,889,913,141.86</b>	<b>3,970,405.76</b>
Զնախատեսված ծախսեր 20%	ԱԶԲ վարկ	191,750,587.37	402,837.37
	ԵԲ	178,370,002.33	374,726.90
	ՀՀ կառավարություն	7,862,038.67	16,516.89
<b>Ընդհանուր ՀՕՏ բյուջեն</b>	-	<b>2,267,895,770.23</b>	<b>4,764,486.91</b>
<i>Արտարժույթի փոխարժեքը 2016-ի օգոստոսի 16-ի դրությամբ, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկ (ԱՄՆ դոլար) 1 ԱՄՆ դոլար = 476 ՀՀ դրամ</i>			

**Աղյուսակ 8-25 Ամփոփ բյուջեն՝ ըստ ֆինանսավորման յուրաքանչյուր աղբյուրի**

Ֆինանսավորման աղբյուրը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Երևանի քաղաքապետարան	1,070,286,831.88	2,248,501.75
ԱԶԲ վարկ	1,150,415,458.11	2,416,839.20
Պետական բյուջե	47,193,480.24	99,145.97
<b>Ընդամենը</b>	<b>2,267,895,770.23</b>	<b>4,764,486.91</b>

## 9 ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

### 9.1 Ընդհանուր տեղեկություններ

- 200) ՀՕՏ գործողությունների պլանավորումը և իրականացումը ներառում է առանձին գործընթացներ և տարբեր մասնակիցների փոխգործունեությունը: Սույն գլուխը մանրամասներ է ներկայացնում բոլոր կողմերի, ինչպես նաև ՀՕՏ գործողությունների ընթացքում նրանց դերի մասին:

### 9.2 Հիմնական գործակալությունները և կազմակերպությունները

#### 9.2.1 Ասիական զարգացման բանկ

- 201) Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) կհանդիսանա Ծրագրի ֆինանսավորող մարմինը: Բացի ֆինանսավորումից՝ ԱԶԲ-ն պարբերաբար կդիտարկի Ծրագիրը և ՀՕՏ՝ իրականացումը, ինչպես նաև հստակություն կապահովի պայմանագրերի ստորագրման և շինարարական աշխատանքների նախաձեռնման առնչությամբ:

#### 9.2.2 ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն

- 202) ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը ծրագրի Գործադիր մարմինն (ԳՄ) է: Այն իրականացնում է Ծրագրի ընդհանուր գործառնությունները, այդ թվում՝ գործակալությունների միջև համակարգումը:

#### 9.2.3 Երևանի քաղաքապետարանը և ծրագրի իրականացման գրասենյակը


- 203) Երևանի քաղաքապետարանը (ԵՔ) ընդհանուր պատասխանատվություն է կրում ծրագրի համար: Դա ներառում է նախապատրաստումը, բոլոր ՀՕՏ առաջադրանքների իրականացումն ու ֆինանսավորումը, ինչպես նաև գործակալությունների միջև համակարգումը: ԵՔ-ն Ծրագրին առնչվող իր գործառնություններն իրականացնում է Ծրագրի իրականացման գրասենյակի միջոցով (ԾԻԳ): ԾԻԳ-ի տարաբնակեցման մասնագետն (ՏՄ) անմիջականորեն հաշվետու է ԾԻԳ-ի տնօրենին՝ բոլոր ՀՕՏ առաջադրանքների պլանավորման և իրականացման ընդհանուր կառավարման առումով:

- 204) ՏՄ-ն պատասխանատու կլինի հետևյալի համար՝ 1) համագործակցություն ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումների հետ, 2) աջակցություն խորհրդատուներին՝ քարտեզագրման, հետազոտման և սեփականության իրավունքի ստուգման աշխատանքներում, 3) ՀՕՏ՝ի փոխանցում ԱԶԲ-ին՝ դիտարկման նպատակով, 4) ՀՕՏ՝ի հրապարակում, 5) ՀՕՏ՝ի իրականացման պլանավորում ու կառավարում և փոխհատուցման բաշխում, 6) աջակցություն՝ բողոքների դեպքում, 7) պատշաճ ներքին մոնիթորինգի ապահովում: ՏՄ-ն նաև կտրամադրի բոլոր անհրաժեշտ

փաստաթղթերը՝ ապահովելու ՀՕՏ բյուջեների շտապ տրամադրումն ԱԵԱ-ներին, և կշարունակի ՀՕՏ-ին առնչվող բոլոր միջոցառումների համակարգումը: Բացի այդ, ԾԻԳ-ի ՏՄ-ն կապ կհանդիսանա ՄՆՇՎԽ-ի տարաբնակեցման մասնագետների և ԵԲ-ի, ԾԿԽ-ի, ԿԳ-ի, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, ԱԶԲ-ի միջև, ինչպես նաև ՀՕՏ առաջադրանքների առնչությամբ անմիջական հարաբերություններ կզարգացնի ու կպահպանի կառավարության մարմինների հետ: Կախված աշխատանքների շրջանակներից ու բարդությունից՝ ԾԻԳ-ն ավելի շատ մասնագետներ կներգրավի ՀՕՏԾ-ի իրականացման ընթացքում, եթե նման անհրաժեշտություն առաջանա:

205) Ծրագրի կառավարման խորհուրդը (ԾԿԽ) կազմված է ԵԲ-ի, շահառու կողմ համարվող նախարարությունների ներկայացուցիչներից և ղեկավարվում է ՀՀ վարչապետի կողմից: Այն ստեղծվել է՝ Ծրագիրը վերահսկելու և ՀՀ վարչապետի 2009 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 892-Ա որոշմամբ հաստատված կանոնադրությամբ իրեն վերապահված որոշումներ ընդունելու համար:

**Նկար 9-1 Հողի օտարման և տարաբնակեցման կազմակերպչական կառուցվածքը և գործողությունները**



**9.2.4 Խորհրդատուներ**

206) ՀՕՏԾ-ի նախապատրաստման և իրականացման նպատակով ներգրավվել են մի շարք տարբեր խորհրդատուներ՝

**ա. Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկողության խորհրդատուներ (ՄՆՇՎԽ)**՝ ներառում է միջազգային և տեղական ՀՕՏ կարողությունը և հետազոտություն կատարած թիմերը, որոնք սույն ՀՕՏԾ-ի պատրաստման համար անհրաժեշտ աշխատանքներ են իրականացրել: ՄՆՇՎԽ-ն կաջակցի հատվածներ 7 և 8-ի ընդհանուր վերահսկողության հարցում՝ կապված ՀՕՏ միջոցառումների հետ:

**բ. Արտաքին մոնիթորինգի գործակալություն (ԱՄԳ)**՝ այս խորհրդատուին վարձելու գործընթացը շարունակվում է: ԱՄԳ-ն կիրականացնի սույն ՀՕՏԾ-ի իրականացման արտաքին մոնիթորինգը և գնահատումը:

**գ. Մանրամասն չափագրման և գույքերի անկախ գնահատողներ՝** սա ՄՆՇՎԽ-ի կողմից վարձված հավատարմագրված ընկերություն է՝ չափման և գույքերի գույքագրման, ինչպես նաև սույն ՀՕՏՕ-ի նախապատրաստման ընթացքում ազդեցության ենթակա գույքերի գնահատման համար:

### 9.3 Այլ գործակալություններ և հաստատություններ

207) Մի քանի այլ պետական մարմիններ հատուկ դեր ունեն ՀՕՏ գործընթացներում: Դրանք են՝

**ա. ՀՀ ֆինանսների նախարարությունը՝** ՀՕՏՕ-ների իրականացման համար բյուջետային միջոցները (բացի հողի փոխհատուցման համար նախատեսված բյուջեից և հողի օտարման հետ կապված հարկերից, տուրքերից, վճարներից և գործառնական ծախսերից) կտրամադրվեն ԵՔ-ին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, վերջնական ՀՕՏՕ-ի ՀՀ կառավարության կողմից հաստատումից հետո:

**բ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն.** ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատասխանատու է Ընտանիքների խոցելիության գնահատման համակարգում (ԸԽԳՀ) հաշվառված և նպաստ ստացող խոցելի ԱԵՏՏ-ների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու համար:

**գ. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն՝** պատասխանատու է անշարժ գույքի սեփականատիրության կարգավիճակի մասին տեղեկատվության տրամադրման համար և զբաղվում է սեփականության պետական գրանցումով:

**դ. Երևանի համապատասխան վարչական շրջանի ղեկավար.** Երևանի վարչական շրջանի ղեկավարը պատասխանատու է ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ, անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողակտորների վերաբերյալ տեղեկանքների հաստատման համար:

**ե. Դատարաններ՝** սեփականության օտարումը դատական կարգով իրականացնելու դեպքում ԵՔ-ն՝ ի դեմս ԾԻԳ-ի, կողմ կհանդիսանա դատարանում, որը կքննի օտարվող սեփականության գնի վերաբերյալ հայցը:

### 9.4 ՀՕՏՕ իրականացման կարողությունները

208) ԳՄ/ԾԻԳ-ը փորձ է ձեռք բերել նախորդ ծրագրային հատվածների համար ՀՕՏՕ-ներ պատրաստելու և իրականացնելու ընթացքում և ներկայումս ունի բավականաչափ կարողություններ սույն ՀՕՏՕ-ի իրականացման համար: ՀՕՏՕ-ի իրականացման համար ԾԻԳ-ը կվարձի և կմոբիլիզացնի փորձառու իրականացնող խումբ: Ի լրումն, ԱԶԲ-ն պարբերաբար ուսուցողական սեմինարներ է կազմակերպում ՀՕՏՕ-ի իրականացման ոլորտների վերաբերյալ Տարածաշրջանային Տեխնիկական Աջակցություն (SSU) 7433-ի շրջանակներում՝ Հողի օտարման և տարաբնակեցման երաշխիքների համապատասխանեցում Կենտրոնական և Արևմտյան Ասիայի տարածաշրջանում: ԾԻԳ-ի անվտանգության հարցերով զբաղվող անձնակազմի անդամները հրավիրվում են մասնակցելու այդ սեմինարներին:

# 10 ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

## 10.1 Ընդհանուր տեղեկություններ

- 209) Սույն գլուխը նկարագրում է ՀՕՏԾ-ի պատրաստման համար նախաձեռնված քայլերը և դրա հաջող իրականացման համար անհրաժեշտ հետագա գործողությունները: Իրականացման ժամանակացույցը ներկայացված է սույն գլխի վերջում:

## 10.2 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի պատրաստման գործողությունները

- 210) ԻՄ-ը կսկսի ՀՕՏԾ-ի իրականացումն ԱԶԲ-ի և ՀՀ կառավարության կողմից վերջինիս հաստատումից անմիջապես հետո: ՀՕՏԾ-ի արդյունավետ իրականացման նպատակով ԾԻԳ-ը կվարձի ՀՕՏԾ իրականացնող լրացուցիչ մասնագետներ՝ կախված աշխատանքի ծավալից: Այն արդեն իսկ նախաձեռնել է որոշ նախնական գործողություններ և որոշակի նախապատրաստական առաջադրանքներ ՀՕՏԾ իրականացումը հաջողությամբ ավարտելու առնչությամբ: Ստորև բերված են մինչ օրս ավարտված հիմնական նախապատրաստական առաջադրանքները.

ա. Ծրագրի իրականացման գրասենյակի (ԾԻԳ) հիմնում,

բ. 2016 թ. օգոստոսի 3-ը որպես պաշտոնական կասեցման օր սահմանելը,

գ. ՀՕՏԾ-ի դրույթների հիման վրա ազդեցությունների, ԱԵԱ-ների և ԱԵՏՏ-ների, անդամների և ծախսերի վերաբերյալ տվյալների հավաքագրում և թարմացում,

դ. վերջնական հանրային լսումներ ,

ե. բոլոր ԱԵԱ-ների գույքի նկարագրության արձանագրությունների հրապարակում,

զ. Արտաքին մոնիթորինգի գործակալության (ԱՄԳ) նշանակում (Արտաքին մոնիթորինգի գործակալության (ԱՄԳ) ընտրության մրցույթը ընթացքում է, և վերջինիս մոբիլիզացումը նախատեսվում է նախքան ՀՕՏԾ իրականացման մեկնարկը:))

է. Սույն ՀՕՏԾ -ի հաստատումը ԾԻԳ-ի կողմից և ներկայացումը ԱԶԲ-ի հաստատումը՝ այս փաստաթղթի տեսքով:

- 211) Գույքերի նկարագրության արձանագրությունների ստորագրումն իրականացվել է ՀՕՏԾ-ի մշակման ընթացքում: Ընդհանուր 55 արձանագրություններից ստորագրվեց, 32-ը, իսկ մնացած 23-ը տարբեր պատճառներով չստորագրվեցին: Գույքերի նկարագրության արձանագրությունների չստորագրման պատճառները ներկայացված են 10-1 աղյուսակում: «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-185-Ն օրենքը պահանջում է, որ Ձեռքբերողը (ԻՄ) արձանագրություններն ուղարկի անշարժ գույքի սեփականատերերին (ԱԵԱ-ներին): Օրենքի համաձայն՝ ԱԵԱ-ները արձանագրությունները ստանալուց հետո 10 օրվա ընթացքում Ձեռքբերողին (ԻՄ-ին) իրենց բողոքները ներկայացնելու իրավունք ունեն:



**Աղյուսակ 10-1 Գույքերի նկարագրության արձանագրությունները չստորագրելու պատճառները**

No	Հրաժարված	Նշումներ	Չստորագրված	Նշումներ	Արձանագրությունների/ԱԵԱ-ների ընդհանուր թիվը
	Արձանագրությունների թիվը		Արձանագրությունների թիվը		
<b>Հատված 7</b>	1	ԱԵԱ-ն համաձայն չէ չափագրված հողակտորի մակերեսի հետ:	2	ՄՉՀ և ստորագրման ողջ ընթացքում 1 ԱԵԱ-ի հետ (2 հողակտորների սեփականատերը) հնարավոր չէր կապ հաստատել:	3
<b>Հատված 8</b>	11	<p>5 ԱԵԱ ընդհանրապես համաձայն չէ գույքի օտարմանը:</p> <p>2 ԱԵԱ (1 գույքի համասեփականատերեր) գույքն ամբողջությամբ օտարելու ցանկություն են հայտնել:</p> <p>1 ԱԵԱ հրաժարվեց արձանագրությունը ստորագրել, քանի որ հողակտորի ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվելու մասին տեղեկանքը չի հաստատվել թաղապետի կողմից:</p> <p>1 ԱԵԱ պնդում է, որ նոր ճանապարհի կառուցման հետևանքով այլևս ավտոկայանատեղ չի ունենում, ուստի ցանկանում է, որպեսզի ամբողջ գույքն օտարվի:</p> <p>1 ԱԵԱ (2 հողակտորների սեփականատերը) համաձայն չէ գույքի օտարմանը երթևեկության աղմուկի պատճառով. Նա ուզում է կա մ ամբողջությամբ օտարվի գույքը, կա մ էլ մնա այնպես, ինչպես եղել է:</p> <p>1 ԱԵԱ (ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործող) չի կարևորում Ծրագրի որևէ իրավական ընթացակարգ և բանավոր կերպով հրաժարվում է փոխհատուցման գումարից:</p>	9	4 ԱԵԱ ստորագրման ընթացքում ՀՀ-ում չէին: ՄՉՀ և ստորագրման ողջ ընթացքում 2 ԱԵԱ-ի հետ (որոնցից 1-ն ունի 4 հողակտոր) հնարավոր չէր կապ հաստատել:	20
<b>Շնորհանք</b>	12	-	11	-	23

**10.3 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման փուլերը**

212) ԻՄ-ն ԱԵԱ-ներին համապատասխան կարգով կձանուցի և կվճարի տարաբնակեցման համար նախատեսված փոխհատուցումը՝ սույն ՀՕՏԾ-ում սահմանված իրավասության չափանիշների համաձայն, ներառյալ՝ տեղափոխության և եկամտի վերականգնման աջակցությունը, նախքան շինարարական աշխատանքներն սկսելը:

213) ԱԵԱ-ների փոխհատուցումների հատկացման գործընթացը, որը համապատասխանում է Ծրագրի ՀՕՏ-ին և ՀՀ օրենսդրությանը, նկարագրված է ստորև:

**ա. Օտարման պայմանագրերի նախագծերի և համաձայնագրերի ուղարկումը.** ԱԶԲ-ի և ՀՀ կառավարության կողմից ՀՕՏ-ի հաստատումից անմիջապես հետո ԻՄ-ը պայմանագրերի նախագծերը և համաձայնագրերը կուղարկի ԱԵԱ-ներին: ԱԵԱ-ները պետք է պայմանագրերի նախագծում և համաձայնագրերում ներառեն բանկային հաշվեհամարները: ԻՄ-ն ԱԵԱ-ի հետ կկնքի վերջնական պայմանագիրը/համաձայնագիրը՝ վերջիններս ԱԵԱ-ին պատշաճ կարգով ներկայացնելուց հետո 3 ամսվա ընթացքում:

**բ. Պայմանագրերի և համաձայնագրերի ստորագրումը.** ԾԻԳ-ը կկնքի պայմանագրեր իրավական գրանցման կարգավիճակ ունեցող գույքի դիմաց փոխհատուցման համար և համաձայնագրեր՝ նպաստների տրամադրման համար առանց նոտարական վավերացման:

**գ. Հարկադիր օտարման ընթացակարգը.** այն դեպքում, եթե որոշ պատճառներով (տարաձայնություններ ԱԵԱ-ների հետ, իրավական կարգավիճակ ստանալու հետ կապված չլուծված խնդիրներ) ԱԵԱ-ների (սեփականատերեր և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներ) հետ վերջնական պայմանագիրը չի կնքվում պայմանագրի նախագիծը տրամադրելուց հետո 3 ամսվա ընթացքում, ապա վճարվելիք փոխհատուցման գումարը ԱԵԱ-ների անունով ի պահ կդրվի դատարանի դեպոզիտային հաշվին: ԱԵԱ-ն իրավունք ունի վերցնել գումարը դեպոզիտային հաշվից 7 օրվա ընթացքում: Այս դեպքում պայմանագիրը կհամարվի կնքված: Այլապես, ԻՄ-ը կնախաձեռնի հարկադիր օտարման գործընթաց՝ գործը փոխանցելով դատարանի քննությանը: Հարկադիր օտարման դեպքում դատարանի քննության առարկան կարող է լինել միայն գույքի փոխհատուցման գումարը: Օտարվող գույքի և այլ ակտիվների փոխհատուցման գումարի վերաբերյալ դատարանի որոշումը հիմք կհանդիսանա հողի օտարման համար: Նման դեպքերում տվյալ հողամասի վրա շինարարական աշխատանքները չեն սկսվի մինչև դատարանի կողմից որոշում կայացնելը և վերջինիս օրինական ուժի մեջ մտնելը:

**դ. Փոխհատուցման/նպաստների վճարումը.** փոխհատուցման գումարը կվճարվի պայմանագիրը կնքելուց հետո՝ 15 օրվա ընթացքում և 15%-ը կվճարվի ԱԵԱ-ի կողմից սեփականությունը ըստ հանձնման ակտի հանձնելուց հետո: Փոխհատուցումը կփոխանցվի ԱԵԱ-ի բանկային հաշվեհամարին:

**ե. Շինհրապարակի ազատումը.** փոխհատուցման/նպաստների ամբողջ գումարի փոխանցման օրից ԱԵԱ-ները կունենան 30 օր՝ վերաբնակեցման համար: Այս ժամանակաընթացքում նրանք պետք է հասցնեն ապամոնտաժել և տեղափոխել ապամոնտաժված/փրկված նյութերը՝ տների վերակառուցման և իրենց կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունը վերսկսելու նպատակով: ԻՄ-ն իրավունք ունի քանդել այդ կառույցները, եթե ԱԵԱ-ն չի արել դա համաձայնեցված ժամկետում:

214) Բողոքները կամ առարկությունները (եթե կան այդպիսիք) կլուծվեն՝ սույն ՀՕՏ-ում սահմանված բողոքների լուծման ընթացակարգի համաձայն: ՀՕՏ-ին առնչվող բոլոր գործողությունները կավարտվեն նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը:

215) ՀՕՏ-ից ազատ հատվածները Կապալառուին տրամադրելու գործընթացն արագացնելու նպատակով ԾԻԳ-ը կիրականացնի ՀՕՏ-ն ըստ հատվածների: Այսպիսով՝ յուրաքանչյուր հատվածի համար (հատված 7 և 8) կպատրաստվեն Համապատասխանության վերաբերյալ երկու հաշվետվություն:



## 10.4 Օրինականացման և շտկող միջոցառումների պլան

216) ՀՕՏՕ-ն վերջնականացնելիս մարդահամարի տվյալների, տարբեր պետական մարմիններից ստացված տվյալների, ինչպես նաև իրականացված ՄՉՀ-ի վերլուծության հիման վրա բացահայտվել են մի շարք տիպային դեպքեր և օրինական կարգավիճակ ստանալուն (օրինականացման) առնչվող դեպքեր, որոնց անհրաժեշտ կլինի անդրադառնալ ՀՕՏՕ-ի իրականացման ընթացքում: Օտարման պայմանագրերի ստորագրումը հնարավոր չի լինի առանց այս խնդիրների լուծման. դա կհանգեցնի նրան, որ դատարանը կկիրառի հարկադիր օտարման ընթացակարգ: Նման իրավիճակից խուսափելու և խնդիրները հաշտ ձևով լուծելու նպատակով սույն ՀՕՏՕ-ի ներքո մշակվել է Օրինականացման և շտկող միջոցառումների պլան (ՕՇՄՊ), և այն կիրականացվի ՀՕՏՕ-ի իրականացման ընթացքում: ՕՇՄՊ դեպքերը բաժանվում են երկու հիմնական խմբի.

- ա. ԱԵԱ-ների գույքերի օրինական կարգավիճակ ստանալուն առնչվող դեպքեր,
- բ. Կադաստրային շտկումների հետ կապված դեպքեր:

### 10.4.1 ԱԵԱ-ների՝ օրինական կարգավիճակ ստանալուն վերաբերող դեպքեր

217) ՀՕՏՕ-ի սկզբունքների համաձայն՝ օրինական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ-ները կարող են ստանալ օրինական կարգավիճակ և փոխհատուցվել՝ համաձայն Իրավունքների սխեմայով և ՀՕՏՕ-ի դրույթներով սահմանված փոխհատուցման իրավունքների: Համաձայն ՀՕՏՕ-ում սահմանված «օրինականացման պայմանների»՝ օրինական կարգավիճակ կարող են ստանալ այն ԱԵԱ-ները, ովքեր չունեն պետական գրանցում ստացած սեփականության կամ այլ գույքային իրավունքներ կամ այլ ակտիվներ ազդեցության ենթակա հողի նկատմամբ, սակայն ունեն որոշակի օրինական հայցեր, որոնք ծագում են օրենքի կամ գույքի փաստացի տիրապետման և օգտագործման ուժով, կամ վերջիններիս գույքային իրավունքների ձեռքբերման հնարավորություններն ուղղակիորեն բխում են ՀՀ օրենսդրությունից: Տիպային բնույթի օրինականացման խնդիրներն առնչվում են՝

- ա. բացակա ԱԵԱ-ներին,
- բ. արգելանքով ծանրաբեռնված գույքին:

### Հայաստանի Հանրապետությունից բացակա ԱԵԱ-ներ և անձնագրեր

218) Հատված 8-ում կան 2 ԱԵԱ-ներ (մեկ գույքի համասեփականատերեր), ովքեր բնակվում են Հայաստանից դուրս, սակայն ներկայացրել են անհրաժեշտ փաստաթղթերը:

219) Միննույն ժամանակ հնարավոր չեղավ ձեռք բերել վեց ԱԵԱ-ների անհրաժեշտ փաստաթղթերը, որոնցից չորսը հրաժարվեցին որևէ փաստաթուղթ տրամադրել, իսկ երկուսը ՄՉՀ-ի ընթացքում հասանելի չէին, և ոչ մի կերպ հնարավոր չեղավ կապ հաստատել նրանց հետ: Անձնագիրը կարևոր փաստաթուղթ է օտարման գործընթացը նախաձեռնելու և անձին հասանելիք փոխհատուցման գումարը ստանալու իրավունքը ստուգելու համար: Անհրաժեշտ է, որ բոլոր համապատասխան փաստաթղթերը հասանելի լինեն ԻՄ-ի համար: Բացի այդ, ԱԵԱ-ների ներկայությունը պահանջվում է իրենց գույքի օտարման համար: Այնուամենայնիվ, ՀՀ օրենսդրությունն ապահովում է մեխանիզմ՝ սեփականատիրոջ բացակայության կամ վերջինիս չգտնելու դեպքում մասնավոր սեփականությունն օտարելու համար: Բացակա սեփականատերերի (ովքեր չեն կարող ներկա գտնվել) խնդիրները լուծելու համար, կիրականացվի հետևյալ ընթացակարգը.

- ա. Բացակա սեփականատիրոջ կոնտակտային տվյալները և նրա վերաբերյալ այլ հնարավոր տեղեկությունները/տվյալները կհավաքագրվեն համայնքային իշխանությունից, բարեկամներից և ընկերներից:
- բ. ԱԵԱ-ները կտեղեկացվեն/կծանուցվեն իրենց հողերի/գույքի օտարման (պայմանագրերի նախագծերը ուղարկելու միջոցով) և նրանց մասնակցությունը պահանջող միջոցառումների վերաբերյալ:
- գ. Եթե ԱԵԱ-ն հայտնում է, որ չի կարող ներկա գտնվել, ապա նրան առաջարկվում է լիազորագրի անուն նշել, ով պայմանագիրը ստորագրելու ժամանակ հանդես կգա իր անունից:
- դ. Սեփականատիրոջ կամ նրա ներկայացուցչի կողմից պայմանագիրը չստորագրելու դեպքում գույքը դատական գործընթացի միջոցով կենթարկվի հարկադիր օտարման և փոխհատուցման գումարը կփոխանցվի դատարանի դեպոզիտային հաշվին: Դատարանը կվճարի այս գումարը այն անձին, որ կհաստատի այն ստանալու իրավասությունը՝ ներկայացնելով համապատասխան իրավական փաստաթղթերը:

**Արգելանքով ծանրաբեռնված գույք**

220) ՀՀ օրենսդրության համաձայն՝ գույքերը կարող են գտնվել հետևյալ ծանրաբեռնվածությունների ներքո՝ 1) հիպոթեք 2) արգելանք և 3) գրավ: ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ից ստացված տվյալների վերլուծության հիման վրա առկա են արգելանքի 10 դեպքեր (հողակտորներ), որոնցից մեկն արգելանքի տակ է, ինը գրավադրված են վարկի դիմաց: Նախքան օտարման պայմանագրի ստորագրումը արգելանքի տակ գտնվող օտարման ենթակա գույքը պետք է հանվի արգելանքից, այլապես նման դեպքերի համար պետք է կիրառվի բռնագրավման ընթացակարգ: Արգելանքի տակ գտնվող օտարվող սեփականությունը՝ արգելանքից հանելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները՝

- ա. Բացահայտել պարտատերերին, հասկանալ գույքի վրա արգելանք դնելու պատճառները և արգելանքից հանելու համար պահանջվող գործընթացը (օրինակ՝ հարցում հղել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կադաստրի պետական կոմիտե և ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն),
- բ. Առաջարկել պարտապանին (գույքի սեփականատիրոջը) բանակցել պարտատերերի հետ և միջոցներ ձեռնարկել գույքն արգելանքից հանելու համար (օրինակ՝ կնքել հաշտության համաձայնություն և ներկայացնել դատարանի հաստատմանը),
- գ. Աջակցել պարտապանին (գույքի սեփականատիրոջը) վերը նշված և այլ առնչվող փաստաթղթերը պատրաստելիս,
- դ. Պարտատիրոջ և պարտապանի միջև համաձայնություն ձեռք չբերելու դեպքում աջակցել պարտապանին (վերջիններիս անհամաձայնության դեպքում՝ պարտատերերին) դիմել դատարան՝ գույքը արգելանքից հանելու պահանջով,
- ե. ԱԵԱ-ներին աջակցելու համար կարող են նախաձեռնվել այլ անհրաժեշտ գործողություններ՝ գրավադրման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով:

221) Օրինական կարգավիճակ ստանալու բոլոր դեպքերի համար ԱԵԱ-ները ստիպված կլինեն նախաձեռնել վերը նկարագրված շտկման գործընթացը: Անհրաժեշտության դեպքում ՀՕՏՕ իրականացման խումբը կաջակցի ԱԵԱ-ներին և կուղղորդի անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը համապատասխան մարմին ներկայացնելու հարցում: Ինչպես սահմանված է ՀՕՏՕ-ում, օրինական կարգավիճակ ստանալու համար անհրաժեշտ ծախսերը կարող են վճարվել ՀՀ/ԵԲ կողմից ԱԵԱ-ին հատկացված փոխհատուցման գումարից, եթե ընդունելի է ԱԵԱ-ի համար:

#### 10.4.2 Կադաստրային ուղղումների հետ կապված դեպքեր

- 222) Առանձնակի դեպքերում կադաստրային քարտեզների և ՄՉՀ-ի տվյալների համեմատության/վերլուծության արդյունքում բացահայտվում են հողի տվյալների անհամապատասխանություններ: Հետևաբար, ազդեցությունը տարբերվում է չափագրված տվյալների և կադաստրային քարտեզների հիման վրա: Մասնավորապես՝ էլեկտրոնային կադաստրային քարտեզում երկու գույք ունեն 2.5 մ տեղակայվածության անհամապատասխանություն: Ազդեցության ենթակա հողակտորների կոորդինատները պետք է ուղղվեն կադաստրային քարտեզում և ազդեցությունների մասին տվյալներում փաստացի չափագրումների կոորդինատների հիման վրա:
- 223) ՀՕՏԾ-ի մշակման ընթացքում այս բոլոր դեպքերի մանրամասները ներկայացվել են ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ՝ ուղղումների համար համապատասխան հատակագծերով, որոնք ներկայումս ընթացքում են:
- 224) Օրինականացման և ուղղման դեպքերի համար գործընթացները կնախաձեռնվեն ԱԵԱ-ների կողմից, այդ թվում՝ պահանջվող ծախսերը (կադաստրային ուղղումների համար անհրաժեշտ հատակագծերը, որոնք պատրաստվել են ՄՆՇԿԼՍ-ի կողմից և արդեն ներկայացվել են ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ): Այնուամենայնիվ, ԾԻԳ-ը կարող է աջակցել նկարագրված բոլոր օրինականացման և ուղղման դեպքերին (իրավական հարցերի շուրջ խորհրդատվություն և կազմակերպչական հարցերում աջակցություն ԱԵԱ-ներին) միայն այն դեպքում, եթե ԱԵԱ-ն համաձայն է նախաձեռնել վերը նկարագրված ընթացակարգը: Օրինականացման և ուղղման դեպքերի ցանկը՝ մանրամասներով և ընդգրկված ԱԵՏՏ-ներով, ներկայացված է Աղյուսակ 10-1-ում:

Աղյուսակ 10-2 Օրինական կարգավիճակ ստանալու և կադաստրային ուղղումների դեպքերի ցանկը

No	Ճանապարհահատված	Կադաստրային ծածկագիրը	Խնդրի նկարագրությունը
<b>Օրինականացման դեպքերը</b>			
1	8	01-001-0582-0008	Համասեփականատերերը ՀՀ-ում չեն:
2	8	01-001-0582-0015	<i>Անձնագրի հետ կապված խնդիրներ</i> Հրաժարվել է որևէ փաստաթուղթ տրամադրելուց:
3	8	01-001-0582-0014	<i>Անձնագրի հետ կապված խնդիրներ</i> Հրաժարվել է որևէ փաստաթուղթ տրամադրելուց:
4	8	01-001-0582-0002	<i>Անձնագրի հետ կապված խնդիրներ</i> Հրաժարվել է որևէ փաստաթուղթ տրամադրելուց:
5	8	01-001-0586-0001	
6	8	01-001-0585-0001	
7	8	01-001-0587-0001	
8	8	01-001-0582-0006	<i>Անձնագրի հետ կապված խնդիրներ</i> ՄՉՀ-ի ընթացքում ԱԵԱ-ն հասանելի չէր:
9	7	01-001-0661-0004	<i>Անձնագրի հետ կապված խնդիրներ</i> Հրաժարվել է որևէ փաստաթուղթ տրամադրելուց:
10	7	01-001-0572-0006	<i>Անձնագրի հետ կապված խնդիրներ</i> ՄՉՀ-ի ընթացքում ԱԵԱ-ն հասանելի չէր:
11	7	01-001-0572-0007	
12	8	01-001-0108-0328	<i>Արգելանքով ծանրաբեռնված գույքին առնչվող խնդիրներ.</i> ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ -ի տվյալների համաձայն՝ գույքը գրավադրված է «Էյչ-Էս-Բի-Սի» ՓԲԸ-ում:

No	Ճանապարհահատված	Կադաստրային ծածկագիրը	Խնդրի նկարագրությունը
13	8	01-001-0108-0329	<i>Արգելանքով ծանրաբեռնված գույքին առնչվող խնդիրներ.</i> ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ -ի տվյալների համաձայն՝ գույքը գրավադրված է «ԷյՋ-Էս-Բի-Սի» ՓԲԸ-ում:
14	8	01-001-0582-0015	<i>Արգելանքով ծանրաբեռնված գույքին առնչվող խնդիրներ.</i> ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ -ի տվյալների համաձայն՝ գույքը գրավադրված է «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ» ՓԲԸ-ում:
15	8	01-001-0582-0014	<i>Արգելանքով ծանրաբեռնված գույքին առնչվող խնդիրներ.</i> ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ -ի տվյալների համաձայն՝ գույքը գրավադրված է «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ» ՓԲԸ-ում:
16	8	01-001-0582-0012	<i>Արգելանքով ծանրաբեռնված գույքին առնչվող խնդիրներ.</i> ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ -ի տվյալների համաձայն՝ գույքը գրավադրված է «ՀայԷկոնոմբանկ» ԲԲԸ-ում:
17	8	01-001-0582-0011	<i>Արգելանքով ծանրաբեռնված գույքին առնչվող խնդիրներ.</i> ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ -ի տվյալների համաձայն՝ գույքը գրավադրված է «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ» ՓԲԸ-ում:
18	8	01-001-0108-0009	<i>Արգելանքով ծանրաբեռնված գույքին առնչվող խնդիրներ.</i> ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ -ի տվյալների համաձայն՝ գույքը 19.09.2013 թ.-ից արգելանքի տակ է դրվել ԴԱՀԿ ծառայության կողմից
19	7	01-001-0302-0072	<i>Արգելանքով ծանրաբեռնված գույքին առնչվող խնդիրներ.</i> ԱԳԿՊԿ -ի տվյալների համաձայն՝ գույքը գրավադրված է «Պրոկրեդիտ բանկ» ՓԲԸ-ում:
20	7	01-001-0661-0004	<i>Արգելանքով ծանրաբեռնված գույքին առնչվող խնդիրներ.</i> ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ -ի տվյալների համաձայն՝ գույքը գրավադրված է ՀՀ ՖՆ-ում:
21	7	01-001-0572-0006	<i>Արգելանքով ծանրաբեռնված գույքին առնչվող խնդիրներ.</i> ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ -ի տվյալների համաձայն՝ գույքը գրավադրված է «Հայգլոբալֆոնի բանկ» ՓԲԸ-ում:
<b>Կադաստրային ուղղումների դեպքերը</b>			
22	8	01-001-0108-0328	<i>Կադաստրային խնդիր.</i> Փաստացի չափագրման արդյունքում պարզվեց, որ գույքը Էլեկտրոնային կադաստրային քարտեզում նշված հողի սահմաններից 2,5 մ առաջ է ընկած: ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ -ի կողմից պահանջվում է հողակտորի կտորդինատների ուղղում կադաստրային քարտեզում:
23	8	01-001-0108-0329	<i>Կադաստրային խնդիր.</i> Փաստացի չափագրման արդյունքում պարզվեց, որ գույքը Էլեկտրոնային կադաստրային քարտեզում նշված հողի սահմաններից 2,5 մ առաջ է ընկած: ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ -ի կողմից պահանջվում է հողակտորի կտորդինատների ուղղում կադաստրային քարտեզում:

225) ՀՕՏՕ իրականացման ընթացքում ազդեցությանը և փոխհատուցումներին առնչվող բոլոր փոփոխությունները կենթարկվեն մոնիթորինգի և կներկայացվեն Սոցիալական երաշխիքների կիսամյակային մոնիթորինգի վերաբերյալ հաշվետվություններում), Առաջընթացի եռամսյակային հաշվետվություններում (ԱԵՀ) և Համապատասխանության հաշվետվությունում:

### 10.4.3 Ազդեցությունները շինարարության փուլում

226) Եթե շինարարության փուլում որևէ ազդեցություն ի հայտ գա Կապալառուի գործողությունների հետևանքով, մասնավորապես՝ եթե ձեռնարկատիրական գործունեությունն ազդեցության է ենթարկվում ժամանակավորապես փակված մուտքի կամ ցանկացած այլ եկամուտ առաջացնող աղբյուրի փակված մուտքերի պատճառով, կամ վնասվում են ԱԵԱ-ների բարելավումները, գույքերը (մշակաբույս, ծառ և այլն), ԱԵԱ-ների փոխհատուցումը կատարվում է Կապալառուի հաշվին հետևյալ ընթացակարգով՝

- 1) ազդեցությունը կգնահատվի և կարձանագրվի Կապալառուի կողմից և կստորագրվի ԱԵԱ-ների կողմից,
- 2) ԱԵԱ-ների փոխհատուցումը կգնահատվի ՀՕՏՇ-ում սահմանված իրավունքների և սույն ՀՕՏՇ-ում սահմանված գնահատման մեթոդաբանության համաձայն,
- 3) ԱԵԱ-ներին պատշաճորեն կտեղեկացնեն դրա մասին,
- 4) փոխհատուցման համաձայնագիր կկնքվի ԱԵԱ-ների հետ: Իրականացված բոլոր գործողությունների մասին կիրառվեն Պատվիրատուն և ՄՆՇՎԽ-ն՝ ստանալով ստորագրված արձանագրության և համաձայնագրի օրինակները:

### 10.5 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման ժամանակացույցը

227) Ստորև բերված աղյուսակում ներկայացված ժամանակացույցը ցույց է տալիս ՀՕՏՇ -ի պատրաստման, վերջնականացման և իրականացման հստակ փուլերը:

**Աղյուսակ 10-3 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի պատրաստման, վերջնականացման և իրականացման ժամանակացույց**

Մեթոդաբանական առաջադրանքը	Առաջադրանք/գործողությունը	Պատասխանատուությունը	Սկիզբը	Ավարտը
<b>ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏ ՀՕՏՇ-Ի ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ</b>				
<b>ՆԱԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ</b>			<b>17.11.2014</b>	<b>07.04.2016</b>
<b>Փուլ 1</b>	<b>Քայլ_01 Կադաստրային քարտեզի և տվյալների ձեռքբերումը</b>		<b>17.11.2014</b>	<b>14.10.2015</b>
<b>Առաջադրանք 4</b>	Մանրամասն նախնական նախագծի ներկայացում ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ՝ ազդեցության ենթակա գույքի մասին տեղեկություններ ստանալու համար (ագրեր)	ԾԻԳ	17.11.2014	17.11.2014
	ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ /ԵՔ պատասխանը	ԾԻԳ/ ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ	03.03.2015	10.10.2015
	Ազդեցության ենթակա գույքի վերջնական ցանկի պատրաստում՝ ՀՀ կառավարության կողմից նախնական ուսումնասիրության վերաբերյալ որոշման ընդունման համար	ԾԻԳ/ՄՆՇՎԽ	11.10.2015	14.10.2015
	<b>Քայլ_02 ՀՀ կառավարության որոշումը նախնական ուսումնասիրության համար</b>		<b>14.10.2015</b>	<b>21.01.2016</b>
<b>Առաջադրանք 4</b>	ՀՀ կառավարության որոշման համար նախնական ուսումնասիրության փաթեթի պատրաստում	ԾԻԳ	14.10.2015	07.12.2015
	ՀՀ կառավարության որոշման համար նախնական ուսումնասիրության հաստատում (Լշում. 45 օր՝ դիմումի և հաստատման միջև )	ՀՀ կառավարություն	14.12.2015	24.12.2015
<b>Առաջադրանք 5</b>	Հանրային լուսմներ (այդ թվում՝ նախապատրաստական աշխատանքները)	ԾԻԳ/ՄՆՇՎԽ	14.10.2015	21.01.2016
	<b>Քայլ_03 Մոցիլակյան և ՄՉՁ հետազոտություններ</b>		<b>22.01.2016</b>	<b>02.03.2016</b>

Մեթոդաբանական առաջադրանքը	Առաջադրանքը/գործողությունը	Պատասխանատվությունը	Սկիզբը	Ավարտը
<b>ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍ ԸՕՏԻ ՊԱՏՐԱՍՄԱՆ ԱՌԱՋԱՐԴԱՆՔՆԵՐԸ</b>				
<b>Առաջադրանք 6</b>	Ակտիվների մանրամասն չափագրումներ հետազոտություն	ՄՆՇՎԽ	22.01.2016	22.03.2016
	Կորուստների գույքագրում	ՄՆՇՎԽ	22.01.2016	22.03.2016
	Նախնական քարտեզների պատրաստում (հատակագծեր)	ՄՆՇՎԽ	01.02.2016	29.03.2016
	ԱԵԱ-ների փաստաթղթերի հավաքագրում	ՄՆՇՎԽ	20.04.2016	28.05.2016
	Մարդահամարի և ՄՏՀ իրականացում	ՄՆՇՎԽ	20.04.2016	28.05.2016
<b>Առաջադրանք 8</b>	Գույքի գնահատում	ՄՆՇՎԽ	08.02.2016	05.04.2016
	Տվյալների մուտքագրում տվյալների բազայում	ՄՆՇՎԽ	10.02.2016	07.04.2016
<b>ՎԵՐՋՆԱԿԱՆ ԸՕՏԻ ՊԱՏՐԱՍՄԱՆ ԱՌԱՋԱՐԴԱՆՔՆԵՐԸ</b>			<b>26.03.2016</b>	<b>09.12.2016</b>
	<b>Քայլ_01 Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշումը</b>		<b>26.03.2016</b>	<b>30.06.2016</b>
<b>Առաջադրանք 7</b>	Վերջնական մանրամասն նախագծի վերջնականացում (Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշում)	ՄՆՇՎԽ	26.03.2016	26.03.2016
	Ազդեցության ենթակա գույքի վերջնական ցանկի պատրաստում Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշման համար	ՄՆՇՎԽ	02.04.2016	22.04.2016
	ՀՀ կառավարության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշում ընդունելու ԾԻԳ-ի նախաձեռնությունը	ԾԻԳ	23.04.2016	29.05.2016
	ՀՀ կառավարության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշման ընդունումը	ՀՀ կառավարություն	30.05.2016	30.06.2016
<b>Փուլ 2</b>	<b>Քայլ_02 Վերջնական քարտեզների պատրաստում և հանձնում ԱԵԱ-ներին</b>		28.06.2016	<b>12.07.2016</b>
<b>Առաջադրանք 1</b>	Հանրային լսումներ. գնահատման մեթոդաբանության և նախագծի ներկայացում	ԾԻԳ/ՄՆՇՎԽ	31.05.2016	26.07.2016
	Քարտեզների (հատակագծեր) նկարագրության արձանագրությունների պատրաստում	ՄՆՇՎԽ	14.06.2016	14.07.2016
	Քարտեզների ներկայացում ԱԵԱ-ներին՝ ազդեցության ենթարկվող/չենթարկվող մասերի վերաբերյալ ծանուցման նպատակով	ԾԻԳ	15.07.2016	22.07.2016
	Տեղեկանքների ձեռքբերում, որոնք ենթակա են հաստատման կամ ժխտման թաղապետի կողմից	ԾԻԳ/Թաղապետ	15.06.2016	11.07.2016
	ՖՆ-ից տվյալների ձեռքբերում	ԾԻԳ/ՖՆ	26.05.2016	25.07.2016
	ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ից մասնավոր սեփականություն հանդիսացող գույքի սահմանափակումների վերաբերյալ տվյալների ձեռքբերում	ԾԻԳ/ ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ	06.07.2016	15.08.2016
	ԱԵԱ-ների իրենց գույքի ազդեցության չենթարկվող մասն օտարելու պահանջը	ԾԻԳ	30.06.2016	29.08.2016
<b>Առաջադրանք 3</b>	ԱԵԱ-ների հետ նկարագրության արձանագրությունների ստորագրում	ՄՆՇՎԽ	12.07.2016	22.07.2016
<b>Առաջադրանք 4</b>	Գույքի գնահատում/նպաստների հաշվարկ	ՄՆՇՎԽ	17.07.2016	23.07.2016
	Տվյալների մուտքագրում տվյալների բազայում	ՄՆՇՎԽ	12.07.2016	23.07.2016
<b>Քայլ_03 ԸՕՏԻ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ</b>			<b>15.07.2016</b>	<b>09.12.2016</b>
<b>Առաջադրանք 3</b>	Ստորագրված արձանագրությունների ներկայացում ԾԻԳ-ին	ՄՆՇՎԽ	15.07.2016	22.07.2016
	Ստորագրված արձանագրությունների մասին ծանուցում ԱԵԱ-ներին	ԾԻԳ	25.07.2016	04.08.2016

Մեթոդաբանական առաջադրանքը	Առաջադրանքը/գործողությունը	Պատասխանատվությունը	Սկիզբը	Ավարտը
	<b>ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍ ՀՕՏԻ ՊԱՏՐԱՍՄԱՆ ԱՌԱՋԱՂԻՄԱՆՔՆԵՐԸ</b>			
<b>Առաջադրանք 4</b>	Տվյալների ստուգում և վերլուծություն	ՄՆՇՎԽ	25.07.2016	04.08.2016
	ՀՕՏՎ վերջնական փաստաթղթի պատրաստում	ՄՆՇՎԽ	04.08.2016	21.08.2016
	Վերջնական ՀՕՏՎ -ի ներկայացում ԾԻԳ-ին՝ մեկնաբանությունների համար	ՄՆՇՎԽ	22.08.2016	22.08.2016
	Վերջնական ՀՕՏՎ -ի ներկայացում ԱԶԲ-ին՝ մեկնաբանությունների համար	ԾԻԳ	23.08.2016	25.08.2016
	ՀՕՏՎ վերջնականացում՝ ըստ ԱԶԲ-ի մեկնաբանությունների	ՄՆՇՎԽ	26.09.2016	30.09.2016
	Վերջնականացված ՀՕՏՎ-ի ներկայացում ԱԶԲ-ի հաստատմանը	ԾԻԳ	01.10.2016	01.10.2016
	ԱԶԲ-ի կողմից ՀՕՏՎ-ի հաստատումը	ԱԶԲ	31.10.2016	31.10.2016
<b>Առաջադրանք 4</b>	ՀՕՏՎ-ի հայերեն տարբերակը	ՄՆՇՎԽ	01.10.2016	01.11.2016
	ՀՀ կառավարության կողմից ՀՕՏՎ -ի հաստատումը	ՀՀ կառավարություն	02.11.2016	17.12.2016
	ՀՀ կառավարության կողմից ՀՕՏ թյուզեի հաստատումը	ՀՀ կառավարություն	17.12.2016	17.12.2016
<b>Առաջադրանք 3</b>	Բոլոր ակտիվների համար Գնահատման հաշվետվությունների պատրաստում	ՄՆՇՎԽ	18.12.2016	28.12.2016
	Հաստատված ՀՕՏՎ փաստաթղթի տեղադրումը ԱԶԲ-ի և ԵՔ-ի կայքէջերում	ԱԶԲ և ԾԻԳ	01.11.2016	18.12.2016
	ՀՕՏՎ տեղեկատվական բրոշյուրի հրատարակում	ԾԻԳ	17.12.2016	24.12.2016
<b>ՀՕՏՎ -Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ*</b>			17.12.2016	02.06.2017
	ՀՕՏ թյուզեի հատկացումը ԵՔ-ին	ՖՆ	17.12.2016	
	Հնարավոր հարկադիր օտարման դեպքերի բացահայտում	ԾԻԳ	18.12.2016	18.03.2017
	Պայմանագրերի նախագծերի ուղարկում ԱԵԱ-ներին	ԾԻԳ	08.01.2017	18.01.2017
	Պայմանագրերի ստորագրում	ԾԻԳ	09.01.2017	18.04.2017
	Փոխհատուցումների հատկացում	ԾԻԳ	10.01.2017	30.04.2017
	Հարկադիր օտարման վերջնականացում, հարկադիր օտարման վերաբերյալ դատարանի որոշման ներկայացում	ԾԻԳ	18.04.2017	17.07.2017
	ՀՕՏՎ-ի Համապատասխանության հաշվետվության պատրաստում	ԱՍԳ	18.12.2016	27.04.2017
	ՀՕՏՎ-ի Համապատասխանության հաշվետվության պատրաստում	ԾԻԳ	28.04.2017	03.05.2017
	ՀՕՏՎ -ի Համապատասխանության հաշվետվության դիտարկումը ԱԶԲ -ի կողմից	ԱԶԲ	10.05.2017	25.05.2017
	ՀՕՏՎ -ի Համապատասխանության վերջնական հաշվետվության ներկայացում ԱԶԲ-ին	ԾԻԳ	30.05.2017	04.06.2017
	ԱԶԲ -ի կողմից ՀՕՏՎ-ի Համապատասխանության հաշվետվության հաստատումը	ԱԶԲ	04.06.2017	10.06.2017
	Շինհրապարակի հանձնումը կապալառուին	ԾԻԳ	11.06.2017	11.06.2017
	Շինարարական աշխատանքների մեկնարկը	Կապալառու	12.06.2017	12.06.2017
	Մոնիթորինգ	ԾԻԳ/ԱՍԳ	շարունակական	

Մեթոդաբանական առաջադրանքը	Առաջադրանքը/գործողությունը	Պատասխանատվությունը	Սկիզբը	Ավարտը
<b>ԻՐԱԿԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍ ՀՕՏ-Ի ՊԱՏՐԱՍՄԱՆ ԱՌԱՋԱՐԴԱՆՔՆԵՐԸ</b>				
	Բողոքների լուծում	ԾԻԳ	շարունակական	
<p>*Ներկայացված ժամանակացույցի համապատասխան ՀՕՏ-ի իրականացման ապահովումը սերտորեն կապված է օրինականացման գործընթացի հաջողության, ինչպես նաև առաջ քաշված օտարման դեպքերի լուծման և քանակի հետ. այսպիսով՝ ներկայացված ժամանակացույցը կարող է փոխվել ՀՕՏ իրականացման առաջընթացի հիման վրա:</p>				



# 11 ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

## 11.1 Ընդհանուր տեղեկություններ

- 228) ՀՕՏՕ-ի իրականացումը կենթարկվի թե՛ ներքին, թե՛ արտաքին մոնիթորինգի: Ներքին մոնիթորինգը կիրականացվի ԾԻԳ-ի կողմից: Արտաքին մոնիթորինգը հանձնարարված է ԱՄ Փարթնրոգ Քոնսալթինգ Քամփնի և ենթախորհրդատու Դելիկտ ՄՊԸ արտաքին մոնիթորինգային գործակալությանը (ԱՄԳ), որը 11.08.2016-ին վարձվել է ԵՔ-ի կողմից և հաստատվել ԱԶԲ-ի կողմից:

## 11.2 Ներքին մոնիթորինգ

- 229) Ներքին մոնիթորինգը պարբերաբար կիրականացվի ԾԻԳ-ի կողմից և՛ ուղղակիորեն, և՛ ՀՕՏՕ իրականացման համար վարձված լրացուցիչ մասնագետների աջակցությամբ: Արդյունքները կհաղորդվեն ԱԶԲ-ին ծրագրի իրականացման վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունների, ինչպես նաև տարաբնակեցման մոնիթորինգի կիսամյակային հաշվետվության կամ հաշվետվությունների միջոցով: Ներքին մոնիթորինգի ցուցանիշները կլինեն գործընթացներին, անմիջական հետևանքներին և արդյունքներին վերաբերող ցուցիչները, որոնք թույլ կտան գնահատել առաջընթացը և ՀՕՏՕ-ի իրականացման արդյունքները, ինչպես նաև փոփոխել աշխատանքային ծրագիրը, եթե անհրաժեշտ է: Մոնիթորինգի հատուկ հենանիշները կներառեն՝

ա. տեղեկատվական քարոզարշավը և ԱԵԱ-ների համար կազմակերպվող հանրային լսումները,

բ. հողակտորի օտարման գործընթացը և հողակտորի դիմաց փոխհատուցման վճարումը,

գ. ազդեցության ենթակա շինությունների և այլ գույքի փոխհատուցումը,

դ. ԱԵԱ-ների վերաբնակեցումը,

ե. եկամտի կորստի հետ կապված վճարումները,

զ. փոխարինման ենթակա հողատարածքների ընտրությունը և բաշխումը,

է. եկամտի վերականգնմանն ուղղված գործողությունները:

- 230) Վերոնշյալ տվյալները կհավաքագրվեն ԾԻԳ-ի կողմից, որը պատասխանատու կլինի Ծրագրի տարաբնակեցման ամենօրյա գործողությունների մոնիթորինգի համար հետևյալ գործիքների միջոցով՝

ա. բոլոր ԱԵԱ-ների մարդահամարի տվյալների դիտարկում,

բ. խորհրդակցություններ և ոչ պաշտոնական հարցազրույցներ ԱԵԱ-ների հետ,

գ. դեպքերի մանրագնին ուսումնասիրություններ:

դ. ԱԵԱ-ների ընտրանքային հարցում:

ե. հիմնական իրազեկիչների հետ հարցազրույցներ, և

զ. համայնքային խորհրդատվական հանդիպումներ:

### 11.3 Արտաքին մոնիթորինգ

- 231) Արտաքին մոնիթորինգը կիրականացնի խորհրդատվական ընկերությունը, որը ԵԲ-ի կողմից ընտրված և ԱԶԲ-ի կողմից հաստատված արտաքին մոնիթորինգային գործակալություն (ԱՄԳ) է:
- 232) Արտաքին մոնիթորինգը ենթադրում է երկու տեսակի գործողություն՝ ա) ՀՕՏԾ-ի իրականացման և փոխհատուցման տրամադրման կարճաժամկետ մոնիթորինգ ու գնահատում և բ) ՀՕՏԾ ծրագրի վերականգնողական ազդեցությունների երկարաժամկետ գնահատում:

#### 11.3.1 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման կարճաժամկետ մոնիթորինգ և գնահատում

- 233) Կարճաժամկետ մոնիթորինգը կամ ՀՕՏԾ-ների իրականացման համապատասխանության ուսումնասիրությունը կիրականացվի յուրաքանչյուր ՀՕՏԾ իրականացմանը զուգահեռ և կհանգեցնի լայնածավալ դաշտային այցելությունների և ԱԵԱ-երի հետ հաղորդակցման: Այս առաջադրանքի արդյունքում կպատրաստվի Համապատասխանության հաշվետվություն յուրաքանչյուր ՀՕՏԾ-ի համար, որտեղ նշված կլինի՝ արդյոք փոխհատուցումների տրամադրման ծրագիրն իրականացվել է ՀՕՏԾ դրույթների և ԱԶԲ քաղաքականության համաձայն, թե ոչ և արդյոք ԱԵԱ-ները գոհ են: Համապատասխանության հաշվետվությունը կներկայացվի ԾԻԳ՝ իրականացնող մարմին (ԵԲ), և ԱԶԲ: Համապատասխանության հաշվետվության հաստատումը ԱԶԲ-ի կողմից կհանդիսանա պայման շինարարական աշխատանքների մեկնարկի համար: ԱՄԳ-ի կարճաժամկետ մոնիթորինգի առաջադրանքը ներառում է հետևյալ հատուկ մեթոդներն ու գործողությունները՝

ա. Փաստաթղթերի վերլուծություն և երկրորդական տվյալների վերլուծություն: ՀՕՏԾ իրականացման առաջին փուլում պետք է ստուգվեն ազդեցության ենթարկված բոլոր հողատարածքների/շինությունների/ձեռնարկատիրական գործունեությունների փաթեթների ամբողջականությունը:

բ. ՀՕՏ-ի հետ կապված գործողությունների (հանրային լուսններ, հանդիպումներ, իրականացում և այլն), ինչպես նաև ազդեցության ենթարկված անձանց կենսապահովման միջոցների դիտարկումները: Օտարման գոտին պետք է սահմանվի ըստ անհրաժեշտության: Մասնավորապես՝ հայցերի/բողոքների ստուգումը պետք է իրականացվի ոչ միայն փաստաթղթային վերլուծության, այլ նաև դաշտային ստուգումների միջոցով՝ գնահատելու համար, թե արդյոք այն աշխատում է ծրագրով հաստատված ԲԼՄ-ի համաձայն:

գ. ԱԵՏՏ-ների ուսումնասիրությունը կվերաբերի հողի օտարման և տարաբնակեցման ամբողջ գործընթացին (դրա տևողությունը, համապատասխանությունը ԱԶԲ ԱՔՀ-2009-ի, ՀՀ կանոնակարգերի, ՀՕՏԾ-ի և ՀՕՏԾ-ի պահանջներին, փոխհատուցումների վճարումները, բողոքները, ազդեցության ենթարկված խոցելի խմբերի կարգավիճակը և այլն) և նպատակների իրականացման ծավալին:

դ. Մասնակցային արագ հարցում: ԱՄԳ-ն կկիրառի «մասնակցային արագ հարցման» (ՄԱՀ) գործիքը՝ բավարար որակական տեղեկատվությամբ՝ հիմնականում ՀՕՏԾ-ների իրականացման հատուկ ոլորտների վերաբերյալ ԱԵԱ-ների իմացության վերաբերյալ տեղեկատվությամբ, փաստաթղթային շարունակական վերլուծության և տնային տնտեսությունների ուսումնասիրության միջոցով հավաքագրված տվյալներն ամբողջականացնելու նպատակով:

### 11.3.2 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի վերականգնողական միջոցառումների արդյունքների երկարաժամկետ գնահատում

ա. Երկարաժամկետ գնահատումը կիրականացվի ՀՕՏ-ի իրականացումից առաջ և հետո՝ պարզելու համար, թե արդյոք ՀՕՏ-ների վերականգնման նպատակներն իրականացվել են, ինչպես նաև ԱԵՏՏ-ների վրա ՀՕՏ-ների իրականացման ազդեցությունը գնահատելու նպատակով: ԱՄԳ-ի երկարաժամկետ մոնիթորինգային առաջադրանքը ներառում է հետևյալ հատուկ գործողությունները՝ ելակետային ուսումնասիրությունը կիրականացվի ՀՕՏ-ում ներկայացված ելակետային տեղեկատվության և/կամ ՀՕՏ-ի պատրաստման տվյալների բազայի հիման վրա: Ելակետային ուսումնասիրությունը պետք է իրականացվի ԱՄԳ-ի կողմից մինչև փոխհատուցումների վճարումը: Ուսումնասիրությունը կընդգրկի ԱԵՏՏ-ների մեկ ներկայացուցչական նմուշ մարդահամարի ցանկի հիման վրա՝ դասակարգված ըստ ազդեցության տեսակի և չափի: Մինևույն ժամանակ, միայն քանակական վերլուծությունը բավարար չի լինի ԱԵՏՏ-ների կենսամակարդակի ելակետային կարգավիճակը հասկանալու համար: Այս նպատակով ԱՄԳ-ն նաև կձեռնարկի որակական հարցազրույցներ ծրագրի շահառուների և գլխավոր տեղեկատուների հետ:

բ. ՀՕՏ-ին հաջորդող գնահատում. ՀՕՏ-ների իրականացման ավարտից հետո մեկ տարվա ընթացքում պետք է իրականացվի ՀՕՏ-ին հաջորդող գնահատում՝ ստուգելու համար՝ արդյոք ՀՕՏ-ի նպատակներն իրագործվել են, թե ոչ: ՀՕՏ-ին հաջորդող գնահատումը կանդրադառնա հետևյալ գլխավոր թեմաներին՝ 1) ԱԵՏՏ-ների վրա ՀՕՏ իրականացման ազդեցության գնահատում, 2) ԱԵՏՏ-ների բավարարվածության գնահատում՝ գույքերի և իրավունքների, վճարումների ժամկետների, հասանելի ֆինանսական միջոցների և վճարումների գնահատմամբ և այլն, 3) ՀՕՏ իրականացման արդյունավետության գնահատում և 4) քաղված դասերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ